

դրամատուրգիա

62 ²⁰²⁰ 63



*Շուշիի հայկական թատրոնի շենքը 1902 թվականին:
Այն կառուցվել էր Մկրտիչ Խանդամիրյանի կողմից 1891-ին՝
Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ:*

*Շուշիում առաջին թատերական ներկայացումը
կայացել է 1848 թվականին՝
եվրոպական համալսարաններում սովորող
շուշեցի հայ ուսանողների ուժերով:*

դրամատուրգիա

գրական - գեղարվեստական հանդես

62²⁰²⁰63

ՊԻԵՄՆԵՐ

Գավիթ ԽԱԶԻՅԱՆ	2	ԿԳՁԻՆ
Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	6	ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ
Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ	34	ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ
Անահիտ ԱՐՓԵՆ	60	ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԴԺՈՒՄՔ
Արմենուհի ՍԻՍԻՅԱՆ	88	ԾԻԾԱՂԵՔ
Մհեր ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ	98	ԿՈՆՇԵՆՑԻԱ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Դավիթ ԽԱԶԻՅԱՆ

Կյանք, կռիվ, սեր, օվկիանոսի խորքում թաքնված կղզի,
հայր և որդի, լույս և մահ... Այս բառերն իրար կողքի
դնելով, թերևս, կարելի է ամեն ինչ ասել:
Անուններ չկան: Կան բառեր և կա երաժշտություն: Գուցե
բառեր էլ պետք չեն, քանի դեռ չեն ստեղծվել որդեկորույս
հոր տառապանքը նկարագրող բառերը: Երևի լավ է, որ
չկան այդ բառերը: Եթե ամեն ինչ հնարավոր լիներ
բառերով ասել, աշխարհը մի մեծ քան կկորցներ:

ԿՂԶԻՆ

Անհնարին դրամա մեկ արարով

Գործող անձինք

ՋԻՆՎՈՐ

ԲՈՒԺՔՈՒՅՐ

ՎԻՐԱԲՈՒՅԺ

ՋԻՆՎՈՐԻ ՀԱՅՐԸ

Հիվանդանոցի վիրահատարանը: Սեղանին պառկած է կոմայի մեջ գտնվող վիրավոր զինվորը: Նրա վրա կռացած են վիրաբույժն ու երիտասարդ բուժքույրը: Աջ կողմում սպիտակ միջնորմ է, որից այն կողմ, ալեհեր գլուխը ձեռքերի մեջ առած, նստած է զինվորի սգավոր հայրը: Հերոսները չեն խոսում: Նրանց ձայները լսվում են բարձրախոսով: Լսվում է զինվորի արտի խլացած ու դանդաղ բաբախյունը՝ խառնված գրեթե անլսելի միապաղաղ դասական երաժշտությանը, որն ավելի շուտ սիմֆոնիկ նվագախմբի նախակոնցերտային ադմուկն է հիշեցնում:

ՋԻՆՎՈՐ - Մի՛ կտրեք... Ես սիրում եմ իմ ոտքերը: Երբ փոքրիկ տղա էի, սիրում էի բռնոցի խաղալ: Մի անգամ մի աղջիկ ասաց, որ ես շատ ուժեղ ոտքեր ունեմ... Հետո կրակում էին, ու ոռմբեր էին պայթում, երբ վազելով փախա: Ես սիրում եմ իմ ոտքերը: Մի՛ կտրեք...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Իմ մատներով ես շոյում եմ քո մազերը, որ ցավից քրտնել են: Ձեռքերովս զգում եմ քո ցավը, որ մազերիցդ անցնում է իմ մատներին: Թող պակասի

քո ցավը... Ի՞նչ է քո անունը, զինվոր... Ես քեզ սիրում եմ...

ՋԻՆՎՈՐ - ...Երբ փոքրիկ տղա էի, բոլորի պես երագում էի օդաչու դառնալ: Կապույտ երկնքի ու ճերմակ ամպերի միջով սավառնել դեպի օվկիանոսի մեջ թաքնված կղզին, կովել վիշապի դեմ ու փրկել թագավորի աղջկան... Բայց հիմա ինչ երկար խողովակ է, որի միջով սլանում եմ դեպի լույսը: Այս ինչ անսահման ու անստվեր լույս է ծագում

խողովակի վերջում: Ի՞նչ թեթև եմ
ես, Աստված իմ, և իմ ոտքերը...

ՎԻՐԱԲՈՒՅԺ - Միայն թե սիրտդ շա-
րունակի բաբախել... Միայն թե
շարունակի... Ես գիտեմ, որ մեծ
ու ուժեղ է քո սիրտը, զինվոր: Ու
նա սիրում է կյանքը, ուրեմն կշա-
րունակի բաբախել... Եվ ինչո՞ւ է
քո արյունը կապույտ, կամ գուցե
ես եմ հոգնել ու արդեն չեմ գա-
նազանում կարմիրը կապույտից:
Մի՞թե երկինքը հիմա արնագույն
է: Ա՛խ, ինչո՞ւ են խառնվել աշ-
խարհի գույները... Միայն թե
սիրտդ շարունակի բաբախել...
Քո սրտում սեր կա, ես տեսնում
եմ, և այդ սերը չի թողնի, որ եր-
կինքը կարմիր դառնա...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - ...Կուզեի շոյել քո մա-
զերը, ու ինձ պատմեիր քո
մանկության հեքիաթը հեռու օվ-
կիանոսում թաքնված կղզու մա-
սին, ուր ցորենի ոսկե հատիկներ
են աճում: Կուզեի փարվել քո ու-
ժեղ ոտքերին ու սիրել քեզ...

ԶԻՆՎՈՐԻ ՀԱՅՐԸ - Երբեք չեմ ասել,
որ սիրում եմ քեզ: Մեր միջև
դարձյալ դուռ է ու լուրջուն: Ա-
մեն ինչում լուրջունն է: Մի՞թե
տիեզերքի բոլոր ձայները խլացել
են հիմա, և միայն քո սրտի բա-
բախյունը պիտի արձագանքի

այս երկար միջանցքում, ուր ա-
մեն ինչ սպիտակ է՝ պատերը,
վազվզող մարդկանց հագուստը,
իմ մազերը: Եվ նույնիսկ լռութ-
յունն ու քո սրտի զարկերը սպի-
տակ են: Անցյալը, ներկան ու
ապագան ևս անորոշ սպիտակով
են շպարված: Եվ իմ մտքերն էլ
սպասումից սպիտակել են, և քո
մոր աչքերը...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - ...Իսկ հիմա քո ցավը
մազերիցդ անցնում է իմ մատնե-
րին, ձեռքերովս հոսում կոկորդս
ու թափվում ցած՝ դեպի սրունք-
ներս: Ես գոնե մի քիչ կմեղմեմ քո
ցավը, բայց ո՞վ կփարատի իմը:
Ի՞նչը կսփոփի իմ սրունքների
կարոտը քո ձեռքերի հանդեպ...

ՎԻՐԱԲՈՒՅԺ - ...Միայն թե սիրտդ
շարունակի բաբախել... Միայն թե
շարունակի... Թե չէ երկնքի մի
կտորն ինձ համար առհավետ քո
արյան գույնի կմնա, որով իմ ձեռ-
քերն են թրջվում... Միայն թե
սիրտդ շարունակի բաբախել...
Լսո՞ւմ ես, զինվոր, շարունակի՞ր կո-
վել: Դեռ խաղաղության ժամը չէ...

ԶԻՆՎՈՐ - ...Այս ինչ լույս է: Անստ-
վեր ու անսահման: Երբ փոքրիկ
տղա էի, մի անգամ տեսել եմ այս
լույսը՝ անսկիզբ ու անվերջ լույ-
սը: Ու հիմա սա իմն է: Ի՞նչ երջա-

նիկ եմ... Անհոգ ու ազատ... Հիմա կվազեմ այս ծաղկազարդ դաշտով դեպի լույսը: Ի՞նչ լավ է այստեղ, Աստված իմ: Եվ ինչո՞ւ շուտ չէի գալիս այստեղ...

ԶԻՆՎՈՐԻ ՀԱՅՐԸ - Այս դռնից այն կողմ դու ես: Ինձ այդքան մոտ ու այնքան հեռու: Ինչո՞ւ երբեք չասացի, որ սիրում եմ քեզ, ինչո՞ւ... Ինչպե՞ս մեղմեմ քո ոտքերի ցավը: Քո ցավից իմ ոտքերն են ծավվում: Այս երկար սպիտակ միջանցքում ամեն ինչ սպիտակ է, անգամ՝ հայացքներն ու լռությունը...

ՎԻՐԱԲՈՒՅԺ - Միայն թե սիրտդ շարունակի բաբախել...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ես քեզ սիրում եմ: Քո քրտնած մազերն ու փակ կոպերը: Ինչքան կուզեի, որ դու ինձ տանեիր այն հեռավոր կղզին, ուր քո ցանած ցորենն է հասնում: Ու ես իմ մատներով կշոյեի ցորենի արտի պես քամուց ծփացող մազերդ, որոնցից հիմա ցավով լի քրտինքի կաթիլներն են հոսում իմ մատներին: Ու այդ կա-

թիլների հետ քո ցավն է մտնում իմ մեջ: Բայց չէ՞ որ քո կղզին հիմա սպասումից ջուր է կտրել... Ես այնքան եմ սպասել ինձ ու քեզ սպասող կղզուն, ուր կշոյեի քո մազերը...

ՎԻՐԱԲՈՒՅԺ - Միայն թե սիրտդ շարունակի բաբախել... Միայն թե շարունակի...

ԶԻՆՎՈՐԻ ՀԱՅՐԸ - Ինչո՞ւ երբեք չասացի, որ սիրում եմ քեզ...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ես քեզ սիրում եմ...

ՎԻՐԱԲՈՒՅԺ - ...Միայն թե բաբախի...

ԶԻՆՎՈՐ - Այս ծաղիկները, ամուսնների քչքչոցը, տերևների սոսափությունը... Այս ինչ կղզի է լույսի մեջ կորած: Այս ինչ լուսավոր լռություն է: Երբ փոքրիկ տղա էի, մի անգամ լսել եմ: Ինչպես սիմֆոնիկ նվագախմբի նախակոնցերտային աղմուկը... Ես այնքան եմ կարոտել այս լույսը, որ ծագում է ուղիղ աչքերիս մեջ: Երևի այդ կարոտից էին միշտ շողում իմ աչքերը... Երևի Լույսը... Երևի...

Քե՞նի լույսն աստիճանաբար մարում է, իսկ զուգահեռ՝ կուլիսներում մի այլ լույս է վառվում, ուղղված վիրահատասեղանին պառկած գինվորին: Մյուսները հայտնվում են ստվերում: Չինվորի սրտի բաբախումն աստիճանաբար դանդաղում-մարում է: Երաժշտությունը փոխվում է հոգեպարար մեղեդու:

16. 07. 2020

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թատրոնի համար գրելիս միշտ երկյուղ ունեմ, որովհետև բառից բացի քո և Երկնավորի միջև հայտնվում է ևս մեկ միջնորդ՝ բեմը: Իսկ վատ դերասանը կամ բեմադրիչը, ինչպես ճիշտ չընտրված բառը, կարող են խեղել ասելքը: Չհաշված, որ այդ ասելիքին գումարվում է նաև ռեժիսորի ասելիքը... Մի խոսքով, ռիսկային է, առավելևս, երբ կա մյուս ծայրահեղությունը. ռեժիսորը կամ դերասանը կարող են քեզնից տաղանդավոր լինել,

և այդ դեպքում ձեռքիցդ գնում են բոլոր դափնիները: Իհարկե, եթե մտածենք որպես հանդիսատես, թատրոնը սիրելի է. այն, ինչը պիտի տեսնես ժամերով էջեր թերթելիս, մատուցվում է կես ժամում, երևակայությունդ չես աշխատեցնում, ինչպես ընթերցելիս, արդեն ընտրված են՝ հերոսի արտաքինը, ժեստերն ու միմիկան, հագուստը, երաժշտությունը... մտքի և երևակայության լիակատար հանգիստ, ծուլության երանելի ժամեր: Ի սկզբանե «Երկիր Նաիրին» հղացվել էր որպես վեպ, բայց այդ պահին իմ զբաղվածությունն այնպիսին էր, որ գրելու ժամանակ չկար, և կենցաղային վազվզոցի մեջ անընդհատ մեկ տող, մի քանի երկխոսություն գրի էի առնում, որ հանկարծ չմոռանամ, մինչև ժամանակ ունենամ ու նստեմ գրելու: Ու մի օր էլ, երբ դարձյալ արագ-արագ գրի էի առնում հերթական միտքը, որ այդ պատկերը գլխիցս չթռնի, հանկարծ նկատեցի, որ դրամայի ձև է ստացել, դրամա եմ գրել: Կարդացի՝ ասում է այն, ինչը պիտի վեպով ասվեր: Չգիտեմ, ինչ-որ քան կորսվել է վեպից դրամա փոխակերպման ճանապարհին, բայց կարևորը ասելիքը տեղ հասցնելն է: Եվ քանի որ ինչպես միշտ, դեռ ժամանակ չկար գրելու, նույնիսկ ուրախացա, ինչպես ասում են՝ էս մեկի հարցերը լուծեցինք:

ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ

Գրամա երեք գործողությամբ

Գործող անձինք

ՄՀԵՐ - բանաստեղծ

ՆԱԽԱԳԱՀ

ԲԺԻՇԿ

ԽԱՉԻԿ, ՎԱՉԻԿ - նախագահի խորհրդակցանքեր

ԿՄԱԽՔ

ՀԱՄՈ, ՀԱՅԿ - գերեզմանատան պահակներ

ՀԱՄԲՈ - գերեզմանատան պահակների ընկերը

ԺՈՂՈՎՈՒՐԳ՝ լրագրողներ, նվագախումբ, թիկնազոր,

դպրոցականներ և այլն

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ

ԳԱՏԱԽԱԶ

ՏԻՐ - Աստծո գրագիր

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍ

ԳԱՌՆԻԿ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ - պատմաբան

ՕՆԻԿ - նախագահի քարտուղար

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՅՈՐԳ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ

Նախարարներ, զինվորներ, օդում շառաչող օձեր

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ 1

Գիշեր: Լուսին: Գերեզմանոց: Լավում է շան լուսնահաչը:

Գերեզմանատան պահակներից մեկը խունկ ծխելու համար նախա-

տեսված մետաղյա թասը դնում է շիրմաքարին, բարակ ցախերը

կոտրատում, դասավորում է մեջը: Թուղթը ճմրթում,

խոթում է ցախերի տակ ու կրակ տալիս:

Տպավորություն է, որ խունկ են ուզում ծխել:

ՀԱՄՈ - Այ մարդ, էս շների վրա էլ ուրիշ տեսակ եմ գարմանում. էսքան մարդու գոռուն-գոչյունը, աղոթք-աղաչանքը երկինքը բանի տեղ դնում աս, որ քո ոռնոցը դնի, ինչ ես դունչդ վեր ձգել, գլուխներս գնաց:

ՀԱՄԲՈ - Էս ինչ խաղաղ գիշեր աս, թե՛ գերեզմանատանն ենք, դրանից աս... իզուր չեն ասում՝ հավերժական հանգիստ: *(Գետնից չորացած խոտեր է ճանկում, գցում կրակի վրա:)*

ՀԱՅԿ - *(կրա ձեռքը բռնելով):* Հերիք աս:

Հայկը տալրակից հանում է թավան, դնում կրակին, ձուռն խփում է թավայի կողին, ճաքից բացում, դատարկում թավայի մեջ, կճեպը ուսի վրայով նետում, ձուռն խփում է թավայի կողին, բացում, կճեպը ուսի վրայով նետում, էլի է ձուռն վերցնում... Լսվում է թավայի տժտժոցը: Ծոցից թերթ է հանում, թափ տալով բացում, փռում շիրմաքարին, հոտոտում է օդը:

ՀԱՄՈ - Չնայած առանց յուղի, բայց լավ ձվածեղ աս ստացվում, արաղ էլ որ ըլներ...

ՀԱՅԿ - Որ ըլներ... *(Ծոցից հանում է հացը, մի պատասռ պոկում, մնացածը դնում է թերթի վրա, պոկած պատասռը թաթախում է դեռևս եփվող ձվածեղի մեջ ու վրան չոչոսացնելով՝ ուտում:)*

Այդ պահին շիրմաքարի ետևից ձեռք է պարզվում:

ՁԱՅՆ - *(սահմոկեցնող տոնով):* Ախ-

պերներ... մի պատասռ էլ ինձ տվեք:

ՀԱՅԿ - *(զայրացած խփում է ձեռքին):* Դե գնա, ես քու տիրումերը... Իբր սաղերը կշտացան, մնացին մեռածները:

ՀԱՄՈ - Արա, էս ինչ բախտ աս, դժոխք ու դրախտի բարիքները թողած՝ մինչև անգամ մեռելների աչքն էլ իմ մի պատասռ հացին աս:

Քարի ետևից դուրս է թռչում Գառնիկը:

ԳԱՌՆԻԿ - Բայց ինչ ագահն եք:

ՀԱՄԲՈ - *(գետնից խոտ ու քար ճանկոռելով և նրա վրա շարունակելով):* Դե ոռոգ էլի, սատանի ճուտ, դու էիր պակաս... Դու ո՞վ ես, որ մեր ագահ ըլները որոշես:

ԳԱՌՆԻԿ - Մա՛րդ:

ՀԱՅԿ - *(խոտերին ինքնագոհ փռվելով ու հորանջելով հենվում է արմունկին):* Չէ, ախպեր, մարդը մենակ մենք ենք: Արի նստի, հլա ասա՝ ինչ կա էս աշխարհում:

Համոն քաքուն շորի վրայից հանում է քորոցն ու խրում Գառնիկի թևը:

ԳԱՌՆԻԿ - *(գոռայով վեր է թռչում):* Վայ, մամա ջան...

ՀԱՄՈ - *(զարմացած նայում է գնդասեղի ծայրին):* Չէ, սատանա չի, որ սատանա ըլներ՝ կչքվեր: Արյունն էլ կարմիր աս, որ սատանի ըլներ՝ սև կլներ:

ԳԱՌՆԻԿ - *(գնդասեղի ծակած տեղը սեղմելով):* Տղերք ջան, ազնիվ խոսք, մարդ եմ:

ՀԱՅԿ - Բայց մեռած...

ԳԱՌՆԻԿ - Չէ, ցավդ տանեմ, հլա նայի, շորերս ինչքան նոր են, որ մեռած լինեի, սրանք հիմա պիտի փտած լինեիին: *(Օձիբը քաշքշելով ու խաչը հանելով:)* Ըհը, այ ախպեր, էս էլ վզիս խաչը: Ուզում ես՝ մի հատ էլ խաչակնքեմ: Ձեր նման մարդ եմ...

ՀԱՄՈ - Ախպեր ջան, էստեղ մենակ մենք ենք մարդը, մնացածը մեռելներ են:

ԳԱՌՆԻԿ - Ինչի՞ որ...

ՀԱՅԿ - Որտե՞վ մենք էստեղի պահակներն ենք: Հսկում ենք, հասկանում ես...

ԳԱՌՆԻԿ - Հսկում եք, որ չփախչեն... էս հազար տարվա մեռելները:

ՀԱՅԿ - Ի՞նչ ասեմ, ախպերս, մեռելները պահպանվում են պետության կողմից: Մեռելների բախտը միշտ էլ բերում ա՛՛ էն աշխարհում հրեշտակն ու սատանեն են տեր կանգնում, էս աշխարհում՝ պետությունը... Մենք ենք, որ անտեր ենք:

ՀԱՄՈ - Էդ նրանից ա, որ հողը դրախտի ու դժոխքի արանքում ինչ-որ գոնայա մեզ համար. դրախտն ափսոս ա, դժոխքի համար էլ մենք են ափսոս, դրա համար էլ մեզ ոչ հրեշտակն ա մոտ գալի, ոչ սատանեն... Ճիշտ չեմ ասում:

ԳԱՌՆԻԿ - Ճիշտ ես ասում, ափսոս, Աստված քեզ նման չի մտածում:

ՀԱՄՈ - Ոչինչ, ցավդ տանեմ, բա էլ ինչ հավատացյալ ենք, որ էդ մի

թերությունը մեր Աստծուն չներենք:

ԳԱՌՆԻԿ - *(հեզնանքով):* Ծանր մի տար, առանձնապես թերություն էլ չէ, ըստ էության, մեռելը խորապես հիասթափված մարդն ա:

ՀԱՄՈ - Միթո՞ւմ էդ ինչ ապիր որ... *(Կասկածանքով նայում է ընկերներին:)*

ԳԱՌՆԻԿ - Ասեցի՛ մարդը շնչավոր հող ա, մեռելը՝ անշունչ: Տարբերությունը մեծ չէ՝ գրամներ:

ՀԱՅԿ - *(քաջատրություն պահանջող հայացքով, աչքերը Գառնիկի վրա չռած):* Հա՛...

ԳԱՌՆԻԿ - Այ մարդ, ձեր գյուղում տերտեր չի՞ էղել... Ասում եմ՝ Աստված մարդուն ստեղծեց կավից և իրա շունչը փչեց մեջը:

ՀԱՄՈ - Ախպեր, իսկականի՞ց նրա փչածը մի քանի գրամ ա...

ԳԱՌՆԻԿ - Չգիտեմ, գիտությունն էդ կարծիքին ա:

ՀԱՄՈ - Չէ, ցավդ տանեմ... քո մեջ փչածը կարող ա, համա իմը գոնե կիլո պիտի ըլնի: Հլա ասա տենամ՝ ո՞վ ես, ինչ ես:

ԳԱՌՆԻԿ - Ձեր օգնության կարիքն ունեցող մեկը:

ՀԱՄՐՈ - Մենակ չասես՝ ինձ շալակած տարեք էն աշխարհ...

ԳԱՌՆԻԿ - Չէ, ախպեր, մի չնչին, սովորական բան ա ուզածս՝ գերեզման պիտի փորեք:

ՀԱՄՐՈ - Փողով:

ԳԱՌՆԻԿ - Բա առանց դրա՞:

ՀԱՅԿ - Թաղումը էրբ ա:

ԳԱՌՆԻԿ - Թաղումը... երեք-չորս հարյուր տարի առաջ:

ՀԱՄՈ - *(ընկերներին նայելով)*: Անձամբ իմ համար սատանեքի հետ ավելի հետաքրքիր ա, քան գժերի:

ՀԱՅԿ - Բա էլ ինչը պիտի փորենք:

ԳԱՌՆԻԿ - Գերեզման, պարզ չասեցի՞:

ՀԱՄՐՈ - Բացենք պիտի: Սրբապաճություն ա... էդ դատարանի որոշումով-բանով են անում:

ԳԱՌՆԻԿ - Ո՛ւմ ենք հաշիվ տալու, աշխարհը քնած ա:

ՀԱՄՈ - Բայց կարթնանա, չէ՞:

ԳԱՌՆԻԿ - Է, թող արթնանա:

ՀԱՄՈ - Բա կհարցնի, չէ՞, ո՛ր ա իմ մեռելը, պահակ:

ԳԱՌՆԻԿ - Դու էլ ասա՝ պահակն էլ մարդ ա, հոգնել գիտի, քնել գիտի... Պահակը կսպասեր, որ լեւուրդ էս աշխարհում քո մեռելի ոսկորներին աչք դնող կլնի: Էն էլ հարց ա՝ ինքն ա գնացել, թե՛ թոցրել են... *(Գրպանից հանում է մի տրցակ թղթադրամ, օդում ձոճում է:)* Հիմա ինչ ենք որոշում:

ՀԱՅԿ - Չորս հարյուր տարի առաջ մեռածի տանձին ա՝ իրան տանում են, թե թողնում, հիմա նա էնտեղ իր բոլոր դրախտները մաշել ա: Ասա, ախպեր, ո՞ր գերեզմանն ենք բացում:

ԳԱՌՆԻԿ - Մեր ախպոր:

ՀԱՄՈ - Հո չասի՞ր... անուն, ազգանուն, հայրանուն, ընտանեկան վիճակ, ծննդյան թիվ... Ինչացո՞ւ էր մեր հերոսը:

ԳԱՌՆԻԿ - Հենա ինքդ ասի՞ր՝ հերոս էր, էլի:

ՀԱՅԿ - Գոնե տեղը գիտես:

ԳԱՌՆԻԿ - Տեղը որ իմանայի, ինքս կփորեի, էլ ձեզ ինչի՞ էի փող տալիս:

ՀԱՅԿ - Օ՛Ֆ, գլուխս գնաց: Հլա հետևիցս արի, տեսնեմ ինչ ես ուզում:

Հայկը գնում է: Մյուսները հետևում են նրան:

ՊԱՏԿԵՐ 2

Պահակները, նրանց ընկերը և Գառնիկը քայլում են շիրմաքարերի միջով: Ձննեղով կարդում են շիրմաքարերի գրությունները:

ԳԱՌՆԻԿ - *(ցույց տալով հակառակ կողմը)*: Էս կողմից սկսենք:

ՀԱՅԿ - Էդ կողմի հետ գործ չունես: Եկեղեցու բակն ա, էնտեղ սրբերն են թաղված:

ԳԱՌՆԻԿ - Թե ասա՝ ինչի՞ եք եկել-թաղվել եկեղեցու բակում, ինչ ա, թե երկու անգամ ալելուիա եք կանչել կամ խաչ պահել: Համբերություն չունենք, էլի, ամեն ինչ ուզում ենք հենց հիմա և նաղողով:

ՀԱՄՈ - Ոնց ուզում ես պտտվիր՝ կյանքն առնտուր ա:

ԳԱՌՆԻԿ - Բա հալալ չէր կելտերին. նրանցից էս կյանքում կարելի էր փող պարտքով վերցնել՝ մյուս կյանքում վերադարձնելու պայմանով:

ՀԱՄՈ - Կելտ ենք, էլի, բա ինչ ենք. մենք էլ էս կյանքն ենք նիսյայով ապրում, տանջվում-տառապում՝ մեկ այլ կյանքում վարձատրություն ստանալու ակնկալիքով:

Հիմա արդեն չորեքրթք են գնում շիրմաքարերի միջով, մաքրում, ուշադիր կարդում են:

ՀԱՅԿ - *(Գառնիկին՝ շիրմաքարերը մատնացույց անելով):* Դու կարդա: Չնայած ինչ էլ գրած լինի, մեկ ա, տակիներ հող ա:

ՀԱՄԲՈ - Ո՞ր դարի ա, այսպես ասած, ինչ վաղեմություն ունի մեր հերոսը:

ԳԱՌՆԻԿ - Հերոսը վաղեմության ժամկետ չունի, նա միշտ արդիական ա և միշտ մեր կողքին:

ՀԱՅԿ - *(լապտերը պահում է օրորոցածն հնամենի շիրմաքարի վրա):* Էս մեկի վրա մկրատ ա նկարած. սա վարսավիր ա էղել:

ԳԱՌՆԻԿ - Կամ էլ դերձակ:

ՀԱՅԿ - Ինչ-որ ա՝ հերոս չի: Անցանք առաջ: *(Բայլում է առաջ, լապտերը մի քարի պահած կռանում:)* Էս մի քարին մահակ ա, չոբան ա էղել:

ԳԱՌՆԻԿ - Կամ էլ հոգևոր հովիվ:

ՀԱՅԿ - Ինչ որ ա՝ հերոս չի, անցանք առաջ: Էս մեկի վրա... գուռնա՛: Նվագող ա էղել:

ԳԱՌՆԻԿ - Կամ էլ հոգեառ:

ՀԱՄԲՈ - Կամ էլ քեֆչի:

ԳԱՌՆԻԿ - Կամ էլ փչան:

ՀԱՅԿ - Ինչ որ ա՝ հերոս չի: Անցանք առաջ: Իսկ ինչ պիտի նկարած ըլնի հերոսի շիրմաքարին:

ԳԱՌՆԻԿ - Էդ որ իմանայի, էլ ձեզ ինչի էի փող տալիս:

ՀԱՅԿ - Հոգնեցիք:

Այդ պահին լուսինը կուլ է գնում, սկսում է անձրևել:

ԳԱՌՆԻԿ - *(սրբարթալով ու դիմացի շիրմաքարը ցույց տալով):* Ինձ թվում ա՝ էս ա հերոսի շիրիմը:

ՀԱՄԲՈ - Ինչի՞ որ...

ԳԱՌՆԻԿ - Սիրտս վկայում ա... համ էլ նայեք՝ մնացածից մի քիչ բարձր տեղում ա, տեղանքը հսկում ա:

ՀԱՄԲՈ - Հա՛, նոր հիշեցի... նման մի բան պապս պատմում էր. հենց ըտենց էլ պատմում էր, ոնց քո սիրտը վկայում ա: Հաստատ էս ա:

ՀԱՄՈ - *(տախտի մեջ թքելով շփում է ձեռքերը, վերցնում է բահր):* Ուրեմն սկսեցինք: *(Բահր խփում է հողին:)* Չի գնում, մի բան խանգարում ա:

ՀԱՅԿ - Պի՛նդ ա: Ի՞նչ ա:

ՀԱՄՈ - Ի՞նչ իմանամ: *(Բահն ուժեղ է խփում, մետաղյա թաս է թռչում բահի քթի տակից: Ոտքով թասը հրում է դեպի Գառնիկը:)* Հլա նայի, արծայթ ա:

ԳԱՌՆԻԿ - *(վերցնում է թասը, լապտերի լույսի տակ շոռոտնուռ տալիս, նետում է ուսի վրայով):* Շան քաք ա՝ արծայթ ա...

Պահակները արագ փորում են ու վախվորած մայրում երկինք, ստուգում անձրևը կուժեղանա՞:

ՀԱՅԿ - Հլա լույս գցեք, էս ինչ էրևաց: *(Մյուս պահակը լույսը գցում է փոսի մեջ:)* Ըհը, գանգն էրևաց... Ճիշտ ա, կողերից փշրված ա, բայց դրա համար էլ ենք շնորհակալ, կարար էդ էլ չլներ:

ԳԱՌՆԻԿ - *(ղեպի փոսը ձգվելով):*
Տեսնեմ... հա էլի, ինքն ա: Հլա տեսեք, ինչ մեծ ակնակապիճներ ունի: Մենակ հերոսը կարող ա էղպիսի մեծ ականակապիճ ունե- նալ: Հաստատ ինքն ա: Տո՛ր:

Փորոզը գանգը հարմարեցնում է բա- հի թաթին ու նետում:

ԳԱՌՆԻԿ - Զգո՛ւյշ... *(Թռիչքով բռնում է գանգը, սեղմում կրծքին: Այա ծնկին խփելով՝ թափ է տա- լիս վրայի հողը:)*

ՀԱՅԿ - Էս էլ՝ ոտքը... *(Ոսկորը թփթփացնում է հողին ու պար- զում փոսից դուրս: Գտնիկը գանգը արագ խոթում է պարկն ու ձեռքը ձգում ազդուսկրին: Ու- րախ:)* Էս էլ՝ մյուսը... էս էլ՝ ձեռ- քը... *(Հերթով տալիս է փոսից: Գտնիկը արագ վերցում ու զննելով խոթում է պարկը: Զարմացած:)* Յա՛... էս ինչ ա: Ես քանի՞ ոտ եմ տվել:

ԳԱՌՆԻԿ - *(պարկի մեջ նայելով):*
Էրկու:

ՀԱՅԿ - Բայց հրես մեկն էլ կա: *(Մի ազդուսկր էլ է հանում փոսից:)*

Հիմա սրանցից ո՞րն ա հերոսինը:

ՀԱՄԲՈ - Պարզ չի. որն ավելի հաստ ա, էդ էլ հերոսինն ա:

ՀԱՄՈ - Չի ըլնի, բարակը երկու հատ ա, հաստը՝ մի:

ՀԱՄԲՈ - Հերոսը հենց նրանով ա հերոս, որ մի ոտանի ա, էլ ինչ հերոս, որ ոտ ու ձեռ չկորցնի... Էդ բարակներն էլ երևի կնկանն ա, սաղ-սաղ թաղել են մարդու հետ:

ԳԱՌՆԻԿ - Չէ, ախպեր: Մեր հերո- սը երկու ոտով ա մնացել պատ- մության մեջ, ամուսնացած էլ չի: Պիտի երկրորդ հաստն էլ գտնեք:

ՀԱՄՈ - Գտնենք... *(Թռչում է փոսի մեջ, առաջին պահակին:)* Դու գնա հանգստացի, մի քիչ էլ ես փորեմ: *(Համբոն մեկնում է ձեռ- քը, Հայկը կառչելով դուրս է ցատկում: Փոսից լսվում է երկ- րորդ պահակի ձայնը:)* Եթե գան- գը գտանք, ձեռներն ու մի ոտը կա...

ՀԱՄԲՈ - *(ուղղելով):* Իրեք ոտները...

ՀԱՄՈ - Եթե իրեք ոտները ստեղ են, պիտի չորրորդն էլ լինի, հո չի համբարձվել:

Լսվում է փորոզի սոքոսոքոցը:

ՀԱՄՈ - Կարո՞ղ ա, իրոք մի ոտանի ա էղել:

ԳԱՌՆԻԿ - Չէ, անհնար բան ա, չոր- րորդ ոտքն էլ պիտի լինի:

ՀԱՄՈ - Ծխելու բան տվեք:

ԳԱՌՆԻԿ - Արի դրսում ծխի: *(Փոսի մեջ թռչելով:)* Մի քիչ էլ ես փո- րեմ:

Երկրորդ պահակը դուրս է թռչում:

ԳԱՌՆԻԿ - *(փոսի միջից):* Ըհը՛, էս էլ մեր չորրորդ ոտքը: Տեսա՞ք, հենց առաջին բահից... *(Փոսից երևում է ոսկորը:)* Հիմա չորսն էլ շարեք գետնին, հաստերը պահեք, բա- րակները տվեք դնենք տեղը:

Լուսաբաց: Գերեզմանատան մուտք: Անձրևը դեռ շարունակվում է:

Մուտքի մոտ Գառնիկը հրաժեշտ է տալիս պահակներից և նրանց ընկերոջը:

ԳԱՌՆԻԿ - *(երկինք նայելով):* Լավ հասցրինք: Էնքան անձրև էկավ, հիմա մեռելները կծլեն:

ՀԱՅԿ - *(Գառնիկի ձեռքը սեղմելով):* Ցավդ տանեմ, ախպերս, անձրևից չվախենաս: Հենց հերոս պետք ըլնի, արի...

Ողջագործում են: Գառնիկը հեռանում է:

ԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ 3

Ոստիկանություն: Սեդանի մոտ նստած է Ավագ ոստիկանը: Գիմացը՝ Սհերը: Նրա ետևում կանգնած է Շարքային ոստիկանը:

ՄՀԵՐ - *(հուզված):* Տաքսու կայանից տեղեկացրին, որ մեքենան տեղում ա: Ամեն ինչ այնքան լավ էր ընթանում. մինչ դուռը կփակեի, նայեցի հայելու մեջ՝ նոր կոստյում, իտալական կոշիկներ... *(Ոստիկաններին.)* Երբեք հագած կա՞ք իտալական կոշիկ, դա ուրիշ հաճույք ա:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Հանգիստ թողնենք մոդան, ասեք, ինչ ա պատահել:

ՄՀԵՐ - Ռեստորանում հյուրերն արդեն կամաց-կամաց տեղավորվում էին: Մուտքի մոտ շվեյցարը ինձ հրավիրատոմս մեկնեց: Զարմացա, չէ որ արդեն այստեղ եմ: Նա ասաց՝ վրայինը կարդա: Կարդացի. «Մահվան հրավիրատոմս»: Ծիծաղեցի՝ ո՞վ ա մահվանը հրավիրատոմս ուղարկում, մահը միշտ էլ գալիս ա առանց հրավերի: Ուսիս վրայով մեկը խլեց հրավիրատոմսը. «Ներս

գնա,- ասաց,- երկու բաժակ կխմես, կհասկանաս»: Պատկերացնում եք, ներսում բոլորի ձեռքին էլ կար դրանից, հրավիրատոմսը նկատի ունեմ:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Կարող եք ասել՝ ինչն ա ձեզ էս գիշերվա կեսին բերել մեզ մոտ: Ուրեմն՝ հանձնեցին հրավիրատոմսը, հրեցին ներս ու սպանեցին:

ՄՀԵՐ - Բայց չէ որ ես խոսում եմ ձեզ հետ:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Փաստորեն խոսքը սպանության մասին չէ: Ուրեմն...

ՄՀԵՐ - Չէ, չեն սպանել, միայն հրավիրատոմսը տվին: Բոլորին էլ տվին դրանից:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Ուրեմն...

ՄՀԵՐ - *(խիստ հուզված):* Ինձ թալանել են: Ամեն ինչ տարել են, ծեղ անգամ չեն թողել:

Շարքային ոստիկանը թուրք ու գրիչ է դնում նրա առաջ:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Գրեմք:

ՄՀԵՐ - Իսկ ինչ գրեմ:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Տարած իրերի ցուցակը:

Մեերը վերցնում է գրիչը, գրում է: Ավագ ոստիկանը այդ ընթացքում թերթ է կարդում:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - *(կանգնում է Մեերի գլխավերևում, հետևում գրելուն):* Կարմիր փայտից կահոյք... արծաթե սպանք... Ախպեր, միլիոնատեր ես էղել...

ՄՀԵՐ - *(գրելը չընդհատելով):* Ասա, է, ասա...

Ավագ ոստիկանը կարդում է թերթը: Շարքայինը հոգնել է սպասելուց:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - Միջանցքում եմ, որ վերջացնի, ձեն տվեք:

Շարքային ոստիկանը դուրս է գնում: Քիչ անց վերադառնում է: Մեերը դեռ գրում է:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - Ախպեր ջան, արագացրո: Մենք հլա պիտի դեպքի վայրը գնենք:

ՄՀԵՐ - Եթե լրիվ ցուցակն եք ուզում...

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Իհարկե, լրիվ...

ՄՀԵՐ - Ուրեմն պիտի մի քիչ էլ սպասեք: Ախր թալանել են, է, թալանել.... մի ծեղ անգամ չեն թողել:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - Մի վախի: Ըտենց բաներ ենք բացահայտել... *(Դուրս է գնում):*

ՄՀԵՐ - *(քիչ անց):* Վերջ: Ահա...

(Թղթերը հրում է Ավագ ոստիկանի կողմը):

Ներս է գալիս Շարքայինը, վերցնում թերթը:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - Ախպեր, դու գիժ ես:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - Ում էլ էդպես թալանեն, կգժվի:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - *(թղթերը Ավագին մեկնելով):* Չե, բայց... հլա կարդա, ինչ ա գրել:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - *(թղթերը ասքի անցկացնելով):* Պահո՛...

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - *(թղթերը նրա ձեռքից վերցնելով):* Հլա էս վերջին մասը լսի. «Պատեր՝ վերանորոգած վերջերս, իտալական թանկարժեք ներկերով, պատուհաններ՝ նույնպես թանկարժեք, եվրո, հատակ՝ կաղնու փայտից, ձեղնահարկ՝ հնագիտական արժեք, կառուցված 1751 թվին, այգի՝ 700 մետր, պտղատու ծառերով, մեծ մասը ազգային հպարտություն՝ ծիրան, ծառերից մեկի տակ՝ ճագարի բուն, մեջը՝ հղի մերացուն, դարպաս՝ դարբնագործի անվանական աշխատանք...»:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - *(կարեկցանքով):* Ուզում եք ասել՝ տունն էլ են տեղահան արել-տարել:

ՄՀԵՐ - *(ողբազին):* Տարել են, մինչև վերջին բուռ հողը:

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - *(թղթերը Մեերի առաջ դնելով):* Ստորագրի: Հասցեն էլ գրի: Չվախենա,

կրացահայտենք: Էդքան մեծ թա-
լանը հեշտ չի պարտակելը, շու-
տով իրենք իրենց կրացահայտեն:

**Մենքը ստորագրում է, գրում հասցեն,
թղթերը հրում ոստիկանին:**

ՄՀԵՐ - Ես էլ էդ հույսին եմ...

ՇԱՐՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ - (վերցնում է,
նայում): Արա, դե շուտ ասեիր,
էլի, ո՞ր էիր գլուխ տանում:

ՄՀԵՐ - Դուք ինչ-որ բան գիտեք:

ԱՎԱԳ ՈՍՏԻԿԱՆ - (հասցեին նայե-
լով): Ինչի մենակ մենք, բոլորն էլ
գիտեն: Սպասեք, ձեզ կընդունի
դատախազը:

ՊԱՏԿԵՐ 4

**Հարուստ կահավորած աշխատա-
սենյակ: Մեղանի առաջ նստած է
դատախազը, նրա դիմաց՝ Մենքը:**

ԴԱՏԱԽԱՆԱԶ - Իսկ դու որտեղ էիր էդ
պահին:

ՄՀԵՐ - Ընկերոջս աղջկա հարսանի-
քին:

ԴԱՏԱԽԱՆԱԶ - Բա մարդ հարսանիք
կգնա էդպիսի օրով:

ՄՀԵՐ - Որ գնում էի՝ սովորական օր
էր: Չնայած լավ կլինեք չգնայի,
փեսան հավատացյալ էր. սպա-
նեցին իրենց հոգևոր երգերով...
Պիտի չգնայի, ձանձրալի հար-
սանիք էր:

ԴԱՏԱԽԱՆԱԶ - Ես էլ եմ դրանցից
զգվում: Չնայած որ հավատաց-
յալ լինեիր, ավելի հեշտ կտա-
նեիր, կհասկանայիր, որ իրական
զանձերը երկնքում են:

ՄՀԵՐ - (դառը քմծիծաղով): Երկրի
վրա էլ վատ չէր... կարգին ապ-
րում էի:

ԴԱՏԱԽԱՆԱԶ - (ֆաֆսալով կռանում է,
գրասեղանի դարակից հաստա-
փոր թղթապանակ է հանում, մի-
ջից՝ փաստաթուղթ, դնում է
Մենքի առաջ ու մատը տողի վրա
սահեցնելով կարդում է):
Պետության կարիքների հա-
մար... ահա, ինդրեմ, ողջ թաղն
ա վերցված պետության կարիք-
ների համար: Տունդ, իհարկե, վե-
րադարձնել չենք կարող, բայց
փոխհատուցում կտանք:

ՄՀԵՐ - Չեմ ուզում: Ոչ մի փոխհա-
տուցման համաձայն չեմ, ես իմ
տունն եմ ուզում:

ԴԱՏԱԽԱՆԱԶ - Էս ի՞նչ անտանելի ազգ
ենք... արա, յոթ հարյուր տարի
պետություն չենք ունեցել, հիմա
դու էկել՝ մի տուն չես ուզում զո-
հաբերել քո քսանամյա պետութ-
յանը: Արա, քո խիղճն ինչ խիղճ
ա, դու քո մանուկ հայրենիքից
բան ես պահանջում:

ՄՀԵՐ - (վիրավորված և հուզված):
Եթե ինձ նախօրոք ասեիք, եթե
անգամ ակնարկեիք... ես գուցե
ավելին կտայի, բայց որ այդպես
հանկարծակի, այդպես արհա-
մարհական... Այո, պահանջում
եմ:

ԴԱՏԱԽԱՆԱԶ - Ցավդ տանեմ, ես մի
հոգի, դուք՝ երկու միլիոն, ես ի
վիճակի եմ, ո՞ր մեկիդ հարցնեմ:
Մարդ ենք, չէ՞, մտեք իմ դրության
մեջ:

ՄՀԵՐ - Ես իմ տունն եմ պահանջում,

որտեղ ծնվել եմ, որտեղից Սիրիբ է արքորվել իմ հայրը, որտեղից Ղարաբաղյան պատերազմ է մեկնել իմ եղբայրն ու չի վերադարձել, որտեղից թաղել են իմ մորը, որտեղ պիտի ծնվեն իմ երեխաները... (Ձեռքը խփում է սեղանին։) Ես իմ կենսագրությունն եմ պահանջում:

ԴԱՏԱԽԱՍՏ - Բա քու էրեսին թքելու չի: Արա, եղբայրդ էստեղ լինելը՝ ինչ կասեր: Նա իր կյանքն ասովել հայրենիքին, դու չորս պատն ավստսում ես: (Հեռախոսազանգ: Դատախազը վերցնում է ընկալուչը:.) Ի՞նչ... Ժողովուրդը դժգոհ աս: Միտինգ են անում: Սպառնում են հեղափոխությամբ: Ես ինչ իմանամ, մի բան արեք: Շեղեք նրանց ուշադրությունը: Ո՞նց: Ի՞նձ եք հարցնում՝ ոնց:

ՄՀԵՐ - (հեզնանքով): Հայրենիքի հանդեպ մասսայական սիրո տեսարան կազմակերպեք:

ԴԱՏԱԽԱՍՏ - (ապշած ու զայրույթից խեղդվելով): «Միրո տեսարան»... սեքս... սրբապղծություն... գիտես քեզ ինչ կանեմ, արա, դու էդ ում հայրենիքին...

ՄՀԵՐ - (վախից կմկմալով): Ի՞նչ եք ասում: Ես ավանդապահ մարդ եմ, ինչ սեքս...

ԴԱՏԱԽԱՍՏ - (ընկալուչի մեջ): Ինչ-որ բան մտածեք, ասենք... վազեք Երևանից Սևան և այդ վազքը նվիրեք Գարեգին Նժդեհին: (Հեռախոսը ցած դնելով մի այլ թուղթ է հրում Մհերի առաջ:) Ահա,

փոխհատուցման տարբերակները, ընտրի որն ուզում ես:

ՄՀԵՐ - (կարդում է, զայրույթից վերթոչելով): Ձեռ եք առնում: Ես կրողոքեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: (Հեռախոսազանգ: Դատախազը նորից վերցնում է ընկալուչը: Մհերը սեղանին տեսնում է հրավիրատունը: Գլխի շարժումով հրավիրատունը ցույց տալով:) Դուք էլ եք հրավիրված:

ԴԱՏԱԽԱՍՏ - Իսկ ո՞վ հրավիրված չէ, որ... դարիս մեծագույն թաղումն աս:

ՄՀԵՐ - Ճանաչում էիք: (Գլխի շարժումով հրավիրատունն է ցույց տալիս:.)

ԴԱՏԱԽԱՍՏ - Էն էլ ոնց... ոնց որ հարազատ հորս:

ՄՀԵՐ - (դատախազի ձեռքը սեղմելով): Ցավակցում եմ: Զգում եմ, որ հարազատ մեկն աս եղել, կիսում եմ ձեր վիշտը:

ԴԱՏԱԽԱՍՏ - Ցավակցում: Բայց չէ որ դա ուրախություն աս, համազգային ուրախություն...

ՄՀԵՐ - (չհասկացող հայացքը՝ հրավիրատունին): Մենք Թալեաթին ենք թաղում:

ԴԱՏԱԽԱՍՏ - Ի՞նչ... Արա, դու հայ չես, ես քու տիրումերը... շուտ արա, նստի, փոխհատուցմանդ հարցը լուծենք, ոռդ էղի գնա, էլ չեմ համբերի՝ կատկացնեմ... (Մհերը վախեցած նստում է: Հեռախոսազանգ: Վերցնում է ընկալուչը:) Արա, էս ինչ ասավոր օր աս, հորս արև... (Ցած է դնում

ընկալուչը, Մհերին.) Ի՞նչ որոշեցիր փոխհատուցման հետ կապված:

ՄՀԵՐ - Ձեզ լինի ձեր փոխհատուցումը, բան էլ չեմ ուզում:

ԴԱՏԱՍԵԱՋ - Մի բորբոքվի, դրսում հաճելի չէ, դաժան ճմեռ ա սպասվում... Հոգեբուժարանը ընտրի, դա ավելի ձեռնառու ա: Բերդում խուժանը շատ ա, հոգեբուժարանից հնարավոր ա առողջ դուրս գալ, բերդից՝ չէ: Իսկ հոգեբուժարանը՝ տաք տեղ, ձրի սնունդ, բժիշկների կիրթ միջավայր... Էլ Աստծու կրակ ես ուզում:

ՊԱՏԿԵՐ 5

Գիշեր: Հիվանդասենյակ: Մհերը նստած մահճակալին, ակնդեռ նայում է իր դիմաց, ապա ձեռքերն առաջ պարզած թափահարում, ասես քշում է ինչ-որ մեկին: Հետո խոխոտլով բռնում է սեփական օձիքը, փորձում ազատվել անտեսանելի ձեռքերից: Քացով խփում է: Մի պահ հանգստանում է ու շնչակտուր նետվում դեպի հեռախոսը: Հավաքում է համարը: Ընկալուչի մեջ լավում է բժշկի հոգնած ու ձանձրացած ձայնը:

ԲԺԻՇԿ - Հը՛:

ՄՀԵՐ - Ես եմ:

ԲԺԻՇԿ - Ծանաչեցի: Ի՞նչ կա: Նորից պոռնիկ Շամիրանը:

ՄՀԵՐ - (*շնչակտուր*): Ձէ: Էս անգամ եզիպտական փարավոնը՝ փղերով, քրմերով. տեղը-տեղին... Էկավ ու բռնեց օձիքս՝ պիտի գաս

Եզիպտոս: Ասում եմ՝ «Ինչի՞ս են պետք էդ անապատները, մենք մեր արևի ձեռն ենք կրակն ընկել»: Գայթակղում ա՝ բուրգերը կտեսնես: Ես նրան՝ «Ինչի՞ս են պետք էդ մահվան բացիլակիրները: Մոռացել ես՝ քանի գիտնական ա մեռել դրանք պեղելիս»: Իսկ նա՝ «Գիտնականները մեռել են, որովհետև փնտրել են ճշմարտությունը. ճշմարտությունը միշտ էլ մահացու է: Դու ճշմարտությանը ձեռք չես տա: Ուղղակի բուրգերը կտեսնես, ուղտ կքշենք, կզվարճանանք»: Ծիծաղում եմ՝ «Ուրիշները իրենց տներում այլ-մոլորակային են պահում վանդակներում, դու դեռ ուղտով ես հիանում»: Էլի հանգիստ չի տալիս՝ «Հենց հոգնեցիր, բուրգերում սուրճ կխմենք: Էլ մի ձգձգի, շուտ արա...»: Պատկերացնում ես՝ ինձ հրամայում ա: Կատաղեցի՝ «Ոչ էլ էդպես հրամայիր, վաղուց արդեն դու փարավոն չես, դու հազարամյա մումիա ես և քո արքայական հզորությունը պահում ես միայն բուրգերում ու անեծքներում: Էնպես որ, ես քեզնից չեմ վախենում»: Ինքն էլ ա կատաղում՝ «Փարավոնների անեծքից էլ...»: Ես տակ չմնացի՝ «Ահ, դու ոչ ողջ ես, ոչ մեռած, ոչ կյանքի վրա իշխանություն ունես, ոչ մահվան, ինչի՞ պիտի քո անեծքից վախենամ»: Խեղճացավ՝ «Բա բուրգերը»: Ասեցի՝ «Ձէ, ախպեր,

գոհ եմ: Էդ հիմա ես էդպես ասում. դուք՝ փարավոններդ, կատաղած դիակներ եք, ձեզ համար թշնամի ու բարեկամ չկա, ով դուրներդ չեկավ՝ անեծք, ով խանգարեց՝ անեծք, ով կոշիկները չհանեց ներս մտնելիս՝ անեծք... Մի խոսքով, ոռոգ էդի, ժամկետանց, փտած ծերուկ: Հիմա գիտեն ինչ թագավորներ կան. կոճակ սեղմելով են աշխարհը նվաճում»: Այ էստեղ նա փրփրեց՝ «Կանիծեմ»: Բայց դե, ինձ գիտես, ծաղրեցի. «Վսյ, էս ոնց վախեցա, հիմա չիշիկ կանեմ տակս»: Վիրավորանքից մեռավ՝ «Անիծում եմ...- ասաց:- Ես քեզ ավելի դաժան կանիծեմ, քան մահն է. ես անիծում եմ քեզ տեսնել ճշմարտությունը»: Այ էստեղ ես մորթեցի փարավոնին, ասեցի՝ «Ո՛ւֆ, ցնդած... ինչ էլ վախեցնել վախեցրիր: Իմ փարավոնի միամիտ մումիա, ինչը քեզ համար անեծք ա, ինձ համար ճակատագիր ա: Ես էդ անեծքը հետս ծնվել եմ»:

ԲԺԻՇԿ - Ապրես, այ էդպես, միշտ դուլոդ տեղը պահի, չհանձնվես: Բա ինքը:

ՄՀԵՐ - Քո կարծիքով ինչ. ոռոգ է-դավ-գնաց:

ԲԺԻՇԿ - Քեզ էլ չեմ հասկանում... Ուզածդ ինչ ա. Շամիրամին մերժում ես, փարավոնին մերժում ես: Կամ մեկը, ում չես մերժում:

ՄՀԵՐ - Կա, բայց դա արդեն քո գործը չի: Քո գործը ցնորքներն են:

ԲԺԻՇԿ - Լավ, տասի կողմերն արի: Բայց չուշանաս:

ՄՀԵՐ - Ավելի շուտ հնարավոր չէ, մի տեսակ անհանգիստ եմ:

ԲԺԻՇԿ - Վալերիանկա լցրու բամբակի վրա, դիր քթիդ, խորը շնչի ու քնի:

ՄՀԵՐ - Վալերիանկա չունեմ:

ԲԺԻՇԿ - Ի՞նչ ասեմ... մի բաժակ օդի խմի:

ՄՀԵՐ - Օդի որտեղից... *(Ներքնակի տակից հանում է օդու շիշը:)* Համ էլ օդին ցնորքների վրա չի ազդում: *(Շիշը կում է անում:)*

ԲԺԻՇԿ - Բայց քո վրա ազդում ա, չէ:

ՄՀԵՐ - Ինչի, մենք իմ դեմ ենք պայքարում:

ԲԺԻՇԿ - Ա՛յ ցավդ տանեմ, հիմիկվա դրությամբ՝ հա՛, թող քնեմ... արդեն լուսանում ա, արթնանանք, կգաս:

ՄՀԵՐ - Բա որ փարավոնը էլի գա՛... փղերով-բանով...

ԲԺԻՇԿ - Ոնց որ առաջին անգամը ոռոգ արիր, նույնը կկրկնես:

ՄՀԵՐ - Բայց զորավորներից էր երևում, քուրմս էլ պապիրոսին բան էր խզվում ու ինձ թարս-թարս նայում:

ԲԺԻՇԿ - Մի վախեցի, զորավորներն էլ մահկանացու են և պարունակում են նույն հինգ լիտր արյունը. ոչ մի կաթիլ ավել: Մի լավ, տեղը-տեղին հայհոյիր, թող ոռոգ ըլնի, մինչև լույսը բացվի:

ՄՀԵՐ - Լավ:

Ցած է դնում ընկալուչը, սևեռվում, փակում է աչքերը: Չեռքը կրծքին դրած տնքում է, ապա բացում աչքերը, նորից վերցնում ընկալուչը, համար հավաքում:

ՊԱՏԿԵՐ 6

Բժշկական սարքերով հագեցած ամբուլատոր սենյակ: Անկյունում՝ գրասեղան, աթոռ, սեղանի վրա՝ ապակե փոքրիկ ակվարիում: Մները նստած է սենյակի կենտրոնում: Բժիշկը էխուկարդիոգրամի սարքը փաթաթում է նրա գլխին, ճակատին ու քունքերին ջուր է քսում բամբակով, լարերի մյուս՝ ռետինե ծայրը ամրացնում ջուր քսած տեղերը:

ՄՀԵՐ - *(փորձում է կատակել):* Ստուգում ես՝ ուղեղ կա՞:

ԲԺԻՇԿ - Չէ: Հաստատ գիտեմ, որ կա: Ով ուղեղ չունի, էստեղ չի հասնում: *(Հընթացս հետևում է ուղեղի աշխատանքը գրող ժապավենին ու ծայրից բռնած և կարդում է, և խոսում:)* Ինձ հիշեցրու՝ ինչո՞վ էիր զբաղվում:

ՄՀԵՐ - Հեչ, բանաստեղծ եմ:

ԲԺԻՇԿ - Հոգո՞վ:

ՄՀԵՐ - Առհասարակ:

ԲԺԻՇԿ - Բա էլ ինչի՞ ես դժգոհում, դա քեզ նույնիսկ օգտակար ա. ցնորքները գրականության սնման աղբյուրներից են, իզուր էլ ուզում ես բուժվել: Ճիշտ են բանաստեղծները, երբ հպարտանում են, թե Աստված իրենց տվել ա իր աչքը:

ՄՀԵՐ - Բայց դա լավ ա՞ որ... Նա

Աստված ա և դիմանում ա իր տեսածին, ես մարդ եմ, ինձ համար անհնար ա դիմանալը: Ես ունեմ հիվանդ սիրտ, բորբոքված երևակայություն, անընդհատ կեղեքում եմ ինքս ինձ, որ չեմ ասում այն, ինչ գիտեմ: Բայց օրերից մի օր կանտեսեմ խղճահարությունը մարդ արարածի հանդեպ և ողջ դաժանությամբ կյանքի երեսին կնետեմ այն, ինչ գիտեմ նրա մասին:

ԲԺԻՇԿ - Մի ժամանակ ես էլ էի գրում: Դե գիտես՝ սիրահարված ժամանակ բոլորն են գրում: Սիրահարվելուս խերն էն էղավ, որ «Ավանգարդը» տպեց բանաստեղծություններս: *(Հանկարծ զվարթանալով:)* Գրելու պարգևածը հաճո՞յք ա, թե՞ բավականություն:

ՄՀԵՐ - Ոչ հաճոյք ա, ոչ էլ բավականություն: Մի էքսցենտրիկ բառ կա՝ կայֆ: Գրելը էնպիսի կայֆ ա, ինչպես արյուն խմելը, երբ գիտես, որ ոչ մի նորմալ մարդ դա չի անի, որ անցար մարդեղենության սահմանը՝ տալիս ա էն զգլխիչ արբունքը, ինչ երակից հորդող արյան կաշուն գոլորշին: Դու համոզված ես, որ գիշատիչ ես և զրչով հոշոտում ես կյանքը գիշատչության բոլոր օրենքների անթերի կիրառմամբ, բայց, ի տարբերություն այլ գիշատիչների, ուզածդ պահին կարող ես ետ դառնալ Աստծո մարմնի մեջ. քեզ համար այդ ճամփան երբեք փակ չէ:

ԲԺԻՇԿ - *(թղթե ժապավենից
չկտրվելով, նրան ուշադիր լսելով
և առանձնապես բան չհասկա-
նալով):* Բանաստեղծները սիրում
են ցավը:

ՄՀԵՐ - *(հպարտությամբ):* Ինչպես
հոգեկան հիվանդին են ծակծ-
կում, հասկանալու համար՝ ցավ
զգում ա, կյանք կամ մեջը, էնպես
էլ մենք կյանքի նյարդերն ենք.
մեզ խոշտանգում են, հասկանա-
լու համար՝ կյանքը ողջ ա: Բանի
մենք կանք, կյանքը ողջ ա, և
կարևոր չէ, որ մեր տառապանքի
հաշվին:

ԲԺԻՇԿ - Ասում ես՝ ովքեր են քո տա-
ռապանքը. Շամիրամը, փարա-
վոնը... էլ...

ՄՀԵՐ - Օձերը:

ԲԺԻՇԿ - Օձերը: Ի՞նչ դաժան ան-
ցում... Բայց դու դրանց մի նայի
որպես չարության աղբյուրի, այլ
խեղճ, անիծված, անձեռ, անոտ,
ու նաև՝ անդրախտ... Եղբայր, էդ
մի թույնն էլ չունենան: Բա ո՞նց
ապրեն:

ՄՀԵՐ - Բժիշկ, հիմա դու իմ բարեկամ
ես, թե՛ օձերի:

ԲԺԻՇԿ - *(մահապարտի հպարտու-
թյամբ շեշտելով):* Ճշմարտության,
սիրելիս, ճշմարտության: *(Ավար-
տում է կարդիոգրամի ժապավեն
կարդալը:)*

ՄՀԵՐ - Ի՞նչ էիր փնտրում:

ԲԺԻՇԿ - Ցավի աղբյուրը:

ՄՀԵՐ - Ե՛վ...

ԲԺԻՇԿ - Դարն է, սիրելիս, դարը:

ՄՀԵՐ - Իսկ դա բուժելի՞ ա:

ԲԺԻՇԿ - Չեմ կարող ասել, թե մենք

բուժում ենք, բայց արտասահմա-
նում բուժում կա: Ցավոք, թանկ
արժի: Ի դեպ, փողի մասին, քա-
նի որ դու բանաստեղծ ես... քեզ
մատչելի մի տարբերակ ունենք:
Արդեն հաջող բուժված մի հի-
վանդ ունենք. իմ գիտական
հայտնագործությունը: Եթե կու-
զես՝ կձանոթացնեմ: *(Մեղի
գլխից հանում է սարքը, փաթա-
թում կարդիոգրամի ժապավենը,
դնում սեղանին:)*

ՄՀԵՐ - Կարելի ա... Իսկ որտեղ
կարող եմ տեսնել նրան:

ԲԺԻՇԿ - Սնորճ:

ՄՀԵՐ - Չէի հրաժարվի:

ԲԺԻՇԿ - Նստեք, հիմա կբերեմ:
*(Դուրս է գնում, քիչ անց վերա-
դառնում, ձեռքին՝ երկու բաժակ:)*
Չհարցրի էլ՝ քաղցր, թե՛ դառը:

ՄՀԵՐ - Ոնց պատահի:

ԲԺԻՇԿ - Խնդրեմ:

ՄՀԵՐ - *(սուրճի բաժակը վերցնելով):*
Շնորհակալություն: Իսկ երբ ա
գալու հիվանդը... դե նա՝ ապա-
քինվածը:

ԲԺԻՇԿ - Ինչպես... Դուք դեռ չե՞ք
ծանոթացել, ախր նա էստեղ ա,
էս սենյակում:

ՄՀԵՐ - Էստեղ: *(Զարմացած չորսր-
չորը նայելով:)* Բայց էստեղ մեզ-
նից բացի ուրիշ մարդ չկա:

ԲԺԻՇԿ - Մա՛րդ: Ես ասել եմ՝ նա
մա՛րդ ա: Եվ առհասարակ, գիտ-
նականի համար չկա մարդ, կեն-
դանի, առարկա: Նրա համար
բոլորը կամ փորձ են, կամ փորձի
արդյունք:

ՄՀԵՐ - Այնուամենայնիվ...

ԲԺԻՇԿ - *(մատնացույց անելով ապակե ակվարիումը, որի մեջ մեծ, կանաչ դողող է):* Ահա... ահա մեր ապաքինվածը: *(Վերցնում է հիվանդի անձնական քարտը, մեկնում Մհերին:)* Խնդրեմ նրա հիվանդության՝ շերեփուկից գորտ ու գորտից դողող դառնալու պատմությունը: Կարող ես կարդալ:

Մհերը ապշահար զննում է ակվարիումը: Ապա շտապում է դեպի դուռը, այդ պահին դռան տակից ծրար են նետում: **Վերցնում է, կարդում:**

ՄՀԵՐ - Տեր Աստված... ամենուր նույն հրավիրատոմսն ա, միթե կարելի ա էսքան երկարատև մեռնել:

Բժիշկը մոտենում է, վերցնում, կարդում է հրավիրատոմսը:

ԲԺԻՇԿ - Եղբայրս էլ էր ստացել, ես էլ մտածեցի՝ ինձ արհամարհել են:

ՄՀԵՐ - Գնալով ես:

ԲԺԻՇԿ - Իսկ դու՝ ո՛չ: Չեմ հավատում...

ՄՀԵՐ - Տեսնեմ:

ԲԺԻՇԿ - Անպայման արի, ինչպես կարելի ա դա բաց թողնել:

ՄՀԵՐ - *(չուզենալով մատնել իր անտեղյակությունը):* Յուրաքանչյուրիս տեղը:

ԲԺԻՇԿ - *(գոհունակ կրկնելով):* Յուրաքանչյուրիս տեղը:

ՄՀԵՐ - Ընորհակալություն: Ցտեսություն:

ԲԺԻՇԿ - Ցտեսություն: Եթե որոշես

բուժվել, քո տրամադրության տակ եմ:

Մհերը զննում է:

ՊԱՏԿԵՐ 7

Հիվանդասենյակ: Մհերը պառկած է երկաթե մահճակալին, հայացքը առաստաղին՝ ճոճվում է: Ներս են մտնում Խաչիկն ու Վաչիկը: Մհերը նրանց նայելով շարունակում է ճոճվել:

ԽԱՉԻԿ, ՎԱՉԻԿ - Բարի օր, երիտասարդ:

ՄՀԵՐ - Բարև, բարև...

ՎԱՉԻԿ - Դուք պոետ Մհեր Վարդանյանն եք:

ՄՀԵՐ - Այո:

ԽԱՉԻԿ - Մհեր ջան, ինչի՞ ես էդպես պառկած, անբան ճոճվում:

ՄՀԵՐ - Է՛, ինձ միայն ճոճվելն ա մնում, էլ ինչ անեմ:

ՎԱՉԻԿ - Ինչի՞ ես էդպես դառնացած: Բա դու իրավունք ունես քո տաղանդը վատնելու: Չէ որ դա ազգային հարստություն է: Քեզ ո՞վ է թույլ տվել էդպես դաժանորեն վատնել ազգային հարստությունը:

ՄՀԵՐ - Է՛, էլ հարստություն մնաց... Թալանել են, է, թալանել, մինչև վերջին բոռ հողը: Մնում ա՝ մարդ կախվի, պրծնի:

ԽԱՉԻԿ - Ես քեզ հասկանում եմ. ցանկացած նորմալ մարդ կյանքում գոնե մի անգամ էդպիսի փորձ արել է՝ մտովի կամ փաստացի... Հետաքրքրասիրություն

է. մարդն ուզում է ծիկրակել անդին: Բայց... եթե ինքնասպանություն, ապա միայն դանակ. խրում ես սիրտդ, և վերջ: Իսկ կախվելը հարմար չի, ջանջալ է՝ ծառ ճարի, պարան օճառի, աթոռ ունեցի, որ վրան կանգնես... բազմաթիվ պայմանականություններից է կախված: Եվ բացի այդ՝ իրերը փող են: Հավատա՛մ, դանակը ձեռնտու է. մինիմալ ծախսով մաքսիմալ արդյունք:

ՎԱԶԻԿ - Ի՞նչ հիմարություններ եք դուրս տալիս... Էս մարդուն տրված է տիեզերքը պեղել, իսկ դուք ինչ եք խոսում:

ՄՀԵՐ - Ա՛... արդեն դա էլ չի ձգում. աշխարհում ամեն ինչ արդեն ուսումնասիրված ա, տիեզերքն ու կյանքը՝ բացահայտված: Աշխարհը գննված ու քննված ա հողից առ երկինք, ամեն ինչ՝ տեսնված ու ապրված ա... Ոչինչ, ոչինչ չի մնացել բացահայտելու, ապրելու ոչինչ չի մնացել: *(Ձսպանակափոր ներքնակը ճոճոսցնելով շարունակում է ճոճվել:)* Ճոճվել, միայն ճոճվել...

ՎԱԶԻԿ - Երազանքը զուտ անհատական է, ինչպես ճակատագիրը...

ՄՀԵՐ - Է՛, սիրելիներս, հավատացեք, որ երազանքս էլ ա կողոպտված... ճանձրալի ա՛ ապրելու ոչ մի շարժառիթ: Ճոճվել, միայն ճոճվել... *(Ավելի արագ է ճոճվում մահճակալին:)*

ԽԱԶԻԿ - Չէ, վիճակդ լուրջ է: Մնում է՝ մահդ փնտրես: Մահը միշտ էլ թարմացնում է կյանքը:

ՄՀԵՐ - Իսկ որտեղ փնտրեմ: Չնայած՝ դժվար օգնի...

ԽԱԶԻԿ - Հեռու գնալ պետք չէ, մարդու մահը իր կրունկի տակ է:

ՄՀԵՐ - *(վեր է թռչում, զննում իր ոտնաթաղակը):* Ո՛ր ա, բան էլ չկա: Հլա մի դանակ տվեք, փորեմ, կարո՞ղ ա՛ ներսում ա:

ՎԱԶԻԿ - Պետք չի արյուն թափել, բալես: Մենք քաղաքակիրթ աշխարհում ենք ապրում և մահվանը հասնելու շատ ավելի բարեկիրթ ձևեր գիտենք, քան արյուն թափելն է: Արի մեզ հետ և նրան կտեսնես:

ՄՀԵՐ - Իսկ դուք ովքեր եք, ես ձեզ չեմ ճանաչում, ինչի՞ պիտի ձեզ ենթարկվեմ: Ի՞նչ իմանամ՝ ո՞ր եք կանչում:

ԽԱԶԻԿ - Էդ մենք չենք... Հայրենիքն է կանչում:

ՄՀԵՐ - Ես արդեն բանակում ծառայել եմ:

ՎԱԶԻԿ - Դու մեզ չհասկացար, տղաս. ոչ թե դու ես պետք, այլ քո կյանքը:

ՄՀԵՐ - Բախտներդ չբերեց, պապիկներ, էդ առումով էլ եմ ընչազուրկ. հոգիս՝ Աստծուն, մարմինս՝ հողին, բան չունեմ, ընչազուրկ եմ:

ՎԱԶԻԿ - Հանգիստ եղիր, բալես, տիեզերքի հետ մենք կապ չունենք: Մենք հայրենիքի ծառաներն ենք և վերցնում ենք քո կյանքը երկրի կարիքների համար: Փոխարենը ինչ ուզես՝ կստանաս: Ասենք՝ տարածքային

կառավարման նախարարի պաշտոն:

ՄՀԵՐ - Ինչիս ա պետք:

ՎԱԶԻԿ - Ո՞նց թե՛ ինչիս ա պետք, գիտե՞ս, ինչ փող կաշխատես: Աշխարհում տասը միլիոն հայ կա և բոլորն էլ երազում են տուն ու գերեզման ունենալ հայրենիքում: Իսկ հայրենիքը փոքր է, ընդամենը քսանինը հազար քառակուսի մետր: *(Ինքնազոհ ծիծաղով:)* Լավ բանը միշտ էլ քիչ ա լինում:

ԽԱԶԻԿ - Մտածիր, ձեռնտու բան ենք առաջարկում: Գիտե՞ս, ինչ փող կաշխատես, ամեն սանտիմը հազար անգամ կվաճառես ու կվերավաճառես:

ՄՀԵՐ - Այ մարդ... հանգիստ թողեք ինձ: Ինձ բան էլ պետք չէ: *(Նորից պատկում է, շարունակում ճոճվել:)*

ՎԱԶԻԿ - Մեզ էլ պետք չէ, հայրենիքին է պետք: Իսկ դու գիտես՝ ո՞վ ես: Դու ազգային հերոս Գևորգ Բ-ի ժառանգն ես, միթե քո ինքնությունը քեզ չի կանչում: Դու հերոս ես ու հերոսի որդի, և հայրենիքը հիմա քեզ է կանչում: Գիտե՞ս՝ հերոսն ինչ է. ազգի բժիշկը: Նա էլ բժշկի պես հույս է վաճառում ժողովրդին:

ՄՀԵՐ - Պապիներ ջան, ազնիվ խոսք, զգվում եմ առևտրից: Եվ հետո, ինչ իմանամ՝ ո՞ր եք տանում:

ՎԱԶԻԿ - Դեպի անմահություն...

ԽԱԶԻԿ - Հետաքրքիր մարդ ես, ուր էլ տանենք, գժանցից լավ չի:

ՄՀԵՐ - *(մի պահ մտածելով):* Լավ, համոզեցիր:

Մեերն իջնում է մահճակալից, խաբս տալով փախչում սենյակից: Խորհրդականները հարայ-հրոցով հետևում են նրան:

ՊԱՏԿԵՐ 8

Քարանձավ: Օդի միջով շառաչում են հրե օձեր, քարանձավի մուտքն են հսկում: Ինչ-որ մեկը փռշտում է:

ՄՀԵՐ - *(դրսից):* Չգիտեմ՝ ով ես, բայց առողջություն:

ՏԻՐ - Մի առաջ արի, տեսնեմ դո՞ ով ես:

ՄՀԵՐ - Օձերդ չեն թողնում:

ՏԻՐ - *(ծեռքը օդի մեջ շարժում է, օձերը ցախերի պես թափվում են շեմքի ստաջ):* Արի: Ի՞նչ ես ուզում:

Մեերը առաջանում է, տեսնում՝ մի աժդահա մտած, եղունգով քարե էջին փորագրում է:

ՄՀԵՐ - Չգիտեմ: Վայ թե կորել եմ:

ՏԻՐ - Ինչո՞վ օգնեմ: Ասա՝ ինչ ես ուզում:

ՄՀԵՐ - Ճիշտն ասած, չգիտեմ՝ ով ես, որ իմանամ՝ ինչ ուզեմ:

ՏԻՐ - Ես Աստծու գրագիրն եմ: *(Շարունակում է եղունգով խազեր անել քարին:)* Մեռնող-ապրողների ցուցակն եմ կազմում: *(Մեերը մոտենում է, փորձում Տիրի ուսի վրայով նայել:)* Ի՞նչ ես ծիկրակում, քեզ թվում է՝ բան ես հասկանալու...

ՄՀԵՐ - Հե՛չ, ասի ճշտեմ՝ իմ անունը կա՛մ:

ՏԻՐ - Չկա, բայց եթե ուզում ես, կգրեմ:

ՄՀԵՐ - Մի վախեցրու, էդ ոչ դու ես որոշում, ոչ ես: Տուցակի տերն ուրիշ մեկն ա:

ՏԻՐ - Մի տող բան մնաց, էս տողն էլ գրեմ ու էջը կավարտեմ, կուղարկեմ:

ՄՀԵՐ - Վերջին տողն ան: Իսկ որտեղ ես գրելու քո անունը: Դու հո անեծքի պես անմահ չես: Խեղճ մարդ: Եթե պետք ա՝ իմը գրի, բայց դու ինչ մեղք ես, դարեդար աշխատում ես, եղունգ կոտրում, գլուխ տրաքացնում, աչք քոռացնում ու առանց հանգստի... Ինչ անհարգալից վերաբերմունք էրկնավորի կողմից: Բեր ըմբուսացի, վերջին տողում քո անունը գրի, գնա հանգստացի:

ՏԻՐ - Փաստորեն եկել ես, որ ասես՝ մահս ես կամենում:

ՄՀԵՐ - Չէ, ուղղակի հիշեցնում եմ, որ հարություն առնելու համար երբեմն-երբեմն պետք է մահանալ:

ՏԻՐ - Բա իմ գործն ո՞վ կանի:

ՄՀԵՐ - Աստված կգտնի մեկ այլ սանիտար, ով կհոգա իր տիրույթների մաքրության մասին:

ՏԻՐ - Չլինի՞ քեզ նկատի ունես:

ՄՀԵՐ - Չէ:

ՏԻՐ - Եթե վերջին տողը պահեմ ինձ համար, բա քեզ ինչ անեմ:

ՄՀԵՐ - Մի տեղ թաքցրու, ինձ ուզում են թաղել:

ՏԻՐ - Տուցակից բացի ուրիշ տեղ չունեմ մարդ թաքցնելու:

ՄՀԵՐ - Հիմա թողնելու ես ինձ թաղեն:

ՏԻՐ - Լավ, մնա մոտս:

ՄՀԵՐ - Շնորհակալ եմ: Բայց... քանի որ էդքան բարի ես, լավուբյուն անել՝ անել ա, թող էդ վերջին տողը ես լրացնեմ: (*Տիրը զարմացած նրան է նայում:*) Շատ եմ խնդրում, ցավդ տանեմ, ինձ համար մեռնել-ապրելուց էլ կարևոր ա էդ մի տողը: Քեզնից ինչ ա գնում, դու էնքան տողեր ունես, էնքան էջեր, ապրելու էնքան ժամանակ... իսկ էս... մարդ էդի, ինչ ուզես կանեմ... Օձերիդ զբոսանքի կտանեմ, ճաշդ կեփեմ, քարանձավդ կավլեմ, մենակ էդ մի տողը ինձ զիջի:

ՏԻՐ - Դժվար է հասկանալը՝ ինչ կստացվի, եթե մարդու ձեռքը դիպչի տիեզերքի ցուցակներին, բայց... Հետաքրքիր է, ո՞ւմ անունն ես գրելու, որ քեզ էդպես պատեպատ ես տալիս:

ՄՀԵՐ - Էն մարդու, ով ուզում էր ինձ սաղ-սաղ թաղել:

ՏԻՐ - Ջղայնացած ես երևում, բայց... Աստծուց առաջ չընկնես:

ՄՀԵՐ - Աստված էնքան համբերատար ա... Մինչև որոշի ջղայնանալ, Հայաստանից միայն Հ տառը կմնա:

ՏԻՐ - Արդեն, արդեն...

ՄՀԵՐ - Ինչի՞ց հասկանանք: Աստծո զայրույթի հույսին մնացինք, էլի, որ հասանք քարանձավ: (*Տնողում է Տիրի կացարան-քարանձավը:*)

ՏԻՐ - Ի՞նչ ասեմ, Տիրոջ զայրույթը

էնքան նրբերանգներ ունի, հո մենակ մահը չի: Մենք միայն երևացողն ենք տեսնում, բա աներևոյթը... Ով գիտի՝ ինչ պատիժներ կան Աստծո զայրոյթի ալիքներում:

ՄՀԵՐ - Չէ, այլպէր, ես իմ գործը կանամ, թե չէ մինչև Տիրոջ զայրոյթի ջրերը հասնեն Հայաստան, իմ վրա մի թիզ կանաչ կբուսնի...

ՏԻՐ - Ցանկացած դեպքում, երբ ցուցակ ու հրավիրատումս եք կազմում, միշտ հիշեք՝ վերջին տողի իրավունքը իմն է: Ախր, դու ո՞վ ես...

ՄՀԵՐ - Ես հերոսաց հերոսի ոգին եմ, բա դո՞ ով ես:

ՏԻՐ - Ես Աստծո գրագիրն եմ, մեռնող-ապրողի ցուցակ կազմողը:

ՄՀԵՐ - Իսկ ես ապրողների ոգին եմ, քեզնից հզորը:

ՏԻՐ - Արդեն տարբերություն չկա: Աստծո զայրոյթի ջրերն արդեն դեպի երկիր են հոսում. մի գորեղ նոպա, և ոչինչ չկա: Իսկ եթե չկան մարդիկ, չկա և ցուցակի անհրաժեշտություն: Մենք մնալու ենք մենակ, երես առ երես:

ՄՀԵՐ - Ո՞վ՝ մենք:

ՏԻՐ - Ես ու դու. դու՝ մարդ արարածդ, ես՝ Աստծու մեռյալների ցուցակ կազմողը, մահվան լրաբեր հեշտակը: Եթե չկան ապրողներ, չկան և մեռնողներ: Ես դառնում եմ ավելորդ մի բան: *(Մտքերի մեջ ընկնելով:)* Դրա համար էլ քեզ ցույց կտամ ետդարձի ճամփան, որ գնաս, ապրես ու բազմանաս...

ՄՀԵՐ - Տեր Աստված... մի՞թե ես եմ հաջորդ Նոյը:

ՏԻՐ - Վերջին Նոյը: Իսկ մինչ էդ՝ նարդին բեր...

ԵՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ 9

Նախագահը նայում է պատուհանից: Դրսից լսվում են հեղափոխական կոչեր, ցուցարարների աղմուկը: Ներս է ընկնում Գառնիկը, ձեռքի պարկը դնում է սեղանին:

ԳԱՌՆԻԿ - Բերել եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչը:

ԳԱՌՆԻԿ - Իսկ դուք ինչին եք նայում պատուհանից:

ՆԱԽԱԳԱՀ - Ցուցարարներին: Ժողովուրդը դժգոհ ա, բողոքում ա: Պետք ա մի բան մտածել

նրանց հանդարտեցնելու համար:

ԳԱՌՆԻԿ - *(պարկը ցույց տալով):* Մտածել եմ: *(Սեղանին է դնում ձեռքի բրոշյուրը, որ կարողանա պարկը բացել:)*

ՆԱԽԱԳԱՀ - *(մինչ Գառնիկը պարկն*

է բացում, մոտենում, կարդում է բրոշյուրի վերնագիրը): Հըմ... «Ինչպես փրկվել». հետաքրքիր վերնագիր աս:

ԳԱՌՆԻԿ - Փողոցում Եհովայի վկաները տվեցին, ինչ-որ նոր աստված են հայտնաբերել...

ՆԱԽԱԳԱՆ - Ձեմ գարմանում, մարդը միշտ էլ թարմության կարիք աս զգում:

ԳԱՌՆԻԿ - Թարմության կարիք: Բայց չէ՞ որ մենք հանուն Նրա դարեդար տառապել ենք, սպանվել, ենթարկվել ցեղասպանության, պաշտել ու խաչվել: Եթե մենք գնանք նոր աստծո ետևից, ո՞վ կտա մեզ մեր տառապանքի գինը:

ՆԱԽԱԳԱՆ - Բան չունեմ ասելու, ուղղակի հետաքրքիր վերնագիր աս:

ԳԱՌՆԻԿ - Ի՞նչն աս հետաքրքիր, մինչև հիմա չգիտե՞ք՝ ինչպես փրկվել. ապրեք պատվիրաններով և փրկված եք:

ՆԱԽԱԳԱՆ - Պատվիրանները հավատ չեն ներշնչում: Դրանք գալիս են եգիպտական մեռյալների գրքից, ճիշտ աս, էստեղ դրանք քառասունն էին, որովհետև էն ժամանակ մարդիկ ավելի ստրուկ էին: Մեզից հետո եկողներն էլ կվերցնեն երևի հինգը ու կգարմանան, թե մենք ինչ ստրուկ ենք եղել:

ԳԱՌՆԻԿ - Եթե ինձ մնա, ես կթողնեմ միայն մեկը՝ մի սպանաներ: Թե չէ՞ մի շնացիր, սուտ մի խոսա, տո եսիմ ինչ... այ մարդ,

կյանքը լրիվ են ուզում զրկել համուհոտից:

ՆԱԽԱԳԱՆ - Սխալ ես մտածում. տիեզերքը երբեմն-երբեմն թարմանալու ու սանիտարական մաքրման կարիք աս զգում: Եվ առհասարակ. միշտ և առհավետ էս երկրի վրա իշխանությունը եղպես են պահել՝ սպանելով:

ԳԱՌՆԻԿ - (վերջապես պարկը բացելով): Էս անգամ ավելի խելոք բան եմ մտածել ժողովրդի դժգոհությունը բավարարելու համար:

ՆԱԽԱԳԱՆ - Իրոք: Եվ ինչ:

ԳԱՌՆԻԿ - Պետք աս բորբոքել նրանց հայրենասիրությունը:

ՆԱԽԱԳԱՆ - Ինչպես:

ԳԱՌՆԻԿ - (պարկը ցույց տալով): Իսնդրեմ:

Գառնիկը հանդիսավորությամբ բացում է պարկը, հանում է մի մեծ ոսկոր, դնում սեղանին, հպարտ նայում նախագահին: Հետո հանում է այլ ոսկորներ, վերջում բռով հանում է մանր-մուրր ոսկորներ, լցնում կույտի վրա: Վերջապես հանում է զանգը:

ԳԱՌՆԻԿ - (գանգը հանդիսավոր դնելով կույտի գլխին): Մարդ:

ՆԱԽԱԳԱՆ - (դեռևս վահար չհաղթահարած): Էս ինչ աս: Էս ինչ փայլեցրած ոսկորներ են: Դու հո սատանայապաշտ չես:

ԳԱՌՆԻԿ - Ի՞նչ եք խոսում: Հլա տեսեք ինչ լավ շուշաթղթել եմ, ոսկեջրել, ոսկեթելի վրա շարել: (Գանգի քունքերից ինսամբով բռնած դանդաղ բարձրացնում է,

ողնաշարը սկսում է շարժվել, չխկրտալով ձգվում է դեպի վեր։)

ՆԱԽԱԳԱՇ - *(աթոռ է փնտրում, գտնելով՝ ընկնում վրան):*

Վերջապես ասելու ես, սա ինչ ա:

ԳԱՌՆԻԿ - *(ցնծազին):* Ազգային հերոս:

ՆԱԽԱԳԱՇ - Քո ազգային հերոսով ինձ վախեցրիր, տնաշեն, սիրտս թուլացավ:

ԳԱՌՆԻԿ - Անտեր մնա կյանքը՝ բան ա մնացել հերոսից: Հանգիստ եղեք, նա վաղուց արդեն կմախք ա:

ՆԱԽԱԳԱՇ - Իսկ ինչի ա էստեղ, ուղարկեք թանգարան. ազգայինի տեղը թանգարանն ա՝ հիշողության գիրկը:

ԳԱՌՆԻԿ - Նա դեռ մեզ պիտի օգնի:

ՆԱԽԱԳԱՇ - Ինչո՞վ պիտի օգնի էդ մի քանի կիլո ժամկետանց կալցիումը էս խառը ժամանակներում: Լսում ես, ոնց են աղմկում...

ԳԱՌՆԻԿ - Չարժե, չարժե թերագնահատել հերոսներին: *(Թեթևակի ցնցում է զանգը, նրա ետևից շարժվում են ողերբ):* Էս տղեն... ժողովրդի զավակը և ապավենը կօգնի մեզ պահելու իշխանությունը:

ՆԱԽԱԳԱՇ - *(հեզնանքով):* Հանելու ես ընդդիմության դեմ:

ԳԱՌՆԻԿ - Ինչպես ասում ա հայ ժողովրդական առածը՝ մարդու թշնամին էլ պիտի մարդուն արժանի լինի: Քեզ թվում ա՝ մեր չկայացած, խեղճուկրակ, դրսի

ցուցումով շնչող ու արտաշնչող ընդդիմությունը արժանի ա նման հակառակորդի: Միթե նրա ուկորների փայլը ձեզ ավելին չի ասում... *(Նախազանից հարցական նայում է:)* Էս տղուն, էս հերոսին հանելու եմ ժողովրդիս դեմ: Ժողովրդին հնազանդության մեջ պահելու համար չկա ավելի զորեղ զենք, քան հայրենասիրությունն ա:

Մինչ նախազանից ոչինչ չհասկանալով նայում է ոսկեջրած ոսկորների կույտին, ներս է մտնում Գագոն, սեղանին է դնում մոմլաթե տոպրակը, հանդիսավոր լռությամբ կանգնում:

ՆԱԽԱԳԱՇ - Էս ինչ ա:

ԳԱԳՈ - *(տոպրակից սեղանին է տեղափոխում արնակոլով սիրտ):* Ազգային հերոսի սիրտը:

ՆԱԽԱԳԱՇ - *(սարսափահար, ցույց տալով կմախքը):* Սրան:

ԳԱԳՈ - Բա էլ ո՞ւմ:

ՆԱԽԱԳԱՇ - Բայց սա արյունոտ ա, իսկ հերոսը... *(մատնացույց անելով փայլող կմախքը)* Աստված գիտե, թե երբ...

ԳԱԳՈ - Կարծում եմ, դժվար չէ հասկանալը, որ հերոսի սիրտը միշտ և առհավետ արյուն ա ծորում իր ժողովրդի համար:

ՆԱԽԱԳԱՇ - Իսկ հերոսը համաձայն ա, որ իր սիրտը էսպես պատառոտելով հանել ու արյունը չոչնացնելով հասցրել էք էստեղ:

ԳԱԳՈ - Ո՞վ, էզը: Նա եզ ա, ինչ պիտի ասեր:

ԳԱՌՆԻԿ - Ե՛գ: Այ քեզ լկտիություն,
դրա համար քեզ դատ է հասնում,
դու անպատվում ես մեր սրբությո-
ւունները:

ԳԱԳՈ - Չէ, խոսքը հերոսի մասին
չէ: Հասկանում եք, մարդու սիր-
տը փոքր ա, հարմար չի գալիս
հերոսի չափերին: Ախր, էդ ան-
տերը պիտի մեծ լինի, որ հայրե-
նիքը տեղավորի: Դրա համար էլ
եզանը վերցրի:

ՆԱԽԱԳԱՆ - (*մեկ ներկայանալով, մեկ
սեղանը տնտղելով*): Հնարավոր է:

ՊԱՏԿԵՐ 10

Հրապարակ: Հրապարակում է
Ժողովուրդը՝ զորք, լրագրողներ տե-
սախցիկներով, դպրոցականներ,
տուրիստներ, օտարերկրացիներ և
այլն: Ձորքը շրջապատել է հրապա-
րակը, որպեսզի ոգևորված ամբոխը
ներս չխուժի: Ներսում՝ ամբիոնի ա-
ռաջ մախազահի անվտանգության
աշխատակիցները: Լրագրողները
աջուճախ վազվզելով սրանից-նրա-
նից հարցազրույց են վերցնում:
Ձինվորականների ուղեկցությամբ
ժամանում է մախազահը: Ժողովրդին
ձեռքի թափահարումով ողջունելով՝
բարձրանում է բեմ, որտեղ արդեն
նրան են սպասում մախարարները և
մի հոգևորական: Ձինվորականները
ևս բարձրանում են բեմ: Ամեն ինչ
քարանում է: Ամբիոնին է մոտենում
մախազահը:

ՆԱԽԱԳԱՆ - Սիրելի հայրենակից-
ներ, հարգարժան հյուրեր, պա-
տիվ ունեմ բացելու այս
հանդիսավոր արարողությունը:

Ամեն ժողովուրդ ունի իր փառքե-
րը հանձինս իր փառապանծ
զավակների: Նրանց կենսա-
գրությունը ապրեցնում է մեզ,
նրանց թողած ժառանգությունն է,
որ պիտի գուրգուրենք. քանզի
հայրենիքն է այդ ժառանգությու-
նը: Սիրելիներս, այս պահին մենք
սկսում ենք մեր հերոսաց հերոս,
ազգի պարծանք և ոգեղեն մարմ-
նացում, ամենայն հայոց հերոս
Գևորգ Բ-ի սուրբ մասունքների
հորելյանական՝ քսանհինգերորդ
վերաթաղումը: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

Ուռաները դադարում են: Լռություն:

ՆԱԽԱԳԱՆ - Այժմ հրապարակ ենք
հրավիրում մեծանուն պատմա-
բան պարոն Գառնիկ Հախնա-
զարյանին, ով փրկել է հերոսի
մասունքները կորստից: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

**Ուռաների ուղեկցությամբ ամբիոնին
է մոտենում պատմաբանը՝ զլխից վեր
պահած հին, բազմաչարչար ուղե-
պայուսակ:**

ԳԱՌՆԻԿ - (*ամբիոնին հասնելով
համբուրում է ուղեպայուսակը,
դնում ցած, հուզաթաթալ*): Չունենալով ոչինչ, բայց ունենա-
լով Աստծո օրհնությունը... (*Հուզ-
վում է, մի պահ լռում, մաքրում
աչքերը*.) Ես հայտնվեցի սիբիր-
յան ամենադաժան բանտում:
Դուրս գալու վերջին օրը, բան-
տի՝ աղբանոցի վերածված եղ-
բայրական գերեզմանոցից,

գիշերով, թաքուն, մթության քողի տակ, հանուն հայրենիք հաղթահարելով անհու սարսափը, բանտի պահակ Իվանին, առանց լապտերի ու լուսնի, կուրացուցիչ խավարի մեջ, խմեցրի երեք շիշ օղի, առանց բահի ու բրիչի, ձեռքերով փորեցի ողջ բակը, հերոսի ոսկորները ջոկեցի բակում թաղված բազմաթիվ դատապարտվածների ոսկորներից, էդպես հողախառը դրեցի այս սակվոյածի մեջ ու բերեցի: Ահա՛ այն: *(Համբուրում է ուղեպայուսակը:)* Պաշտելի Գևորգ Բ-ի ոսկորները թաքցրած, վրան լցրած բուժիչ խոտեր, ես անցա պետական սահմանը՝ հերոսի աճյունը հասցնելով հայրենիք:

Հրապարակը թնդում է ծափահարություններից: Գիտնականը աչքերը սրբելով իջնում է ամբիոնից:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ այժմ, ի նշան կյանքի հավերժության, հրապարակ բերել մանկան օրորոցը, որի մեջ մենք կամփոփենք մեր ազգի պարծանքի աճյունը:

Համազարկերի ներքո և եռագույնի ուղեկցությամբ հրապարակ է բերվում մեծ, ոսկե օրորոց. դնում են ամբիոնի առաջ, հրապարակի կենտրոնում:

ՆԱԽԱԳԱՀ - Մատուցենք հարգանքի մեր վերջին տուրքը ազգիս փրկչին: *(Կողքին կանգնած հոգևորականին.)* Խնդրեմ, սրբազան. խնկարկենք նրա լույս հիշատակը և անմահ մատունքները:

Սրբազանը մոտենում է ուղեպայուսակին, առաջ է պարզում մեծ, ակնակոտ խաչը, երգեցիկ ձայնով կարդում աղոթքը: Այնուհետև նախազանգի օգնական Օնիկը ամբիոնին է փռում ոսկեկար ծածկոց, պայուսակից հանում և ամեն անգամ համբուրելով հանածը՝ ոսկորները հերթով դասավորում է ծածկոցին:

ՆԱԽԱԳԱՀ - Եվ այսպես, սիրելի ժողովուրդ, սկսելով մեր պանծալի հերոսի վերաթաղումը, ասեմ, որ մեզանից յուրաքանչյուրը իրավունք ունի մաս ունենալու իր հերոսից: Այդ իսկ պատճառով այժմ ազգրի ոսկորը մենք կամփոփենք Արարատի մարզում. աշխարհ շրջած այս ոտքը Մասիս սարի ոգեղեն մարմնացումն է և պետք է մոտ լինի նրան: Ուտա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԳ - Ուտա՛...

Ուռաների և համազարկերի ներքո նախազանգը ամբիոնից վերցնում և զինվորներին է հանձնում այժմ ազգրի ոսկորը: Մինչ երկու զինվոր ակնածելով նախազանգից ստանում են այն, երկուսը արագ ոսկե օրորոցի միջից հանում են սովորական օրորոց, դնում մեծի կողքին: Չինվորները ազդուկորը դնում են դրա մեջ:

ՆԱԽԱԳԱՀ - *(մատնացույց անելով քանաստեղծին, որ կանգնած է առաջին շարքում):* Անմահացրու այս պահը հավերժության համար, բանաստեղծ:

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍ - *(քանաստեղծի թևքից քաշելով):* Բուժմանդ փողն

ուզի, բուժմանդ փողն ուզի... Ձրի չանես:

ՆԱԽԱԳԱՏ - Իմ սիրելի ժողովուրդ, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ նա Տավուշի մարզում մարտի ժամանակ ընկավ ձիուց, վնասելով ձախ ոտքը: Այդ իսկ պատճառով մենք ձախ ազդուսկրը կամփոփենք Տավուշի մարզում: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԳ - Ուռա՛...

Ուռաների և համազարկերի ներքո նախագահը ամբիոնից վերցնում և զինվորներին է հանձնում ձախ ազդուսկրը: Մինչ երկու զինվոր ակնածելով նախագահից ստանում են այն, երկուսը արագ ոսկե օրորոցից հանում են ևս մի սովորական օրորոց, նախորդից փոքր: Ձինվորները ազդուսկրը դնում են դրա մեջ:

ՆԱԽԱԳԱՏ - *(ձեռքը ժողովրդի կողմը ուղղած):* Յնձա՛, հայ ժողովուրդ:

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍ - *(սրա-նրա կողքին հայտնվելով, թևքից քաշելով):* Ուզի՛, ուզի՛... Ձրի չցնձաս, ուզի՛:

ՆԱԽԱԳԱՏ - Աջ բազուկը պետք է ամփոփվի Կոտայքի մարզում, որովհետև սա այն ձեռքն է, որ Գեղարդի եկեղեցում երկինք պարզած աղոթում էր իր ժողովրդի համար: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԳ - Ուռա՛...

Ուռաների և համազարկերի ներքո նախագահը ամբիոնից վերցնում և զինվորներին է հանձնում աջ բազ-

կուսկրը: Մինչ երկու զինվոր ակնածելով նախագահից ստանում են այն, երկուսը արագ ոսկե օրորոցից հանում են ևս մի սովորական օրորոց, նախորդից փոքր: Ձինվորները բազկուսկրը դնում են դրա մեջ:

ՆԱԽԱԳԱՏ - Ազգիս փրկչի ձախ բազուկը արժանի է Գեղարքունիքի հողին: Սա այն թևն է, որ լողալով անցավ Սևանը կես օրում և հասավ օգնության: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԳ - Ուռա՛...

Ուռաների և համազարկերի ներքո նախագահը ամբիոնից վերցնում և զինվորներին է հանձնում ձախ բազկուսկրը: Մինչ երկու զինվոր ակնածելով նախագահից ստանում են այն, երկուսը արագ ոսկե օրորոցից հանում են ևս մի սովորական օրորոց, նախորդից փոքր: Ձինվորները բազկուսկրը դնում են դրա մեջ:

ՆԱԽԱԳԱՏ - *(սախի մեջ դրած ի ցույց է պահում զանգը):* Իմ սիրելի ժողովուրդ... Գանգը: Թժվում է, այն հզոր գանգը, ուր ծնունդ է առել մեր ազգային գաղափարախոսությունը, պիտի պահպանվի այստեղ՝ հայրենիքում: Բայց ոչ: Մենք այն կթաղենք Մերձավոր արևելքում, ուր ապրում են մեր բազմաթիվ քրիստոնյա և կրոնափոխ եղած եղբայրները: Նրանք պիտի ունենան հայրենիքի գաղափարը: Գանգի շիրիմը թող ուխտատեղի դառնա հայրենիքի սիրուց և հայրենիքի ցավով տառապող մեր բազմաթիվ եղբայրների համար:

Ուռաների և համազարկերի ներքո
նախագահը զինվորներին է հանձ-
նում գանգը: Մինչ երկու զինվոր ակ-
նածեղով նախագահից ստանում են
այն, երկուսը արագ ոսկե օրորոցից
հանում են ևս մի սովորական օրորոց,
նախորդից փոքր: Ձինվորները գան-
գը դնում են դրա մեջ:

ՆԱԽԱԳԱՆ - *(ձեռքը ժողովրդի կող-
մը պարզած):* Դարերի համար
պահիր նրա պատկերը, ժողո-
վորդ:

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍ - *(սրա-նրա թևքից
քաշելով):* Արժանապատվությունդ
պահանջի, արժանապատվու-
թյունդ պահանջի... Ձրի չանես:

ՕՆԻԿ - *(նախագահին շշուկով զգու-
շացնելով):* Ոսկորները քշություն
կանեն:

ՆԱԽԱԳԱՆ - *(միայն օգնականի հա-
մար, քթի տակ շնջալով):* Հո
կշտանալիք չէ: Ամեն տեղ մի
հատ դրեք, հերիք ա: Մի քանի
հատ էլ պահեք նեղ օրվա հա-
մար:

ՕՆԻԿ - Հատ-հատ գույքագրված ա,
չեմ կարող...

ՆԱԽԱԳԱՆ - Ողնաշարը: *(Բռնելով
ձգում-քարձրացնում է ոսկե թեյին
շարված ողերը):* Այն որպես
խորհրդանիշ կամփոփվի Սյունի-
քում, որովհետև Սյունիքը մեր
հայրենիքի ողնաշարն է: Այն
պետք է այսպիսի հերոսներով ա-
մուր լինի: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

Ուռաների և համազարկերի ներքո
նախագահը ամբիոնից վերցնում և

զինվորներին է հանձնում ոսկե թեյի
վրա շարված ողնաշարը: Մինչ երկու
զինվոր ստանում են այն, երկուսը ա-
րագ ոսկե օրորոցից հանում են ևս մի
սովորական օրորոց, նախորդից
փոքր: Ձինվորները ողնաշարը դնում
են դրա մեջը:

ՆԱԽԱԳԱՆ - Այս հանդիսավոր առի-
թով, հայրենիքին մատուցած մե-
ծագույն ծառայության համար, այն
է՛ ազգիս հերոսաց հերոսի ոսկոր-
ները ժամանակից փրկելու և
դեպի հավերժություն ուղղորդելու
համար, «Պատմահայր» հուշամե-
դալով պարգևատրել գիտնական
Գառնիկ Հախնազարյանին: Ու-
ռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

Ուռաների և համազարկերի ներքո
նախագահը պատմաբանին է հանձ-
նում հուշամեդալը: Պատմաբանը
հուզմունքից ձեռքը կրծքին սեղմած
ստանում է հուշամեդալը, աչքերը
սրբելով հեռանում:

ՆԱԽԱԳԱՆ - Իսկ այժմ, սիրելիներս,
ազգիս դարավոր ցավով տառա-
պող սիրտը...

Դեպի ամբիոն է առաջանում
Գագոն՝ հերոսի սիրտը արծաթե
սկուտեղի վրա դրած և գլխից վեր
պահած, բերում, դնում է ամբիոնին:

ՆԱԽԱԳԱՆ - Ճիշտ կլինե՞ր այս հրա-
բորբ սիրտը, որին հուր-հա-
վիտյան երախտապարտ ենք
հայրենիք ունենալու համար, ամ-
փոփել Հանրապետության

հրապարակում: Բայց չլինենք ե-
սասեր: Ես ինձ իրավունք եմ վե-
րապահում բոլորիս գրկել այս
չքնաղ սրտից և այն ամփոփել
Արևմուտքում, ուր առ օրս դե-
գերում են ցեղասպանությունից
մազապուրծ մեր անթիվ հայրե-
նակիցների սերունդները: Թող
ամեն անգամ այս պատկառելի
սրտի շիրմին այցի գալիս հիշեն՝
հայրենիքի սերն ու սիրտը իրենց
հետ են: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

**Ուռաների և համազարկերի ներքո
նախագահը արծաթե սկուտեղով
վերցնում և զինվորներին է հանձնում
արճաձոր սիրտը: Մինչ երկու զինվոր
ակնածելով նախագահից ստանում
են այն, երկուսը արագ ոսկե օրորոցից
հանում են ևս մի սովորական օրորոց,
նախորդից փոքր: Ձինվորները սիրտը
դնում են դրա մեջ: Երկու զինվոր օրո-
րոցը ծածկում են եռագույնով:**

ՆԱԽԱԳԱՀ - Հայրենիքին մատու-
ցած մեծագույն ծառայության,
այն է՝ ազգային հերոսաց հերոսի
սիրտը հավերժորեն արևածոր
պահելու համար, գեներալ հոչա-
կել թիկնապահների ջոկատի
հրամանատար Գագիկ Մկոյա-
նին: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

**Գագոն հպարտությունից փքված
շտապում է քեմ, նախագահից ստա-
նում գեներալի ուսադիրները: Ապա
ձեռքը կրծքին դնելով ծնկի գալիս,
համբուրում է եռագույնը, որ դրված է
քեմի անկյունում:**

ՆԱԽԱԳԱՀ - Ի վերջո, սիրելի հայ-
րենակիցներ և հարգարժան հյու-
րեր, հերոսն ինքը, այսինքն՝ նրա
ոգին: Սա այն գանձն է, որը մենք
չենք տա ոչ ոքի՝ ոչ սիրուց և ոչ էլ
ատելությունից դրդված: Հերոսի
ոգին պիտի մնա հայրենիքում,
քանզի դա է, որ մեզ հայ է պա-
հում աշխարհի բոլոր ծագերում:
Նա պիտի ամփոփվի պանթեո-
նում, հանճարների և հերոսների
կողքին, այլապես թերի կլինի
մեր ազգային դիմագիծը: Ուռա՛:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռա՛...

**Ուռաների և համազարկերի ներքո
զինվորները հրապարակ են ուղեկ-
ցում Մեերին: Նա բանից անտեղյակ
աջ ու ձախ է նայում, ընդունում-ու-
ղարկում է օդային համբույցներ:**

ՆԱԽԱԳԱՀ - (մատնացույց անելով
կենտրոնում դրված ոսկե օրորո-
ցը): Ահա այս ոսկե հավերժությ-
յան մեջ պիտի ամփոփվի ազգիս
փառապանձ ոգին:

**Ուղեկցող զինվորները Մեերին հրում
են դեպի ոսկե օրորոցը, փորձում
նրան խցկել այնտեղ:**

ՄՀԵՐ - Էս ի՞նչ էք անում: Ես համա-
ձայն չեմ: Ես չեմ ուզում ննջել: Իմ
քունը դեռ չի տանում:

ԶԻՆՎՈՐ - Հիմար մի էդի. դու քո
մահով հայրենիք ես կերտում:

ՄՀԵՐ - Դուք կերտեք, ես չեմ ուզում:
(Փորձում է ազատվել զինվորնե-
րի ձեռքից:)

Ուռաներն ու համազարկերը դադարել են, պետք է արարողությունը շարունակել: Ջինվորները ժամանակ չունեն համոզելու:

ԶԻՆՎՈՐ - Ափսոս, որ էդքան ասույշ ես:

Երկու զինվոր ծածկում են նրան հասարակության աչքից, երրորդը թափով խփում է գլխին: Մեերը ընկնում է զինվորների վրա, որոնք նրան խցկում են ոսկե օրորոցի մեջ:

ՆԱԽԱԳԱՀ - Ազգիս հերոս ոգին դարեդար աննկուն պահելու համար իմ երկու խորհրդականներին պարզևատրում եմ «Փրկիչ» հուշամեդալով: Ուռն:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռն...

Ուռաների և համազարկերի ներքո նախագահը Վաչիկին և Խաչիկին հանձնում է հուշամեդալները:

ՆԱԽԱԳԱՀ - Եվ այսպես, իմ ժողովուրդ, մեր հավերժի երթը սկսված է: Մենք սկսում են մեր ազգային հերոս Գևորգ Բ-ի քսանհինգերորդ՝ հոբելյանական վերաթաղումը: Ամուր պահեք նրա թողած հայրենիքը և ձեր սրտերում վառ՝ նրա հիշատակն ու պատգամները: Քանզի այստեղ... *(մատնացույց է անում օրորոցները)* միայն ժողովրդի արժանավոր զավակը և հերոսը

չէ: Այստեղ մեր հայրենիքն է և ժողովրդի ապագան... Առաջ, դեպի աստվածային հավերժություն: Ուռն:

Նախագահի խոսքերին հաջորդում են համազարկերն ու ցնծության բացականչությունները:

ԺՈՂՈՎՈՒՐԴ - Ուռն, ուռն, ուռն, ուռն...

Ջինվորները մտտենում են օրորոցներից: Հանկարծ աղմուկ է բարձրանում, ամեն ինչ ցնցվում է, իրարանցում է սկսվում, մարդիկ փախչում են, ցրվում աջուձախ:

ԶԱՅՆԵՐ - Երկրաշնորժ, երկրաշնորժ... փախեք:

Բոլորը փախչում են, զինվորները, շարտելով օրորոցները, հետևում են նրանց: Մեերը ուշքի է գալիս, ձգվում օրորոցից դուրս: Չեքքը գցում, բռնում է մեկին:

ՄՀԵՐ - Էս ո՞ր, էս ի՞նչ իրարանցում աս:


ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՅՈՐԴ - Իրարանցում չէ, ջրհեղեղ աս, ջրհեղեղ... փախեք:

ՄՀԵՐ - *(օրորոցից դուրս է թռչում, վազում նրա ետևից):* Իսկ ո՞ր ատապանը, ո՞ր կողմ վազենք:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՅՈՐԴ - Սա ջրհեղեղ աս առանց տապանի, փախի, ուր աչքդ կտրում աս...

Մեերը միանում է փախչողներին:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Սամվել ԽԱԼ ԱԹՅԱՆ

Երբ Արցախյան երկրորդ պատերազմի թնդանդամները դեռևս չեն լուել, երբ հերոսաբար մարտնչող բանակին և նրան ամուր թիկունք դարձած ժողովրդին դավադրաբար պարտադրված պարտությունը հոգեբանական շոկի է ենթարկել ազգին և ողբերգական, քառասային վիճակի բերել հանրային կյանքը, այս մթնոլորտում ստեղծագործելը, մանավանդ՝ հավակնել գրելու ոչ վաղ անցյալի հաղթական գոյապայքարների և ներկայիս մաքառումների թեմայով, խոստովանենք, թվում է անհարկի է և անկարելի: Սակայն ինձ օգնության հա-

սան մանկության և պատանեկությանս տարիներին իմ շրջապատի՝ Եղեռնի, գաղթի տառապալից ճանապարհներ անցած, գոյապայքարի հերոսամարտերում ապրել-հարատևելու իրավունքը անձնուրաց պաշտպանած մարդիկ՝ հայրենադարձված ընտանիքների համար Կիրովականում հապճեպ կառուցված բարաքային «Էվակորազա» թաղամասի հարևաններս: Այդ թաղը մի փոքրիկ Հայաստան էր՝ տարբեր բարբառներով, ուրույն կենցաղով, ճակատագրերով, և ՀԱՅԲ էր՝ ճակատագրի դժնդակ հարվածներին **ողջ ժողովրդով, սերունդ առ սերունդ** դիմագրավելու, տոկալու, հաղթելու, հարատևելու, արարելու, հայրենասիրության ոգեղեն հուրը անթեղած պահելու և եկող սերունդներին ժառանգելու դիցական մթնոլորտով: Ահա հենց սա էլ դարձավ այն հենքը, որի վրա հյուսվեց պիեսի հիմնական ստեղծված ու գաղափարը՝ դիմակայել, չկորցնել ոգու արիությունը, տոկալ և պայքարել՝ համոզված լինելով, որ հաղթանակները չեն նվիրաբերվում, այլ ձեռք են բերվում թշնամու և մեր կյանքը խաթարող ցեղերի դեմ պայքարով:

Եվ մի բան էլ. այս պիեսը հնարավոր է և վավերագրական համարել, քանզի իրադարձությունները և հերոսները մոտացածին չեն և նույնիսկ գլխավոր հերոսների անունները չեն փոխված: Պիեսի գեղարվեստական մտահղացումը, թերևս, նրա կառուցվածքն է՝ ներկայացվող գործողությունների ժամանակակյան հերթագայման խախտումներով և որոշ պատկերային անցումներ, որ թելադրված են պատմությունը բեմական դարձնելու անհրաժեշտությամբ:

ՀՐԱՄԱՅՎԱԾ Է ԱՊՐԵԼ

Դրամա մեկ գործողությամբ, փաստ դրվագով

*Նվիրվում է Արցախյան երկրորդ պատերազմի
նահատակների հիշատակին*

Ներկայացման դրվագները թմբիկի մեջ գտնվող, ծանր վիրավոր Դավթի տեսիլներն են՝ իրադարձությունների, հերոսների ու նրանց տարիքի հերթագայման խախտմամբ:

Ձևավորումը պայմանական է, տվյալ գործողության վայրն առավել ընկալելի է, ինչպես լինում է երագում կամ ենթագիտակցության մեջ:

Ցանկալի է, որ բեմադրիչը պիեսին վերաբերվի որպես ավանգարդիստական կտավի, որին պատկերված հին և նոր առարկաների առնչություններն ու միաձուլումները բեմականացման միջոցով ներկայացնեն հիմնական ասելիքը՝ բոլոր ժամանակներում ժողովրդի և նրա սերունդների միասնական պայքարը՝ հանուն գոյատևման և հարատևման:

Գործող անձինք

ԳԱՎԻԹ - 12-15 տարեկան, ներկայացման ընթացքում տարիքը փոխվում է՝ 20-22 տարեկան

ՍՈՆԱ - Դավթի սերը, 12-15 տարեկան, ներկայացման ընթացքում տարիքը փոխվում է՝ 20-22 տարեկան

ՄՀԵՐ - Դավթի հայրը, հասուն տարիքի

ՇՈՒՇԱՆ - Դավթի մայրը, հասուն տարիքի, ներկայացման ընթացքում տարիքը փոխվում է՝ տարեց

ԽԱԶԻԿ - տարեց

ՇՈՂԵՐ - Խաչիկի կինը, տարեց

ԳԱՐԵԳԻՆ - տարեց

ՀԱՅԿԱԶ - հասուն տարիքի, դերձակ

ԼՈՒՍԻԿ - Հայկազի կինը, հասուն տարիքի

ԲԱԼԱԲԵԿ - հասուն տարիքի, զինվորական վերնաշապիկով, կրծքին՝ Հայրենական մեծ պատերազմի շքանշան

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Բալաբեկի կինը, հասուն տարիքի

ՀՌԻՓՄԻԿ - հասուն տարիքի պչրուհի

ՖԻԳԱՅԻ - երիտասարդ Խաչիկը՝ 18 տարեկան

ՍԱՄՍՈՆ - միջին տարիքի, երկրորդ մուտքին՝ հասուն

ԱՐՇԱԿ - Սոնայի եղբայրը, 25 տարեկան

ՄԱՆՉՈՒԿ - 8-10 տարեկան

Դրվագներում՝ Մուրո, բժիշկ, ասիս-տենտ, բուժքույր, զինվոր, վիրավոր զինվոր, ազերի, լարախաղաց, դեռ-լահար, տարեց բանվոր, երիտա-սարդ բանվոր, Արշակի մայրը:

Չախակողմում աղոտ լուսավորվում է դաշտային հոսպիտալը: Վիրա-հատման սեղանի մոտ բժիշկները մաքառում են վիրավորի կյանքի հա-մար:

ԲԺԻՇԿ - Դավիթ... Դավիթ, չքնես...
Ճնշումը:

ԲՈՒԺ-ԲՈՒՅՐ - Նորմալ է:

ԲԺԻՇԿ - Չքնես, տղաս... Վերջաց-նում ենք, քիչ մնաց: *(Սրտի տրոփյունն արագանում է: Ան-հանգստացած:)* Ճնշումը...

ԲՈՒԺ-ԲՈՒՅՐ - Ընկնում է:

ԲԺԻՇԿ - Ներերակային հեղուկը՝ շի-թով:

ՍՈՆԱՅԻ հեռացող, արձագանքվող ձայնը - Դա՛վիթիթ... Դա՛վիթիթ...

Պատկերը տաքրալուծվում է:

ԴՐՎԱԳ ԱՌԱՋԻՆ

Հին բակ: Ծեփաթափ երկհարկանի տուն: Պարանին՝ լվացք, հենակին հարմարեցված լվացարան, փայտե սեղան, իշտոնուկ, աթոռակներ, երի-տասարդ կաղնեցի:

Աքլորականջով բացվող առավոտ: Տանից դուրս եկած Խաչիկը արևեք թեքվելով խաչակներում, անձայն ա-դաբում է: Մրբիչն ուսին դուրս է գալիս Շողերը:

ՇՈՂԵՐ - Բարլուս, Խաչիկ:

ԽԱՉԻԿ - Բարի լույս, տիկին, հան-գիստ քնացա՛ր:

ՇՈՂԵՐ - *(լվացվում է):* Այ մարդ, ա-սա՛ «քնեցիր», էլի:

ԽԱՉԻԿ - Հանգիստ քնեցի՛ր:

ՇՈՂԵՐ - Հա, ոչինչ: Թեյը դիր պրի-մուսի վրա, հավերին կուտ տամ, գամ: *(Գնում է:)*

Գիրքը քնատակին, դույլով ջուր վերցրած, տանից դուրս է գալիս պա-տանի Դավիթը:

ԴԱՎԻԹ - Բարի լույս, քեռի Խաչիկ:

ԽԱՉԻԿ - Բարև, Դավիթ: Դեռ «Ձո-րի Միրոն» կկարդաս, չավարտե-ցի՛ր:

ԴԱՎԻԹ - «Միրոն» վերջացրի: *(Գիրքը սեղանին թողնելով մո-տենում, ջրում է կաղնին:)* Սա «Ռանչպարների կանչն» է, շատ հետաքրքիր գիրք է: *(Վերադառ-նում, նստում է սեղանի մոտ, բա-ցում է գիրքը:)* Քեռի Խաչիկ, Անդրանիկ զորավարը, Արաբոն, Աղբյուր Սերոբը, Գևորգ Չաուշը իսկապես մեծ հերոսներ են եղել, թե՛ Դաշտենցը գեղարվեստորեն հզորացրել է նրանց:

ԽԱՉԻԿ - Մանչս, երբ հայն իր մաճն ու գուրանը կթողնե, զենք կառ-նե, որ հայրենիքն ազատագրե, ան արդեն իսկ հերոս է: Քո հայրն ալ ճիշտ այդպես հերոսա-ցավ:

ԴԱՎԻԹ - Քեռի Խաչիկ, ո՞նց անեմ, որ նրանց նմանվեմ:

ԽԱՉԻԿ - Տղաս, դուն քո տնկած ծա-ռը կխնամես, այնպես չէ՛:

ԴԱՎԻԹ - Բայց ծառ ջրելն ի՞նչ հերոսություն է...

ԽԱՉԻԿ - Անշուշտ, ծառ ջրելը հերոսություն չէ, սակայն այդ ծառը սնուցող հողը պաշտպանելը հերոսացում է: Մինչև պատերազմ մեկնիլը քո հայրը վարորդ էր, բայց երբ գենք վերցուց, մեկնեց Արցախ՝ արդեն իսկ հերոս է: Ուրիշ հարցեր ունիս, տո՛ւր, քանի դեռ Շողերը հավաբունեն դուրս չի ելեր, դուրս գա նե՛ գլխուս գալիքն արդեն գիտես:

ԴԱՎԻԹ - Քեռի Խաչիկ, մեր բակի բոլոր բնակիչներն էլ բարի են, բայց ամեն օր ինչո՞ւ են իրար հետ վիճում:

ԽԱՉԻԿ - (*մտախոհ*): Երկուշաբթին ծանր օր է, գիտես...

ԴԱՎԻԹ - Բայց նրանք ամեն օր են վիճում: Ցերեկով վիճում են, երեկոյան՝ հաշտվում, կարծես ոչինչ էլ չի եղել:

ԽԱՉԻԿ - Անոնց ողջ կյանքը ծանր երկուշաբթի եղած է, տղաս... Իրենք ի բնե չար չեն, անոնց վեճը կյանքին հետ է: Անփորձանք կյանքի սովոր չեն, ամեն պստիկ բանեն կնեղվին, պաշտպանվիլ կուզեն:

Հավաքնից լսվում է Շողերի աղեկուտը ողբը:

ՇՈՂԵՐ - Վայ, վայ, իմ անմեղ, իմ սիրուն, իմ-իմ անգին ճուտիկ ջան...

ԽԱՉԻԿ - Ահավասիկ, օրը սկսավ:

ՇՈՂԵՐ - (*սասկած ճուտը ձեռքին բակ է մտնում*): Աչքով են տվել... Հա՛, էլի, աչքով են տվել, չար աչքը խավարի, հա՛...

ԽԱՉԻԿ - Նորեն ճո՛ւտ է սատկել:

ՇՈՂԵՐ - Հազար անգամ ասել եմ՝ Խաչիկ, աչքդ ճտերիս վրա պահիր, աչքով չտան... Օրը հազար անգամ աղոթում ես, այ մարդ, մի անգամ էլ ճտերիս համար աղոթիր, էլի...

Աղմուկի վրա դուրս են գալիս Հայկազը՝ կար աներով, Լուսիկը, Գարեգինը, Վարդանուշը, Հռիփսիկը՝ հայելին ձեռքին:

ՇՈՂԵՐ - Վնյ-վնյ-վնյ-վնյ... Խատուտիկս է, ժողովորդ, խատուտիկս է՛...

ՀԱՅԿԱԶ - (*ասեղը թելելով, հեզնական*): Էլի ճուտ ա սատկել: Էդքան սատկում են՝ չարծան:

ՀՌԻՓՍԻԿ - Օ՛, բարքեր, օ՛, ժամանակներ... Հեթանոսական ողբը՝ տիեզերքի նվաճման դարում: Позор!

ԳԱՐԵԳԻՆ - Տիկին, ինչ ըսել է «պագոր»:

ԼՈՒՍԻԿ - (*Հռիփսիկին*): «Պագոր»... իբր թե բան ասավ: Վերքը տիրոջն ա ցավ տալի: Քո ճուտը լիներ, էդ շպարված երեսդ արունվիլի էիր արել:

ՀՌԻՓՍԻԿ - Ֆի՛, գեղջկուտի:

ՇՈՂԵՐ - (*մորմորում է*): Վնյ-վնյ-վնյ-վնյ...

ԼՈՒՍԻԿ - (*Հռիփսիկին՝ սպանակից*): Ի՞նչ ասիր...

ՀԱՅԿԱԶ - (*կարից չկտրվելով՝ Լուսիկին*): Մի խառնվիր, կո՛ւվը գլուխդ կկապեն, ես քու քե՛ֆը չունեմ:

ԼՈՒՍԻԿ - Չէ, ինչ ասիր... Երանի ի-
մանամ, թե ինչ ասիր:

ՀՌԻՓՍԻԿ - Որ չիմանաս՝ երկիրը չի
տուժի:

ԼՈՒՍԻԿ - Երկրին չկպնես, դու էիր
պակաս:

ՀՌԻՓՍԻԿ - Ֆի: Հայոց մայրաքաղա-
քի գավառական պատկեր:
(*Շրջվում, մագափունչը հայելում
ուղղելով տուն է մտնում:*)

ԼՈՒՍԻԿ - (*Նրա ետևից չանչ անելով*):
Գրողս ուտես, դե արի ու սրա
հետ հարևանություն արա:

ՇՈՂԵՐ - Վնյ-վնյ-վնյ-վնյ... Աչքից
է եղել, ժողովորդ, աչքից...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - (*լվացքը պարանից
հավաքելով*): Ա՛յ կնիկ, մէ օրմ
կեղնի՞ օր Աստծու լուսը չհարա-
մես: Ամո՞թ է, ամո՞թ: Երկու հա-
րուր ճտից մեկն էլ կսասկի խո...

ՇՈՂԵՐ - Ճտի տեղը դու պիտի լի-
նեիր, դո՛ւ, որ լաց չլինեիր...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Անամո՞թ: (*Փութկոտ
տուն է մտնում:*)

ՇՈՂԵՐ - Գլուխդ հողեմ, ջադո՛ւ, ու-
րեմն քու կարծիքով ճուտը մարդ
չի՛, որ սասկել է՝ լաց ըլնել պետք
չի՛, քյավթան:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - (*դուրս է գալիս*): Ին-
չըդ ես թաղի բուդիլնիկն էղնիս,
տնաշեն... (*Տուն է մտնում:*)

ՇՈՂԵՐ - Տո՛, բուդիլնիկն էլ ես, ոա-
դիոն էլ ես, դեռ... դեռ... ցիվիլի-
զացիան էլ: Դե՛ գնա:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - (*դուրս է գալիս, ձեռ-
քերը կանթում*): Իդիկ ինչ մեղքս
էր:

ՇՈՂԵՐ - Շաշ կոռ ես, է՛, եկար քա-

ղաք, մարդ դարձար ու ճտին էլ
հավան չես:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Անամո՞թ: (*Շրջվում է,
որ տուն մտնի՝ շեմքին ընդհար-
վում է դուրս եկող ամուսնուն,
երկյուղած ընկրկում է:*)

ԲԱՆԱԲԵԿ - (*խիստ*): Տուն մտի: Բա-
րի լույս, Խաչիկ ջան:

ԽԱՉԻԿ - Բարև, Բալաբեկ:

ԲԱՆԱԲԵԿ - Ի՞նչըդ ես, Խաչիկ ջան:

ԽԱՉԻԿ - Իշտե:

ԲԱՆԱԲԵԿ - Լավ էդի, ախպեր ջան,
լավ էդի... (*Իբր նոր է նկատում
Շողերին:*) Բարև, քուրս: Վայ, էդ
ինչ է էդե... վանի-վանի-վանի, ափ-
սու չէր: Աչքից էղած կեղնի:
Վանի, վանի, վանի... Հա՛, չար
աչքն էնպես բանըմ է, օր ծանրած
կովը կտրաքի: Բեր, բեր, քուրս...
Իդիկ էլ շնչավոր է, բեր հողավո-
րենք: (*Ճուտը վերցնում է Շողերի
ձեռքից:*) Խաչիկ ախպեր, քելե,
քելե երթանք հողավորենք:

ԽԱՉԻԿ - (*զլխահակ*): Շուկա պիտի
երթամ:

ԲԱՆԱԲԵԿ - Իմ էլ թոշակը չեն բերե,
փոստ կերթամ: Քելե, քելե եր-
թանք: (*Թևանցուկ՝ Խաչիկին բա-
կից դուրս է բերում:*)

ՇՈՂԵՐ - (*Բալաբեկի ետևից չանչ է
անում*): Կտանի՛, գառան պես խե-
լոք մարդուս կխմացնի՛, փալասի
պես կբերի, կգցի տուն: Չունե-
նամ ձեզ պես հարևանը...
(*Շրջվում, նկատում է Դավթին:*)
Դո՛ւ ինչի ես տնկվել: Ուրախա-
նում ես, հա՛: Իմ ճտերը ձեր կո-

տեմից են սատկում, կմեռնե՞ք՝
համեմ ցանեք:

ԳԱՎԻԹ - Շողեր մորաքույր, մերը
հենց համեմ է:

ՇՈՂԵՐ - Ուրեմն համեմից են սատ-
կում, մեկ էլ հորդ կապիտալիս-
տական ավտոյի ծխից: (*Տուն է
մտնում:*)

**Պարկը ուսած՝ տնից դուրս է գալիս
Գարեգինը:**

ԳԱՐԵԳԻՆ - (*շեմքից գոռում է*): Աղի-
բուղի, աղի-բուղի, աղի-բուղի...

**Դուրս է գալիս Հայկազը՝ կրկնա-
բաճկոն հագած, մի քանիսն էլ՝ ձեռ-
քին:**

ՀԱՅԿԱԶ - Այ մարդ, փողոց դուրս ա-
րի, նոր գոռա, էլի... Մարդ լեղա-
ճաք է լինում սրա ձայնից...

ԳԱՐԵԳԻՆ - Է՛, դուն ալ կանչե, քե-
զի ո՞վ խանգարեց:

ՀԱՅԿԱԶ - Ես կանչեմ-չկանչեմ, ամ-
բողջ աշխարհը գիտի, որ ես Տե-
լեգրեյկա Հայկազն եմ: Շուկայում
գլուխս տեսնում՝ վրա են պրծնում:
Ես Գարեգինը չեմ, որ ժամերով
բարդուրին նստեմ:

ԳԱՐԵԳԻՆ - «Բարդուրին» ինչ ըսել
է...

ՀԱՅԿԱԶ - Որ հայերեն չգիտես, քեզ
հետ էլ ինչ խոսեմ: Արի, արի, օրը
ճաշ դառավ: (*Դուրս են գնում:*)

**Մեռակ մնալով, Դավիթը հակվում է
գրքին: Նրա թիկունքում երևակվում է
Մեերը՝ զինվորական համազգես-
տով:**

ԳԱՎԻԹ - (*նրան չնայելով*): Էլի ե-
կար:

ՄՀԵՐ - Ես միշտ ներկա եմ, տղես:
Ոչ մի տեղ չեմ գնացել:

ԳԱՎԻԹ - Հայրիկ, ինձ հետ տաք-
րինակ բաներ են կատարվում:
Ես պատմություններ եմ տեսնում,
որոնք գուցե վաղուց են եղել,
բայց ես այնտեղ չեմ եղել:
Նրանք ինձ ճանաչում են, ինձ
հետ խոսում...

ՄՀԵՐ - Դու իմ ու պապիդ հետ կա-
տարվածն ես տեսնում, տղես:
Հողը, բակը, տունն իրենց հիշո-
ղությունն ունեն: Հիշողությունն
արթնանում է, ապրողներին հի-
շեցնում նախնիների կյանքն ու
փորձը:

ԳԱՎԻԹ - Բայց ինչո՞ւ եմ հենց ձեր
կյանքը տեսնում:

ՄՀԵՐ - (*հոգոցով*): Ծանր հարց ես
տալիս... Դավիթ, տղաս, թե՛ ես
ու թե՛ քո պապը չծերացանք: Պա-
պիկդ գոհվեց Արցախյան գոյա-
մարտի ժամանակ, ես՝ Ապրիլյան
քառօրյայի: Մենք մեր կյանքը կի-
սատ ապրեցինք: Դու ես մեր
շարունակությունը և քո հիշո-
ղության մեջ արթնանում են մեր
կյանքի պատմությունները: Հողը
մոտո՞ղ է...

ԳԱՎԻԹ - Հա, իհարկե, մայրիկը
կարել է պիջակիս աստառին, որ
միշտ ինձ հետ լինի:

ՄՀԵՐ - Մշուց բերված հող է, տղաս:

ԳԱՎԻԹ - Գիտեմ, պատմել ես:

ՄՀԵՐ - Նեղն ընկնես՝ խորհրդակ-
ցիր հետը, քեզ ուժ կտա:

ԴԱՎԻԹ - Հայրիկ, հողը միշտ քո մոտ է եղել, ճիշտ է:

ՄՀԵՐ - Իմ հետ էլ, պապիկիդ հետ էլ:

ԴԱՎԻԹ - Բա ինչո՞ւ ձեզ չպաշտպանեց, երկուսդ էլ զոհվեցիք:

ՄՀԵՐ - Այդ մենք պիտի նրան պաշտպանենք, Դավիթ, մենք, որ նրանից ուժ ստանանք, կարողանանք անմահանալ հայրենիքի հետ:

ԴԱՎԻԹ - Դուք անմահացա՞ք:

ՄՀԵՐ - Քեզ՛նով, տղաս, քեզ՛նով...
(*Հեռանալով՝ անխնայ է :*)

ԴՐՎԱԳ ԵՐԿՐՈՐԳ

Ամայի բակը: Մտնում է Սոնան:

ՍՈՆԱ - (*շուրջը նայելով համոզվում է, որ հետևող չկա, փոքրիկ քար վերցնելով շարտում է պատուհաններից մեկին*): Դա՛վիթ... Դա՛վիթ...

Արագաքայլ մտնում է Մամսոնը՝ գալիֆե շավարով, զինվորական կոշիկներով:

ՍԱՄՍՈՆ - (*խուզարկու աջ ու ձախ նայելով*): Ախչի, Ասատուրի աղջիկ, հալա մոտ արի:

ՍՈՆԱ - (*մանրաքայլ մոտենում է*): Բարև ձեզ:

ՍԱՄՍՈՆ - Բարև: Գիտես, չէ, որ ես թաղային կոմիտեի լիազորն եմ և պարտավոր եմ ամեն ինչ իմանալ: Քիչ առաջ էստեղ ինչ աղմուկ էր:

ՍՈՆԱ - Ճուտ էր սասկել:

ՍԱՄՍՈՆ - Ափսո՛ս...

ՍՈՆԱ - Հա, ափսոս էր:

ՍԱՄՍՈՆ - Գլխիդ զոռ մի տուր, ճտի ափսո՛սը որն է... Բա դու ինչի՞ ես կանգնել, ո՞ւմ ես սպասում:

ՍՈՆԱ - Դավթին:

ՍԱՄՍՈՆ - Էս վերջերս շատ չե՞ք իրար սպասում:

ՍՈՆԱ - Մենք համադասարանցիներ ենք: Դասերը միասին ենք սովորում: Որոշել ենք դպրոցն ավարտել, ընդունվել բուհ:

ՍԱՄՍՈՆ - Սպա՛կոյնո՞՛... Էդ ի՞նչ շայկա է, ղեկավարն ո՞վ է:

ՍՈՆԱ - Ինստիտուտ է:

ՍԱՄՍՈՆ - Այսինքս:

ՍՈՆԱ - Դե... ինստիտուտ է՝ բուհ, բարձրագույն ուսումնական հաստատություն: Բանասեր ենք դառնալու:

ՍԱՄՍՈՆ - Ուրեմն, ասում ես՝ բուհը ինստիտուտ է... Վատ հոտ է գալի՛ս... Էդ ի՞նչ տեսակ ինստիտուտ է, իմացար, որ ինժեներ չե՞ք դառնալու, լյոտչիկ չե՞ք դառնալու, արհեստ չե՞ք սովորելու:

ՍՈՆԱ - Դա էլ է մասնագիտություն, քեռի Մամսոն:

ՍԱՄՍՈՆ - Հաշիվը մեկ է: (*Մաս է թափ տալիս*): Կուրսից շեղվել եք՝ աչքներդ կհանեմ: (*Փոթկոտ դուրս է գնում*):

Լսվում է մոտեցող Բալաբեկի, Գարեգինի, Հայկազի, Խաչիկի երգը: Սոնան դուրս է փախչում: Գինովցած, օրորվելով մտնում են հարևանները՝ ամեն մեկը մի բաճկոն

հագած: Գարեգինը հազիվ է բերում ուսած պարկը, Խաչիկը կոթնած է Դավթի ուսին:

ԲՈԼՈՐԸ - *(գոռոցով երգում են).*

Առաքել, Մուշեղ,

Լեռներուց իջան,

Ավերակ ջաղաց, հոգի ջան,

Գոսան օթևան...

Բակ մտնելով բաճկոնները հանում, վերադարձնում են Հայկազին:

ԲԱԼԱԲԵԿ - Դե, ձեզի մեռնիմ, քելեք քիչըմ հանգստացեք: *(Խոնարհաբար սեղմում է Խաչիկի ձեռքը:)*

Դու ողջ էղնիս, Խաչիկ ախպեր, ճտի մնացած կյանքը քու վրա էղնի... *(Օրորվելով տուն է մտնում:)*

ԳԱՐԵԳԻՆ - *(Խաչիկի ձեռքը սեղմելով):* Աստված հոգին լուսավորե: *(Պարկի ծանրությունից հակելով տուն է մտնում:)*

ՀԱՅՎԱԶ - Խաչիկ ախպեր, Աստծով մխիթարվես... *(Բաճկոնները թևին դարսելով:)* Ի՞նչ ասեմ... Ինչ լինում է, մրսելուց է լինում: Էս աշխարհում տաք մնալուց ոչ ճուտ ա սատկել, ոչ էլ մարդ ա մեռել... *(Օրորվելով՝ դեպի տուն:)* Այ, եթե ճուտդ... ճո՛ւտդ... տելեգրեյկա հագած լինեք, ֆյուն...

ԽԱԶԻԿ - *(երգում է):* Դե զարկեք, զարկեք... Դե զարկեք քաջ-քաջ... *(Դավթի օգնությամբ նստում է ծառի տակ:)* Տիրոջ սուրբ կամքով, հոգի ջան... Մենք կերթանք առանց... Դավիթ, ի՞նչ ծառ է աս ծառը, գիտես:

ԴԱՎԻԹ - *(կողքին նստելով):* Իմ տնկած ծառն է, ո՞նց չգիտեմ, կաղնու ծառ է:

ԽԱԶԻԿ - Ապրիս: *(Կարճ դադար:)* Է՛հ, աշխարհ, աշխարհ... Դեռ քանի՛-քանի ծառ կա, որ ջուր կուզե, քանի՛-քանի ծառ զինվորի արյունով սնվեցավ և ոչ՝ աղբյուրի ջրով: Դուն Աղբյուր Սերոբը գիտես:

ԴԱՎԻԹ - Իհարկե գիտեմ: Խիզախ հայդուկապետ էր: Նրան հայի դավաճանությամբ գլխատեցին:

Գալիս է Սամսոնը:

ՍԱՄՍՈՆ - *(չորս կողմը խուզարկու նայելով, Խաչիկին):* Բարև, հարազատ, ո՞նց ես:

ԽԱԶԻԿ - Իշտե:

ՍԱՄՍՈՆ - Արևկող ես անում, հա՛:

ԽԱԶԻԿ - Ատանկ է:

ՍԱՄՍՈՆ - Ճիշտ ես անում, քու ցավը տանեմ: Որ եկել ես հայրենիք, ուրեմն էս արևից քեզ էլ է հասնում: Արևը ժողովրդինն է, աշխատավոր մասսաներինը:

ԽԱԶԻԿ - Շնորհակալ եմ, հոնտեղ արևը կապիտալիստներունն էր:

ՍԱՄՍՈՆ - Ի՛-յան... Էդ որտեղ:

ԽԱԶԻԿ - Ֆրանսիա:

ՍԱՄՍՈՆ - Էդ ո՞նց:

ԽԱԶԻԿ - Անանկ:

ՍԱՄՍՈՆ - Բա չտեսար էս կողմերում ով էր ֆուտբոլ խաղում: Խփեցին, դամկոմի շուշեն կոտրեցին:

ԽԱԶԻԿ - «Ֆուտբոլը» անգլիերեն բառ է, գիտես:

ՍԱՄՍՈՆ - Ի-յա՛... էդ լակոտներին տես, է... (Փութկոտ հեռանում է:)

ԽԱՉԻԿ - (նրա ետևից նայելով՝ անհույզ): Սամսոնը վատ մարդ է:

ԴԱՎԻԹ - Ինչո՞ւ, քեռի Խաչիկ, քեզ ինչ վատ բան է արել:

ԽԱՉԻԿ - Տղաս, մարդ մը, որ խելքի փոխարեն պաշտոնը կօգտագործես և ոչ թե խելքը պաշտոնին մեջ՝ վատ մարդ է: Ինչո՞ւ, գիտես: Անխելք պաշտոնավորը խելացի մարդը կկապկե և ամեն ինչ հակառակը կընես, իր շահի համար կընես: Հասկցա՞ր...

ԴԱՎԻԹ - Հասկացա:

ԽԱՉԻԿ - Ապրիս: Կրնանք ըսել՝ երկրագնդի վերա քանի հայ կապրի:

ԴԱՎԻԹ - Մի տեղ կարդացել եմ... Եթե չեմ սխալվում, մոտավորապես...

ԽԱՉԻԿ - Ալ մի շարունակե: Ինչ թիվ էլ ըսես՝ սխալ է:

ԴԱՎԻԹ - Բայց գրքում եմ կարդացել, քեռի Խաչիկ:

ԽԱՉԻԿ - Սխալ է, տղաս, սխալ է: Հայ ժողովուրդը բոլոր դարերուն ատենը դավաճաններ ունեցած է: Դուն դավաճաններուն հայ կհամարես... Աղբյուր Սերոբին մատնած Ավեին հայ կհամարես, Անի մայրաքաղաքը Բյուզանդիային հանձնած Վեստ Սարգիսին ու Պետրոս Գետադարձին հայ կհամարես... Այնպես որ, Դավիթ, հիշե, մեր թաղամասին մեջ հայերու թիվը մեկով պակաս է: Թաղային Սամսոնին հանես մեջտեղեն: (Ստուգելով՝ լսող չկա՛, կիսա-

ձայն:) Անիկա մատնագիր գրող է, 47 թվականին անոր մատնությամբ շատերն արքայվեցան Սիբիր:

ԴԱՎԻԹ - Իմ հայրն ինչպիսի՞ մարդ է, քեռի Խաչիկ:

ԽԱՉԻԿ - Քո հայր Միերն ալ, քո մայր Շուշանն ալ բարի մարդիկ են, տղաս: Սոնան ալ աղվոր աղջիկ է:

ԴԱՎԻԹ - (շփոթված ոտքի է ելնում): Ի՞նչ Սոնա...

ԽԱՉԻԿ - Ասատուրին աղջիկը: Հանես, պատի տակ թաքնված քեզի կապասե:

Մշուշ: Մրտի տրոփյուն: Չախակողմից դանդաղ քայլերով մտնում է գինվորական համագեղատով Միերը՝ ինքնաձիգն ուսած: Հասնելով Դավթին, անցնում է նրա կողքով, նրա ուսին թողնելով գեները՝ դուրս է գնում:

ԴՐՎԱԳ ԵՐՐՈՐԳ

Բակը: Շուշանը, աթոռակին մատած, պաշտպանական ցանց է հյուսում: Մտնում են Շողերը, Վարդանուշը՝ մեծ փաթեթներով, Լուսիկը՝ մի քանի բաճկոն ձեռքին, Հռիփսիկը՝ մազկտան քայլվածքով:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Էս ինչ լավ գործի ես, Շուշան ջան: Ֆոնոստ բդի դրգեն:

ՇՈՒՇԱՆ - Հա, ոսգմաճակատի համար է:

ՇՈՂԵՐ - Դե, սրանք էլ վերցրու: (Ձեռքի փաթեթը ցած է դնում): Փափուկ բալիշներ են՝ իմ հավերի բմբուլներից:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - (իր փաթեթը տալով): Բրդից տաք գուլպաներ են, ես եմ գործե: Բարով հագնի՛ն, բարով ետ գան:

ԼՈՒՍԻԿ - (բաճկոնները փաթեթների մոտ տեղավորելով): Էս էլ մեր կողմից: Հայկազիս կարած տելեգրեյկաներն են:

ՇՈՂԵՐ - Բա Դավիթն ո՛ր է, իմացանք, որ ինքն է ռազմաճակատ ուղարկվող օգնություններ կազմակերպողը:

ՇՈՒՇԱՆ - Դավիթը ետնաբալում է: Սրանք կհանձնեմ իրեն, շնորհակալություն:

ՀՈՒՓՍԻԿ - (շեշտված հանդիսավորությամբ առաջանում, դրամապանակից փող է հանում, մեկնում Շուշանին): Սա էլ՝ իմ կողմից: Իմ խնայողություններն են:

ՇՈՒՇԱՆ - Շնորհակալություն:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Մենք ենք շնորհակալ, օր դուք ըսպես լավ գործ եք բռնե, աղջիկ ջան: (Կատակով): Հռիփսիկը փողն ինչ պղի է՛նե, ներկ պղի առնե, քսե երեսին, էլի:

ՀՈՒՓՍԻԿ - Վարդանուշ, էս սուրբ օրով բերանս բացել մի տուր:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Տո քելե, Հռիփսիկ ջան, դու էրբ ես քեզի փակ պահե, օր էսօր ծածկվիս:

Հարևանուհիներն անքեն ծիծաղելով դուրս են գնում: Բջջայինով խոսելով բակ է մտնում Արշակը՝ զինվորական համազգեստով:

ԱՐՇԱԿ - Դավիթ, Արշակն է, ձեր բալում եմ, բեռնատարը բերեցի: Լավ, սպասում եմ: (Մտնելու է Շուշանին): Բարև ձեզ, Շուշան մորաքույր:

ՇՈՒՇԱՆ - Դո՛ւ ես, Արշակ ջան, բարի օր: Նստիր: Տեսա՛ր, աշխարհն էլի ոնց խառնվեց, այ բալա:

ԱՐՇԱԿ - (նստելով): Հե՛չ չմտածես, հաղթելու ենք:

ՇՈՒՇԱՆ - Իհարկե, հաղթելու ենք: Միայն թե... մտադիր էիք էս աշուն քրոջդ՝ Սոնային, Դավթիս հետ նշանենք, էս էլ... (Ջննելով նրա համազգեստը): Էս ռազմաճակատ ես մեկնում:

ԱՐՇԱԿ - Վաղն առավոտյան: Դավթի հետ կզնանք, օգնությունները կհանձնենք ու կմիանանք մերոնց:

ՇՈՒՇԱՆ - Դավթի... ասացիր՝ Դավթի հետ...

ԱՐՇԱԿ - Հա: Ինքը ձեզ բան չիասել:

ՇՈՒՇԱՆ - (մտախոհ): Ասել է... Դեռ ծնված օրից է ասել...

Մտնում է երիտասարդ Դավիթը, Արշակի հետ ջերմ ողջագուրվում, նստում է ազատ աթոռին:

ԴԱՎԻԹ - Մամ, շատ կա՛մ, որ ավարտես:

ՇՈՒՇԱՆ - Մի ժամվա գործ մնաց:

ԴԱՎԻԹ - Մամ, ուզում եմ քեզ բան ասել:

ՇՈՒՇԱՆ - Մի ասա, տղես, արդեն գիտեմ:

ԴԱՎԻԹ - Գիտես... (Շուշանը չի պատասխանում: Առժամանակ լուռ են): Ինչո՞ւ չես խոսում:

ՇՈՒՇԱՆ - Խոսում եմ, տղես, բա չեմ խոսում... խոսում եմ: (*Պաղատագին:*) Ետ կգաս: Ետ կգաս, Դավիթ, մեր պատին լուսանկարի տեղ չկան...

Մրտի տրտվյուն: Մշուշուտ, թույլ լուսավորվում է դաշտային հոսպիտալը:

ԲԺԻՇԿ - Տամպոն: (*Բուժքույրը վիրախճուժ է տալիս: Ասիստենտին:*) Զգույշ, սիներակն է:

ԱՍԻՍՏԵՆՏ - Նկատել եմ, բժիշկ:

ԲԺԻՇԿ - Լայնիչ: (*Բուժքույրը մեկնում է գործիքը:*) Ավելի մեծը, բեկորն այստեղ կարծես շեղակի լայն է: (*Բուժքույրը նորն է տալիս:*) Համբերիր, տղաս, վերջին բեկորն է, համբերիր...

ԴԱՎԻԹ - Հողը... հողը... հողը...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Բժիշկ, ինչոր բան է ասում:

ԲԺԻՇԿ - Ասա, Դավիթ, խոսիր, խոսիր, տղաս...

ԴԱՎԻԹ - Հողը...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Հողը... Ասաց՝ հողը...

ԲԺԻՇԿ - Այստեղ է, այստեղ... Մի խոսիր, բայց չքնես... Հողն այստեղ է...

ԱՍԻՍՏԵՆՏ - Ի՞նչ հող:

ԲԺԻՇԿ - Երբ պիջակը հանում էի, ձախ ծոցագրպանից արյունոտված քսակ ընկավ: Պարզվեց, մեջը հող է ու տետրի թուղթ, վրան գրված՝ «Մշո հող»... Երևի թալիսման է պահում:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Այ քեզ բան...

Վիրահատությունը շարունակվում է: Դեմ դիմաց կանգնած երևակվում են Սեբեռն ու Դավիթը՝ զինվորական համազգեստներով, ինքնաձիգերով:

ՄՀԵՐ - Հիշիր, տղաս, մեր նախնիներն իրենց բնաշխարհը հոր անունով կոչեցին՝ հայրենիք, լեզուն մոր անունով՝ մայրենի: Եվ իրենց սերունդներին ավանդեցին՝ մայր հայրենիք: Այն ավելի թանկ է, քան կյանքը:

ԴԱՎԻԹ - Հայրիկ, ինչո՞ւ այդ մասին ինձ ավելի վաղ չէիր ասում:

ՄՀԵՐ - Քո հերթը դեռ չէր եկել, տղաս:

Երևակվում են Շուշանն ու Արշակի մայրը, նրանց դեմ-դիմաց կանգնած են զինվորական Դավիթն ու Արշակը: Անխոս հառված են միմյանց:

ՍՈՆԱ - (*դրսից*): Դավիթ... Դավիթ... (*Վազքով մտնում, նրանց տեսնելով՝ կարկանդակում, ասպա խոնարհ մոտենում, կանգնում է մայրերի մեջտեղում:*)

ԴԱՎԻԹ, ԱՐՇԱԿ - (*միմյան*): Սոնա... մամային լավ կնայես:

ԴՐՎԱԳ ՉՈՐՐՈՐԳ

Բակը: Երեկո է: Բալաբեկն ու Սեբեռն մարդի են խաղում, Հայկազը թել-ասեղով կար է անում, մյուս հարևան-հարևանուհիները զրուցում են: Պատանի Դավիթն ու Սոնան էլ են այստեղ:

ԳԱՐԵԳԻՆ - (*շարունակում է սկսած պատմությունը*): Այդ տղան քովս

բերեք,- ըսավ յուզբաշին: Ինձի մոտ տարին...

ԽԱՉԻԿ - (*դիտումամբ ընդհատում է*): Օր մը, Փարեգին մեջ կոշկակար Փանոսը հանդիպեցավ: Գարեգին, Փանոսը կհիշէս:

ԳԱՐԵԳԻՆ - Այո, կհիշեմ... (*Շարունակում է խոսքը*): Դուն որո՞ւ տղան ես,- հարցուց յուզբաշին: Արամի,- ըսի: Անո՞ր,- մատը տնկեց կախաղանը...

ԽԱՉԻԿ - (*դարձյալ ընդհատում է*): Աս կոշկակար Փանոսը, կոշիկ նորոգելուն ատենը, կրունկին մեջ ոսկի գտած էր: Գարեգին, սա պատմությունը պետք է որ լսած ըլլաս:

ԳԱՐԵԳԻՆ - Լսած եմ, ջանմ... Անո՞ր,- մատը տնկեց կախաղանը: Ոչ,- ըսի և երեսս դարձուցի դեպի հայրս, որ քրոջս գրկած, ջախջախված գլխով ինկած էր...

ԽԱՉԻԿ - (*ընդհատում է*): Ծո, մոռցա ըսել, երեկ գիշեր քնացա, երազ տեսա... Ավանակն ինչ է:

ՀԱՅԿԱՋ - (*գործից չկտրվելով*): Հարստություն է:

ԽԱՉԻԿ - Հիտուսի ավանակն էր:

ԲԱԼԱՐԵԿ - (*խաղից չկտրվելով*): Աստծու կողմից հարստություն կստանաս:

ԽԱՉԻԿ - Հարցուց, թե Գարեգինն առնող է, չուզեր արքայության դռներն իր առջև բացվին:

ՀԱՅԿԱՋ - Յա՛, այ՛ մարդ, գոնե երեսին մի ասա:

ՄՇԵՐ - Երագդ լույսին լինի, Խաչիկ, շատ վատ երագ ես տեսել մեր

Գարեգինի վրա: (*Բախարեկին*): Ջառդ գցի:

ԳԱՐԵԳԻՆ - (*անհանգստացած*): Իրանվ կըսես:

ԽԱՉԻԿ - Իրավ:

ՀՌԻՓՄԻԿ - (*հայելու մեջ իրեն զննելով*): Երագներն, իհարկե, նախագուշակ են, բայց գիտությունը հերքում է երագների կանխատես լինելը:

ԳԱՐԵԳԻՆ - (*վախեցած խաչակնքում է*): Տիրոջ կամքն է:

ԽԱՉԻԿ - Ապրիս: Հազար տարիե ի վեր Հիտուսի համար ավանակություն եմ ըրե, ըսավ, հոգնեցա:

ԳԱՐԵԳԻՆ - Ավանակն ըսավ:

ԽԱՉԻԿ - Այո: Հիտուսը արձակեց գիս, ըսավ, Գարեգինը ինձի պիտի փոխարինե:

Ծիծաղ է պայթում:

ՀԱՅԿԱՋ - Վայ, Գարեգին, վայ, լավ վախեցրեց քեզ Խաչիկը:

ԳԱՐԵԳԻՆ - Չվախացա, ջանում... Երեկ գիշեր ես ալ երագ տեսա: Ասկյարները հարձակվել էին, կոտորած էր... Տուները այրեցին, թալանեցին, մորթեցին...

ԽԱՉԻԿ - (*հուզված*): Բավական է:

ԳԱՐԵԳԻՆ - ...եղբորս կապեցին ծանեն, սուրը բարձրացրին, որ սիրտը մխրճեն, ճչացի...

ԽԱՉԻԿ - (*վրդովված*): Բա՛վա՛կ-կան է:

ԳԱՐԵԳԻՆ - (*չընկալելով*): Ինչ ըսիր...

ԽԱՉԻԿ - Բավական է, մարդ: Ուրիշ պատմություն չունի՞ս աս երեխա-

ներու մոտ պատմելու: Ես դիտմամբ խոսքը կփոխեմ, դուն դարձյալ նախճիր կպատմես:

ԳԱՐԵԳԻՆ - (*նեղացած*): Է՛, ես իմ պատմությունս կհիշեմ...

ԽԱՉԻԿ - Ատ չէ՛ քո պատմությունը:

ԳԱՐԵԳԻՆ - (*զգուշավոր*): Խաչիկ...

ԽԱՉԻԿ - Այսքան շուտ մոռցար:

ԳԱՐԵԳԻՆ - Խաչիկ... հիվանդ ես:

ԽԱՉԻԿ - Ո՛չ, շատ առողջ եմ: Դուն հայդուկ Գարեգինը չե՛ս, ինչո՞ւ կմոռնաս և կհիշես միայն խեղճ մանկությունդ:

ԳԱՐԵԳԻՆ - (*վախեցած*): Խենթեցա՛ր: Կազեբեն կարոտեցիր:

ԽԱՉԻԿ - Ամենևին: (*Դալթին.*) Դուն, տղաս, մտիկ մի ըներ նման պատմություններու: Հայր և՛ զենք բռնել գիտե, և՛ հաղթել գիտե:

ԴԱՎԻԹ - Գիտեմ, Խաչիկ քեռի, իմ պապիկն ու հայրիկն էլ են կովել ու հաղթել: Ճիշտ է, հայրիկ:

ՄՀԵՐ - (*սարդին փակելով*): Ճիշտ է, տղաս:

ԽԱՉԻԿ - (*Դալթին*): Կեցցեն: (*Գարեգինին.*) Դուն ինչո՞ւ կվախնաս, Գրգո՛: Մուսալեռի կովին թուրքը չկրցավ Գրգոյին սպանել, դուն ինչո՞ւ կթաղես քեզի:

ԳԱՐԵԳԻՆ - (*զլխահալ*): Դուն չվախցար, ու կյանքիդ կեսը Սիբիրը կերավ... Մոռցա՛ր:

ԽԱՉԻԿ - Ո՛չ: Սիբիրն ալ չեմ մոռցած, տովարիչ կազեբեն ալ չեմ մոռցած, թոնիրի մեջ նետված մայրիկիս ալ չեմ մոռցած: Բայց ամենեն շատ կուզեմ Գեչրլուն

հիշել, և կհիշեմ: Այո՛, կհիշեմ:

ՀԱՅԿԱԶ - Գեչրլուն... Մեր Հոկտեմբերյանի շրջանի Գեչրլու գյուղը:

ԽԱՉԻԿ - Ոչ: Մեր Սարդարապատի Գեչրլու գյուղը:

ՀԱՅԿԱԶ - Վանի: Դու Փարիզից չե՛ս հայրենադարձվել:

ԽԱՉԻԿ - (*խոր շունչ է քաշում, զսպված հանդարտությամբ*): 1921-ին Պարսկաստանով Ֆրանսիա անցա:

ԲԱԼԱԲԵԿ - (*զարմացած*): Հըբբ... Գեչրլուն...

ԽԱՉԻԿ - Ատ 18 թվին էր, մայիսի քսաներեքը: Շքի փաշայի գորքը գրավված էր Գեչրլուն: Պարոն Պողոսբեկ Փիրումյան մեզի հրաման տվավ՝ հարձակվի՛ր...

ԲԱԼԱԲԵԿ - Վերջը...

ԽԱՉԻԿ - Մահապարտներու մեր վաշտը ատ հրամանին կսպասեր: Եթե անգամ հրաման չըլլար, մենք խենթեցած էինք վրեժեն: Թյուրքը գրաված էր Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը և արդեն Երևան կարշավեր: Մայիսի 21-ին ասկյարը Սարդարապատ կայարան և գյուղը մտավ, ավերեց Գեչրլուն... Այ՛ նահանջի տեղ չկար, զենքը ձեռքին մեռնիլը պատիվ էր: Մենք խենթեցած էինք, և հրամանը ճիշտ պահուն եղավ: Գրոհի ելանք: Ասկյարները հրետանին գործի գցեցին, բայց ուշ էր արդեն, ձեռնամարտի նետվեցանք: Մեր ամեն մեկ քայլը Հայաստանը ետ կրերեր: Քայլ

առ քայլ մեր հողը մեզի կուգար...
Ձեռնամարտի պահուն օնբաշին
ետ ցատկեց և մաուզերը ուղղեց
վերաս: Աչքը աչքիս առավ... Ձեմ
գիտեր, ինչ տեսք ունեի, որ առ
շունը սարսափեց, ճչաց ու զենքը
վար նետելով փախավ... Մենք
բոլորս ալ նույն տեսքն ունեինք...

Գաղափար:

ՀԱՅԿԱԶ - Հայի բախտ է... Հաղթում
ենք, հաղթում, երկիրն ուրիշի ենք
տալիս:

ԽԱՉԻԿ - Հայու բախտ չէ: Հայու
կարճ հիշողություն է: Կհաղթե ու
կկարծե, թե թշնամին այլևս իր
բարեկամը դարձավ, կմոռնա, որ
թշնամի ունի: Ձենքը մեկ կողմ
կնետե, հող կվարե, եկեղեցի
կկառուցե...

ԲԱԼԱԲԵԿ - Քեզի չեմ հասկնա, Խա-
չիկ ախպեր: Հրքը ինչ պըտի էներ
հայր: Ո՞ր մե ազգը պատերազ-
մից հետո իր հողը չի մշակե,
քանդվածը չի սարքե:

ԽԱՉԻԿ - Այո: Բայց զենքը միշտ
պատրաստ պիտի պահե: Ջորեղ
պիտի մնա: *(Գարեգինին.)* Չա-
վակներուն իր հաղթանակը պի-
տի պատմե, անոնց իր
հաղթանակն ու հաղթանակի ո-
գին պիտի կտակե և ո՛չ թե պար-
տություններու ողբը:

ԳԱՐԵԳԻՆ - Վերջ տուր, բե... *(Փու-
թով հանում է պիջակը, մեկնում
Հայկազին.)* Քանդե, աստառը
քանդե, և կտեսնաք, որ իմ փամ-
փուշտը դեռ արձակեմ պիտի:

ՀԱՅԿԱԶ - *(պիջակի աստառից փոր-
րիկ կապուկ է հանում):* Էս ինչ է:

ԳԱՐԵԳԻՆ - *(պարծանքով):* Փամ-
փուշտ: Մուսալեռն մնաց: *(Կա-
պուկից հանելով՝ մեկնում է
Դավթին:)* Վերցուր, տղաս, ա-
սոր հերթը դեռ գալու է:

ԽԱՉԻԿ - *(ոտքի ելնելով՝ պոռթկում
է):* Ո՛չ... Ո՛չ: Ետ վերցուր, Գարե-
գին, ետ:

ԳԱՐԵԳԻՆ - *(շփոթվում է):* Սա-
կայն...

ԽԱՉԻԿ - Գրգո՛, իս Գրգո, դուն սա
փամփուշտն ինչու ետ բերիր...
Ինչո՞ւ բերիր և ո՞ր կուղարկես:
Հին փամփուշտով նոր հաղթա-
նակ չըլլար, Գրգո՛:

ԳԱՐԵԳԻՆ - Աս մարդը ինչ կլիտսի,
չեմ հասկնար:

ԽԱՉԻԿ - Ամեն փամփուշտ գորավոր
է իր կովին մեջ: Ինչո՞ւ չկրցար սա
փամփուշտը պարպել:

ԳԱՐԵԳԻՆ - Չեմ գիտեր, ֆրանսիա-
ցիները եկան...

ԽԱՉԻԿ - Եվ չորս հազար մուսալեռ-
ցի նավերն առին, փախցուցին,
այնպես չէ:

ԳԱՐԵԳԻՆ - Այո:

ԽԱՉԻԿ - Մենք ձեռնամարտի նետ-
վեցանք, որովհետև փամփուշտ
չունեինք, Գրգո՛: Դուն սա փամ-
փուշտն ինչո՞ւ չպարպեցիր:

ԳԱՐԵԳԻՆ - *(խեղճացած):* Ի՛նչ ը-
նեմ... Մեկ կո՞ղմ նետեմ...

ԽԱՉԻԿ - Թշնամուն հաղթելը
սխրագործություն է, տղաք: Սա-
կայն հաղթելը քիչ է, հաղթանա-
կը պահպանել է պետք: Հզորը

կրնա պահպանել իր հաղթանակը: Գրգռ, անուշիկ եղբայր, մի նեղվե: Ետ վերցուր փամփուշտը: Ան դասալիք է: Քո չպարպված փամփուշտը դասալիք է: *(Գլխահակ նստում է:)*

Դադար:

ԲԱՆԱԲԵԿ - Խաչիկը ճիշտ կես: Մի նեղվե, Գարեգին ախպեր: Աստված չտա՝ պատերազմ էղնի, բայց օր էղավ՝ ուրիշ կռիվ է էղնելու:

Դադար:

ՍՈՆԱ - Խաչիկ քեռի, ինչ լավ է, որ դուք Սարդարապատում չեք գոհվել... Այդ բոլորն ումից կիմանայինք:

ԽԱԶԻԿ - Մեզի հրամայված էր ապրել, աղջիկս:

ԴԱՎԻԹ - Ո՛վ էր հրամայել, Փիրումյանը:

ԽԱԶԻԿ - Ոչ:

ԴԱՎԻԹ - Միլիկյանը:

ԽԱԶԻԿ - Ոչ:

ԴԱՎԻԹ - Ո՛վ էր հրամայել, քեռի Խաչիկ:

ԽԱԶԻԿ - Աստծո հրամանն է, տղաս: Հայո համար ապրիլը՝ հաղթել կնշանակե: *(Ցուցամատով հենացնում է ծանրացող արցունքը:)*

Դադար:

ՍՈՆԱ - Քեռի Բալաբեկ, Խաչիկ քեռին ինչո՞ն է մեկ աչքով լալիս:

ԲԱՆԱԲԵԿ - Մենձենաս՝ կհասկանաս, գառ...

Մթնցում:

ԴՐՎԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Բենը չուսավորված՝ լավում է Շողերի ողբը:

ՇՈՂԵՐ - Վայ, վայ իմ անմեղ, իմ սիրուն, իմ-իմ անգին ճուտիկ ջան... Մեր տան վրա թուղթուզիր են արել, գիր...

Լուսավորվում է: Առավոտ է: Բակի կենտրոնում սատկած ճուտը ափերում բռնած, հարևանների շրջանի մեջ կանգնած է Շողերը: Վարդանուշը լվացք է փռում: Հայկազն, անտարբեր, կար է անում: Մի կողմ քաշված, գլխահակ կանգնած է Խաչիկը: Բոլոր հարևաններն այստեղ են, միայն Լուսիկն ու Բալաբեկը չկան:

ՇՈՂԵՐ - Տեն-տեն-տեն-տեն, սևուկս է, սևուկս է... Օրը հազար անգամ ասել եմ՝ Խաչիկ, ներսուղուրս են անում, ճտերիս են նայում, խաչակնքիր, այ մարդ, խաչակնքիր՝ աչքի չգան... Վոյ-վոյ-վոյ-վոյ... իմ սևուկ ճուտիկ ջան...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - *(ձեռքերը վեր կարկանդակով):* Քեզի մեռնիմ, արդար բարի լույս, էնպես էնես, օրըմ էլ հերթը իրան հասնի...

ՇՈՂԵՐ - Վայ, բարի լույսը խոռով մնա գլխիդ, Վարդանուշ, չունենամ քեզ պես բայդուշ հարևանը... Այ ժողովուրդ, լսեցիք, թե ինչ անե՞ծք թափեց էս ջաղուն...

Հեռվից՝ Լուսիկի ձայնը:

ԼՈՒՍԻԿ - Ա՛յ խավիս, այ ժողովուրդ, հասեք, եկեք, տեսեք, թե ինչ

կրակ է թափվում մեր գլխին, հասնք... (Որսորդական հրացանը սպառնալից պարզած՝ ներս է բերում բահ ու քլունգով երկու բանվորի:) Առաջ անցեք, ավելորդ շարժում եք արել՝ կգյուլլեմ:

ԲԱԼԱԲԵԿ - (տանից տազնապած դուրս է գալիս՝ վերնաշապիկը հագնելով): Էս ինչ բան է... Լուսիկ, զենքը ետ պահե... Էս ինչ պատմություն է...

ԼՈՒՍԻԿ - (հրացանն իջեցնում է): Իրանց հարցրու:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Այ ախպեր, մեզ հանձնարարել են, մենք էլ եկել, գործ ենք անում:

ԼՈՒՍԻԿ - Հա՛-ա՛... Դուք գիտեք, թե որտեղ եք գործ անում: Բահը ձեռքներիդ իմ կարտոֆիլի հողամասում ինչ գործ եք անում:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Վահ, գիշերվա երազ է: Այ քույրիկ, ուբորնի ենք սարքում:

ԳԱՐԵԳԻՆ - Ներեցեք, կաղաչեմ, ինչ ըսել է ուփորնի:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԲԱՆՎՈՐ - Ջուգարան ենք կառուցում:

ԼՈՒՍԻԿ - Վուե՛... Էս թաղում ինչն է շատ՝ ուբորնին: Մերը՝ մեկ, Գարեգինինը, հրես՝ քթերիդ տակին՝ երկուս, Խաչկանցը՝ իրեք, Վարդանուշենցը՝ չորս...

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Այ, կին, ինչ ես առավոտ կանուխ թվաբանություն կարդում: Ընդհանուր ուբորնի է լինելու:

ԼՈՒՍԻԿ - Վայ, ձեր խելապակաս գլուխը թաղեմ, խի՛, կոմունիզմի

ենք հասել... Յիսեմ ձեր գլուխը, լավ բան է՝ ձեր թաղում սարքեք: Իմ մարդը խանդոտ ա, լավ ա դեռ քնած ա, որ իմացավ՝ Աստծու կրակը ձեր գլխին կլցնի:

ՀԱՅԿԱԶ - (կարից կտրվելով՝ արթնանում է): Ո՛վ ա քնած, է, էն ո՞վ ա քնած...

ԼՈՒՍԻԿ - Հե՛չ, այ մարդ, հե՛չ, խոսքի օրինակ ասի: Օրշի ուբորնի էին ուզում սարքել, չթողինք: Ո՛վ ա լսել էդպես բան: Ամոթն իստակ կտրել են:

ԲԱԼԱԲԵԿ - (տարեց բանվորին): Ո՛վ հրամանն է:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Քաղաքապետարանի:

ԳԱՐԵԳԻՆ - Ընդհանուր արտաքնոցը առաջադիմություն է: Ֆրանսիո մեջ ատանկ շինություններ շատ կան:

ԼՈՒՍԻԿ - Մեզ հենց շնությունն էր պակաս, էն էլ ֆրանսիական՝ առաջադիմականը:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Եկել ենք, որ հիմքերը փորենք:

ԲԱԼԱԲԵԿ - Հա՛... Կրնա՞ք ըսել, թե ինչըդ պողի էղնի էդ... էդ... Գարեգին, անունն ինչ էր:

ԳԱՐԵԳԻՆ - (հպարտորեն): Առաջադիմություն:

ՀԱՅԿԱԶ - Այ մարդ, Ֆրանսիայի առաջադիմությունը մեր ինչին ա պետք, է... Մեր առաջադիմությունը այլ ուղիով է:

ԲԱԼԱԲԵԿ - Կեցե՛ք, կեցե՛ք: Առաջադիմությունը չէ, Գարեգին, շինության անունն ինչըդ ըսիր:

ԳԱՐԵԳԻՆ - Արտաքննիչ:

ԲԱԼԱԲԵԿ - Հա, օղորմի հորդ: (*Տա-
րեց բանվորին.*) Կրնա՞ք ըսել, թե
ինչը կեղևի էդ արտաքննիչը:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Աջ կողմինը՝
տղամարդկանց բաժինը, ձա-
խում, պատից էն կողմ՝ կանանցը:

ԲԱԼԱԲԵԿ - (*մտախոհ*): Էդ-պէս... Ը-
սածդ պատը հաստ է:

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Երեսուն սանտի-
մետր:

ԲԱԼԱԲԵԿ - Դռներու վրա գրած կեղ-
ևի՞, թե որ մեկն է կին մարդոցը,
որ մեկը...

ՏԱՐԵՑ ԲԱՆՎՈՐ - Կգրվի:

ԲԱԼԱԲԵԿ - Եղավ: Հասկցանք:
Կրնա՞ մեր Գարեգինը ձեզի օգնե:
Էնիկ ֆրանսիայից է, ըդպես ար-
տաքննիչներ շատ է մտե-էլէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐ - Նախագ-
ծով ենք կառուցում, հայրիկ, շեղ-
վելու իրավունք չունենք:

ԲԱԼԱԲԵԿ - Չունիք, հա՛: Հասկցա:

ՇՈՂԵՐ - (*հիշելով սասուկած ճուտին*):
Վոյ-վոյ-վոյ-վոյ...

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ի՛-յա՛, էդ մե կտոր
լացը բերնիդ մեջ էր մնացե՛...

ԲԱԼԱԲԵԿ - (*Վարդանուշին*): Էլի
սկսիր... Մարդը կորուստ ունի՝
բղի լա: (*Շողերին*.) Վախ-վախ-
վախ... ինչը էլ սիրուն ճուտ է...

ԼՈՒՍԻԿ - Այ ժողովուրդ, մի որոշում
կայացրեք է՛, կարտոլատեղս ձե-
ռից գնում է:

Փութկոտ մտնում է Սամսոնը:

ՍԱՄՍՈՆ - Սպա՛-կոյնն... Էտ ո՞վ է
համարձակվել, իմացար, քաղա-

քապետի որոշումը կատարող շի-
նարար անձերին գերի վերցնել:

ԼՈՒՍԻԿ - Հենց՝ ես: Էսքան ուրորնի
սարքել կլինի: Մենք ազատ-ան-
կախ երկիր ենք կառուցում, թե՛
ուրորնի:

ՍԱՄՍՈՆ - Ընկեր Լուսիկ, խնդրում
եմ ձեզ գսպել: Շուտով ձեր բոլոր
հարցերի պատասխանը կստա-
նաք: Հատուկ այդ նպատակով և
ազգաբնակչության գեղարվես-
տական ճաշակը բարձրացնելու
համար, իմացար, մեծ բարերար
պարոն Սուրեն Շեկոյանն իր
հաշվին լարախաղաց է հրավի-
րել: Նրա ելույթից հետո ժողով
կանենք, դեպուտատը հատուկ
հաղորդումներ կանի ձեր ապա-
գայի մասին:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ընչի, հո գրբաց չէ՛:

ԼՈՒՍԻԿ - Դու լավ բանի համար հո
չէիր գա: Ժողով...

ՍԱՄՍՈՆ - Բա լարախաղացը դա-
տարկ տեղն են ուղարկել: (*Մա-
տը բազմանշանակ վեր է
տնկում*.) Էնտեղ էլ մտածողներ
կան: Լարախաղացի պարով ժո-
ղովրդին հավաքում ենք մի տեղ,
հետո դեպուտատը բացատրում
է, որ թաղի հին շենքերը պիտի ի-
րացվեն, մեծ շինարարություն է
լինելու, իմացար, էտ ուրորնին էլ՝
շինարարների համար է:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Քա, վայ, հըլը չսար-
քած քյանդրբագով ձեռներես ա-
ռան: Որ ըդպես է, մեզի
կարտոլատեղն ավելի է ձեռն-
տու:

ՍԱՄՍՈՆ - Դե, դե, առանց շանտա-
ծի:

ԼՈՒՍԻԿ - Շանտաժը դու ես: Մեր
երկրում կառավարությունը հենց
ինքը՝ ժողովուրդն է: Մենք ենք ո-
րոշողը:

ՍԱՄՍՈՆ - Այ քեզ փորձանք, կոիվը
որտեղից է դուրս գալի՞...

ԼՈՒՍԻԿ - Փորձանքն էլ ես դու:

ՍԱՄՍՈՆ - Այ կին...

ԼՈՒՍԻԿ - Կինն էլ ես դու... Էդ էլ չե-
ղավ՝ կեսգիշերին մտար տունս,
թե՛ շախոն ես ման գալի:

ՍԱՄՍՈՆ - Ես քո գլուխը չունեմ: Մի-
մի աթոռ վերցրեք, եկեք ժողովի:
(Ուզում է գնալ:)

ԲԱԼԱԲԵԿ - Բա քյանդրբա՞զը:

ՍԱՄՍՈՆ - Ասինք, էլի, կրկեսի ար-
տիստներից է: Մշո Առաղ գյուղի
հայտնի փահլևան Հաջու աշա-
կերար:

ԽԱՉԻԿ - (հուզված առաջանում է):
Ներեցեք... ներեցեք, Առաղ ըսիք:

ՍԱՄՍՈՆ - Հա, ինչ կա որ:

ԽԱՉԻԿ - (ձեռքը սեղմում է սրտին,
փլվում մոտակա աթոռին): Ո-
չինչ... ոչինչ...

ԲԱԼԱԲԵԿ - Խաչիկ ախպեր, քեզի
ինչ եղավ...

ԽԱՉԻԿ - (դողալով ձեռքով սրբում է
արցունքը): Առաղը... Առաղը,
Բալաբեկ, ծննդավայրս է: Հաջին
մեր դրկիցն էր...

ԲԱԼԱԲԵԿ - Եղև...

ԽԱՉԻԿ - Մարդ չմնաց... Գաղթի
ճանապարհին քույրս Հաջիի սայ-
լին վրա էր... Գիշերը խուժանը
հարձակվեց, փախանք, իրար

կորցրինք: Ինձի մինչև հիմա
կթվար, թե անոնց սպանել են: Ե-
թե Հաջին կենդանի է... Բալա-
բեկ... Եթե Հաջին կա, ուրեմն
քույրս... քույրս...

ԲԱԼԱԲԵԿ - Խաչիկ, քեզի պինդ պա-
հե: (Սամսոնին.) Դու լավ գիտես,
որ մեր դերասանը Հաջու աշա-
կերտն է եղի:

ՍԱՄՍՈՆ - Էդպես ասին... (Բանվոր-
ներին.) Գնացինք, օրը ճաշ դա-
ռավ: (Գնում են:)

ԲԱԼԱԲԵԿ - (Դավիթին): Ծո, վազե,
դերասանին կանչե, թող գա, վա-
զե... (Դավիթը վազքով դուրս է
գնում:)

Խաչիկ, ախպերս, քեզի
պինդ պահե: Էդ քյանդրբազն օր
Հաջուն տեսած էղևի, քրոջդ հաս-
տատ տեսած կեղևի:

ԽԱՉԻԿ - (դողալով ձայնով): Բալա-
բեկ... կվախնամմմ...

ԲԱԼԱԲԵԿ - (ջանում է հուզմունքը
զսպել): Տղամարդ մնա: (Հավաք-
վածներին.) Ծո, ինչ եք ըդպես շի-
վարե: Հիմի քյանդրբազը կուզա
ու աչքալուսանք կուտա: Ըդպես
չէ, Գարեգին... Հայկազ, ըդպես
չէ... Խաչիկ ախպեր, տղամարդ
մնա...

**Մտնում են Դավիթը, լարախաղացը,
դեղահարը՝ գործիքով:**

ԴԱՎԻԹ - Բալաբեկ քեռի, եկան:

ԲԱԼԱԲԵԿ - Եկան, հա՛... Համեցեք,
ախպեր, համեցեք, նստեք հոս:
(Եկվորները, հավաքվածներին
գլխով բարևելով, զարմացած
նստում են:) Ուրեմն... ըդպես:

Ախպեր, դո՛ւ ես քյանդրբագը... ծո
ինչ կըսեմ, ներող կեղնիս, դո՛ւ ես
մեր դերասանը, լարախաղացը:
ԼԱՐԱԽԱՂԱՅ - Ես եմ: Շորերս էի
փոխում, եկան ասին, որ...

ԲԱԼԱԲԵԿ - Հա՛... Լավ են էրե: Լավ
էրիր, օր էկար, շնորհակալ եմ:
Մե բանըմ պղի քեզի հարցնենք,
ախպեր, ներող կեղնիս:

ԼԱՐԱԽԱՂԱՅ - Ասա, ախպեր, ասա:

ԲԱԼԱԲԵԿ - Մեր լսելով, դու Մշո Ա-
ռաղ գյուղի փահլկան Հաջու ա-
շակերտն ես: Հիմի քեզի շատ
կյանդրենք, ըսես, թե որտեղ ես
տեսե էնոր: Էնիկ մեր... մեր բա-
րեկամն է ու...

ԼԱՐԱԽԱՂԱՅ - Որ ճիշտն ասեմ, ես
փահլկան Հաջուն չեմ տեսել:

ԲԱԼԱԲԵԿ - Ի՞նչըղ թե...

ԼԱՐԱԽԱՂԱՅ - Հա, ախպեր, չեմ տե-
սել... Լսել եմ:

ԲԱԼԱԲԵԿ - Բայց մեր լսելով... կը-
սեն, թե դու...

ԼԱՐԱԽԱՂԱՅ - Ճիշտ է, այդպես ա-
սում ենք... Ո՞նց բացատրեմ...
Կրկեսի բոլոր լարախաղացներս
մեզ նրա աշակերտն ենք համա-
րում, որովհետև փահլկան Հա-
ջին շատ հայտնի մարդ է եղել:
Մենք էլ այդպես ենք հայտարա-
րում, որ հանդիսատես շատ ունե-
նանք:

ԲԱԼԱԲԵԿ - Հա՛... Ուրեմն, կսես, էդ
բանի համար, հա՛, հենց էնպես...
Հասկցանք:

ԼԱՐԱԽԱՂԱՅ - Հա, ախպեր, ինչ
մեղքս թաքցնեմ, այդպես է:

**Վարդանուշն արտասվում է: Խաչի-
կը սրբում է արցունքը:**

ԲԱԼԱԲԵԿ - *(նայում է հուզված
հարևաններին, արտասվող Խա-
չիկին):* Ուրեմն, ըդպես... Հենց
էնպես... *(Դողախարին.)* Ախպո-
րը դուրբան, «Յարխուշտա»
գարկ:

ԴՀՈՒԱՀԱՐ - Բայց... առանց նվա-
զի...

ԲԱԼԱԲԵԿ - Դու հայ ես:

ԴՀՈՒԱՀԱՐ - Հա, բա ո՞նց:

ԲԱԼԱԲԵԿ - Դե որ հայ ես, «Յար-
խուշտա» գարկ:

ԼԱՐԱԽԱՂԱՅ - *(գործընկերոջը):* Կա-
տարի՛ր:

**Դողախարը ոտքի է ելնում: Հնչում են
դիտի հատու զարկերը:**

**Բալաբեկն ուտերը դանդաղ շտկում,
բռունցքված ձեռքերը վեր պարզելով
ցատումով ցնցում է, մի պահ այդ դիր-
քով քարանում, ապա սկսում է պա-
րային շարժումները՝ հեթանոս մոզի
պես իր ցեղին պայքարի կոչելու, ոտ-
խին դիմագրավելու, ետ մղելու կա-
տաղի արտահայտություններով:**

ԲԱԼԱԲԵԿ - *(ահեղաձայն):* Զարկ...
Զարկ... Չհանձնվիս, զարկ...

ԳՐՎԱԳ ՎԵՅԵՐՈՐԳ

**Արկերի պայթյուն, կրակահերթեր,
ծուխ, փռչի:**

**Ճամփորդական պայուսակը ձեռքին
կիսախավար բլիներած է մտնում Շու-
շանը՝ զինվորի ուղեկցությամբ:**

ԶԻՆՎՈՐ - Ախր տու հինչ ըս անում
ստըղ, մորքուր, Նստե՛ տանը, լի՛:

ՇՈՒՇԱՆ - Մի հերսոտի, տղա ջան,
Դավիթս ծանր վիրավոր է, նրա
մոտ էի գնում, ավտոբուսը ռմբա-
կոծեցին...

ԶԻՆՎՈՐ - Լյավ, տու ստըղ կաց, դի-
վերսանտնեն հարձակվալըն,
տյուս չիկյաս: *(Շեմքին չհասած:)*
Բյուրդանանց տյուս չիկյաս բլին-
դաժան:

**Շուշանը անվստահ առաջանում,
նստում է արկղերից մեկին՝ ամեն ո-
րտից կուչ գալով:**

ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ - Զուր... ջուր...

ՇՈՒՇԱՆ - *(սկստում է անկյունում
պառկած վիրավորին):* Քոռա-
նան... *(Շտապում է նրա մոտ:)*

Վիրավոր ես, բալես... Համբե-
րիր, հիմա ջուր կտամ... *(Պայու-
սակից ջրի շիշ հանելով՝ օգնում է
զինվորին խմել:)* Խմիր, խմիր,
քեզ մատաղ լինեմ... Շան է ցա-
վում...

ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ - Շանտ...

Մամ... մամ ջան, դու երբ եկար,
ննց գտար ինձ...

ՇՈՒՇԱՆ - Ընկերդ բերեց: Մի խո-
սիր, ուժերդ խնայիր, բալես:

ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ - Մամ, տնեցիք
ննց են...

ՇՈՒՇԱՆ - Լավ են, բոլորն էլ լավ
են... Քեզ կտեղափոխենք հի-
վանդանոց, կրուժվես, լավ կլի-
նի...

ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ - Արմենս դեռ
չի՞ քայլում, չի՞ խոսում...

ՇՈՒՇԱՆ - Արմենը... Խոսում է, քայ-
լում է, բա ննց... Քեզ է կարո-

տում... Բոլորն էլ քեզ կարոտում
են: Որտեղից ես վիրավոր, բա-
լես, վերքդ կապել են: *(Ստուգում
է:)* Դիմացիր, հիմա վիրակապը
կփոխեմ: *(Պայուսակից սրբիչ է
հանում:)*

**Բլինդածը ցնցվում է պայթյունից,
ծխի ու փոշու միջով ներխուժած
ազերին կուրորեն կրակահերթ է բա-
ցում՝ գոռալով. «Ալլահ աքբար»:**

ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ - Ա-անխ...

ՇՈՒՇԱՆ - *(ծեմքերը կարկասած
մղվում է թշնամու վրա):* Թի-
կունքդ կապտի... էս ինչ արիր...

**Անակնկալի եկած ազերին ետ-ետ է
զնում՝ լիցքավորելով զենքը, նույն
պահին շեմքին հայտնված զինվորը
կրակում, տապալում է նրան:**

ԶԻՆՎՈՐ - Մորքուր ջան, վախիս
վեչ, քշլանընք տրանց, տու հան-
գիստ կաց... *(Արագ դուրս է
գնում:)*

ՇՈՒՇԱՆ - Աստված ջան... Աստված
ջան, էս ինչ ես անում... երազ է...
վատ երազ... ննց կարող է կյան-
քը մահերի շարան լինի... երազ
է... *(Սթափվում, նետվում է դեպի
վիրավոր զինվորը:)* Մորդ աչքե-
րը քոռանան, բալես, չհասցրի
վերքդ կապեմ... Երնեկ մերդ
խլանա, չիմանա կատարվածը...
Աստված ջան, ո՞ր է քո ուշքն ու
միտքը, որ քո ստեղծած մարդը
գազան է դառնում: Բա դու գլխի
չես, որ սա մարդու կոիվ չի, սրբի
ու սատանայի կոիվ է: Ամեն պա-

տերազմ քո դեմ է, Աստված ջան, քո ստեղծած աշխարհի դեմ, ինչո՞ւ ես թողնում... Իմ անմեղ, ջահել երեխեքը քեզ են պաշտպանում, Աստված ջան, բա դու ինչո՞ւ չես նրանց տեր կանգնում: Ո՞վ է տեսել, որ մարդն Աստծուն պաշտպանի... Էս ինչքան ես թույլ, Աստված ջան: Անունդ էլ չիմացա, բալես, բայց քեզ Դավիթ կասեմ, դու էլ ես իմ որդի... (Տապալված ազերիին:) Քո անունն էլ չգիտեմ... դու իմ օրինանքը անեծք դարձրիր... Բա քեզ մայր չէր ծնել, քո մերը քեզ չի օրհնել, բա դու չես իմացել օրինանքի գիրը: Նա քեզ ասել է՝ գնա, հայ սպանի, ասել է՝ երեխա մորթի, ինչ է ասել, որ գազան մեծացար... Թող Աստված քո հոգու դատաստանն անի, բայց ես քեզ չեմ ներում, մարդու մեղքն է ներվում, գազանինը պատժվում է... չեմ ներում... (Ձեռքերը կարկանդակով:) Անիծվես...

ԴՐՎԱԳ ՅՈԹԵՐՈՐԴ

Բակը: Գիշեր է՝ լուսնի թույլ շեղում: Ծնկի իջած Գարեգինը ափերով հողակույտը բլրելով՝ փոքրադիր գերեզման է սարքում: Ավարտելով գործը, ոտքի է ելնում, հայացքը խոնարհում թմբին:
Մոտեցած Խաչիկը լուսնի շեղքից լուսավորվում է:

ԽԱՉԻԿ - Գրգո՛ր, իմ իսկ Գրգո... (Գրկախասնվում, հեռանում է:)

Մոտենում, Գարեգինի ձեռքը սեղմում ու հեռանում են Բալաբեկը, Հայկազը, Սեդրը:

Մթնեցում:

Լուսավորվում է:

Բակում ուրախ իրարանցում է. Շուշանը սիռոց է փռում սեղանին, Շողերը օդու շիշ, բաժակներ է բերում, Լուսիկը՝ հաց ու կանաչեղեն:

ՀՌԻՓՄԻԿ - (դուրս է գալիս տանից՝ ծաղիկներով ծաղկամանը բռնած, շորոր քայլվածքով, երգելով):

Я поля влюблённым постелю -

Пусть поют во сне и наяву!..

Я дышу, и значит - я люблю!

Я люблю, и значит - я живу!

Տղամարդիկ ուրախ զրուցելով, անշտապ բոլորվում են սեղանի շուրջը: Դավիթն ու Մոնան մեկդի կանգնած, հեռուում են նրանց:

ՍՈՆԱ - Այ քեզ բան, գերեզման սարքելուց հետո հավաքվեցին խնջույքի:

ԴԱՎԻԹ - Ես այդպես տեսա: Հայրս ասաց, որ իր հիշողություններն եմ վերապրում, բայց մեկ-մեկ էլ ես նրանց տեսնում եմ այսօրվա մեջ, վաղվա մեջ:

ՍՈՆԱ - Հեռո՛ր, Դավիթ, հետո ինչ տեսար:

ԲԱԼԱԲԵԿ - Վարդանուշ, գնա, էն քու դրած սրսուռ թթվից բեր:

ՎԱՐԴԱՆՈՒՇ - Հիմի բերեմ, Բալաբեկ ջան: (Արագաքայլ մտնում է տուն:)

ԽԱՉԻԿ - Տղաք, բաժակները լցրեք:

ՀՈՒՓՄԻԿ - Я дышу, и значит - я люблю! Я люблю, и значит - я живу!
(*Ծաղկամանը տեղապարտում է սեղանի կենտրոնում:*) Պարոնայք, սա ճիշտ է: Տոնական սեղանին պետք է ծաղիկներ լինեն:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - (*ափսեով թթուն դնում է ծաղկամանի մոտ*): Անուշ էրեք:

ՀՈՒՓՄԻԿ - (*Վարդանուշին*): Այս ինչ ես անում... այս ինչ ես անում...

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Բա, վայ... էլի դիվոտեցիր:

ՀՈՒՓՄԻԿ - Ո՛վ է տեսել բուրավետ ծաղիկների կողքին քացախահոտ թթու դնեն:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Հեչ դարդ մի էնե: Վրեդ յոթը լիտր դուխի էս լցե, տնաշեն, դրան ուրիշ հոտ կդիմանա:

ԽԱՉԻԿ - (*բաժակը ձեռքին ոտքի է ելնում*): Բարեկամներս, այսօր կրկնակի տոն է: Նախ, որ մեր հայրենիքի Անկախության հերթական տարեդարձն է, իսկ երկրորդը...

ԳԱՐԵԳԻՆ - (*անսովոր աշխուժությամբ*): Կեցի՛ր, կեցի՛ր... Այդ մասին ինքս կըսեմ:

ԲԱԼԱՐԵԿ - Գարեգինը ճիշտ կըսե, Խաչիկ ախպեր: Թաղումս ինքն է երե, գերեզմանն ինքն է սարքե:

ՀԱՅԿԱԶ - Այ մարդ, խոսք ասեք՝ բան հասկանանք:

Բակ են մտնում քանկարժեք կոստյումով, պարանոցին ոսկե շղթա, ցու-

ցամառին ու մատնեմատին մատանի կրող Սուրոն, տոնական, բայց հնաճ կոստյումով, փողկապով Սամսոն:

ՍԱՄՍՈՆ - (*սուսջ ընկնելով՝ Սուրոնին ուղեկցում է գերեզմանաթմբի մոտ*: Հանկասար): Խնդրեմ, նաչալնիկ ջան:

ՍՈՒՐՈ - Բա էն ինչ բանի են, ինչի են հավաքվել:

ՍԱՄՍՈՆ - Երկուսից մեկը. եթե մարդ են թաղել՝ քելելսն է, թե թողթուգիր են թաղել՝ քեֆ են անում:

ՍՈՒՐՈ - Թողթուգիր, ո՞ւմ վրա, որ ինչ...

ՍԱՄՍՈՆ - (*շողոքորթ*): Բա էտքան միամիտ կլինեն, Վարոսիչ ջան, քո վրա են թողթուգիր արել, որ գործերդ վատ գնան: Միտդ չի, չէին համաձայնվում էս փլվող շենքից դուրս գալ, որ հյուրանոցդ կառուցես:

ՍՈՒՐՈ - (*ագոզված*): Սրանք էին: Հալա արի... ես դրանց թողթուգիր ցույց կտամ: (*Մոտենում են:*)

ՍԱՄՍՈՆ - Բարև, հարազատներ ջան, էս ինչի եք հավաքվել, լավ բանի համար ա՛, ասեք՝ մենք էլ ուրախանանք:

ԽԱՉԻԿ - Այսօր մեծ տոն է: Ի՛նչ օր է, գիտե՛ս:

ՍԱՄՍՈՆ - Չորեքշաբթի ա:

ԽԱՉԻԿ - (*մի պահ մտորում է*): Այս շաբաթվա մեջ այլ չորեքշաբթի կա՛:

ՍԱՄՍՈՆ - Գիժ են խոսացնում... Իհարկե չկա:

ԽԱՉԻԿ - Ահա, առ առիթով ալ քեֆ կընենք:

ՍԱՄՍՈՆ - Լամվ, էլի, Խաչիկ, դու հենց ընենց տեղը քեֆ անողը չես: Պատճառն ասա՝ մենք էլ ուրախանանք:

ՀՌԻՓՍԻԿ - Պարոն Սամսոն, այսօր մեր Անկախության օրն է:

ՍԱՄՍՈՆ - *(կեղծ զվարթությամբ):* Մալադեց: Ես էլ եմ ուրախ, որ վերջապես ազատվում եք էս Նոյի թվի շենքից:

ԲԱԼԱԲԵԿ - Ի՞նչ կա, Սամսոն: Դու հենց էնպես տեղը մեզի չէիր հիշի, գալո՞ք բարի է:

ՍԱՄՍՈՆ - Բա եղամվ... Մեր մեծ բարերար պարոն Սուրեն Շեկոյանի հետ իրա տերիտորիան ենք նայում: Ժամկետը լրացել է, ձեր տեղափոխվելու ժամանակն է, շինարարություն է սկսվելու: Մարդը ժողովրդի համար ա մտածում, աշխատատեղեր ա ստեղծում, միլիոններ ա ծախսում՝ 5 աստղանի հյուրանոց կառուցելու համար, բա չգամր մի հատ նայեր: *(Իբր նոր է նկատում):* Էն ինչ գերեզման է... երեկ էստեղով անցա, չկար:

ՎԱՐԳԱՆՈՒՇ - Դու ուրդեղով անցնիս, օր գերեզման չթողնիս եղևեղ:

ՍԱՄՍՈՆ - Բա էտ ասելու խոսք էր, Վարդանուշ:

ԼՈՒՍԻԿ - Հենց՝ ասելու խոսք էր: Մոռացել եմ, որ սովետի վախտով կեսգիշերին մտար տունս, թե՛ շպիոն ես ման գալի:

ՍՈՒՐՈ - Լամվ, արա, լամվ... Հին բուր-

դը քամուն մի տվեք: Ո՞վ է էտ գերեզմանը սարքել:

ԳԱՐԵԳԻՆ - Ես:

ՍՈՒՐՈ - Ի՞նչ ես թաղել: *(Գարեգինը չի պատասխանում):* Քեզ հետ եմ, է, բիձա, ինչ ես թաղել: *(Սամսոնին.)* Թո՛ղի՛ քանդի: *(Սամսոնը շտապում է ծառին հենված բահը վերցնել, անցնել գործի):* Իմ տերիտորիան գերեզմանոց եք սարքում, արա... Թուղթուգիր եք անում: Էտ էլ իմ լավության պատասխանն ան, որ էս փլվող հավաքնից ձեզ հանում, տանտեր եմ դարձնում:

ԲԱԼԱԲԵԿ - Էտ մեկը՝ չեղավ: Քու խոստացած գումարով, ախպոր տղա, մեկ սենյականոց էլ չես կրնա առնի: Էտ մասին մենք քեզի ըսել ենք, ուր որ պետք է՝ նամակ ենք դրգե: Էնպես որ մի վոագի, էս հայաթը դեռ քոնը չէ:

ՍԱՄՍՈՆ - *(հեղափոխված մտքով):* Որ ասում եմ՝ թուղթուգիր ան... *(Կապույտ է դնում սեղանին):* Իսնդրեմ՝ факт налицо.

ՍՈՒՐՈ - Բաց:

Սամսոնը երկյուղած խաչակնքում, քանդում է կապույտը:

ԼՈՒՍԻԿ - *(չանչ է անում):* Ա՛յ խաչը գլխիդ խոով կենա, հա՛... Բա սովետի վախտով աթեֆստ էիր:

ՍՈՒՐՈ - Սամսոն... էտ ինչ գտար, որ շշմեցիր:

ՍՈՒՐՈ - Շեֆ ջան, հին հրացանի պատրոն ա:

ԳԱՐԵԳԻՆ - Այո, փամփուշտ է: Մու-

սա լեռան ճակատամարտեն մնացած փամփուշտ:

ՍԱՄՍՈՆ - Բա ինչի եք թաղել:

ԽԱՉԻԿ - Ատ փամփուշտը երդմնազանց եղած է, իր պարտքը չէ կատարած, ան արդեն իսկ մեռած էր:

ՍՈՒՐՈ - (*Սամսոնին*): Դեսը տուր: (*Փամփուշտը գննում է:*) Ասում ես՝ էտ որ թվին ա եղել:

ԽԱՉԻԿ - 1915-ին:

ՍՈՒՐՈ - (*պայծառանում է*): Արա, սա անտիկվար ան... (*Փամփուշտը ծոցագրպանն է դնում: Սամսոնին:*) Գնացի՞նք: (*Կեսճամփից շրջվում է:*) Ժողովուրդ, թե էլի ըսենց թաղելու բան կունենաք, ձեն հանեք: Իսկ էս հավաքնից թե դուրս չեկաք՝ գլխներիդ եմ փլելու, լավ իմացեք: Խաղեր չտաք, Սուրոյի դեմ խաղ չկա: (*Դուրս են գնում:*)

Դադար: Բոլորը մտքերի մեջ են:

ԽԱՉԻԿ - (*ոտքի էլնելով շրջվում է արևելք, խաչակնքում է*): Փանք քեզի, Արարիչ, իմաստաբար արժանի չհամարեցիր, որ դավաճան փամփուշտը սուրբ հողին մեջ ամփոփվե: Ան իր տեղը գտավ: Նման գնմանն գտանէ:

Մթնեցում, լուսավորված մնում են Միերն ու Դավիթը:

ԴԱՎԻԹ - Հայրիկ, ինչպե՞ս է, որ մեր բոլոր սերունդները պատերազմ են գնում:

ՄՀԵՐ - Մեր հայրենիքը միշտ վտանգված է, տղաս:

ԴԱՎԻԹ - Իսկ կունենանք մի սերունդ, որը մինչև խոր ծերություն պատերազմ չտեսնի:

ՄՀԵՐ - (*մի պահ մտորում է*): Բնությունը կաղնուն հզոր ու երկարակյաց է ստեղծել, բայց երբ նրա տերևի վրա լեղու գնդիկներ են առաջանում, որոնք շատ նման են նրա պտուղներին, քայքայում են ծառն ու չորացնում: Ուշադիր եղիր, տղաս, որ քո խնամած ծառի վրա լեղի չլինի:

ԴԱՎԻԹ - Ուշադիր կլինեմ, բայց դու իմ հարցին չպատասխանեցիր՝ կունենանք մի սերունդ, որ...

ՄՀԵՐ - Ես քո հարցին պատասխանեցի, տղաս, պատասխանեցի...

ԴՐՎԱԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Պատկերը խմբովին լուսանկարվելու պահ է հիշեցնում: Բեմի կենտրոնում նստած ու կանգնած են բոլոր հարևանները՝ հատված հանդիսատեսին: Նրանց մեջտեղում Դավիթն է: Նրանց խոսքը թույլ արձագանք ունի: Տեսարանի ընթացքում անընդմեջ լսվում է սրտի տրոփյուն:

ԽԱՉԻԿ - Չերկնչես, մանչս: Ալ նահանջի տեղ չիկա: Հիշի՛ր, ամեն մեկ քայլդ հայրենիքը կազատագրե: Պահպանե կյանքդ, սպանե մահդ: Հայո համար ապրիլը հաղթել կնշանակե:

Լույսը քարթում է՝ լուսանկարչական խցիկի լուսարձակի բռնկման պես:

ԲԱԼԱՐԵԿ - Հազար ու հազար տարի հայը աշխարհքի հետ կովի մեջ է:

Էնոր պարն էլ է կռիվ, երգն էլ, սերն էլ է կռիվ, կարոտն էլ: Հույսն ու հավատն էլ կռիվ են: Մեր Խաչիկը մե աչքով կուլա: Էդ աչքը կարոտ ունի, մուրազ ունի, դեռ կռիվ ունի էդ աչքը: Էդ աչքը մենք ենք, գա՛ն: Գնա՛, սրբե՛ էդ աչքի արցունքը:

Լույսը քարթում է:

ՄՀՇԵՐ - Քո հերթն է, տղաս: Դու մեզնից իմացար այն, ինչը կյանքով են հաստատում: Զգա՛ արյունդ, լսի՛ր արյանդ կանչը: Դա օգնության աղերս չէ, կո՛չ է ու հրաման: Զգո՛ն եղի՛ր, տղաս, որ քո խնամած ծառի վրա լեղի չլինի:

Լույսը քարթում է:

ՇՈՒՇԱՆ - Ետ կգաս: Ետ կգաս, Դավի՛թ, մեր պատին լուսանկարի տեղ չկան...

Մթնեցում:

ԳՐՎԱԳ ԻՆՆԵՐՈՐԳ

Հորիզոնում կրակի բոցերով փոթորկվող հրդեհի պատկեր է:

Հեռվից լավում է արկերի պայթյուններին, կրակահերթերի որոտը:

Զինվոր Դավիթը հառված է հրդեհին:

ՖԻԴԱՅԻ - *(դրսից):* Դավիթ, կեցի՛ր... *(«Մոսին» հրացանով մտնում, վազքով մոտենում է:)*

Կեցի՛ր, տղաս, միասին պիտի երթանք:

ԴԱՎԻԹ - Դու քանի՞ տարեկան ես, որ ինձ որդեգրում ես, ջահե՛լ:

ՖԻԴԱՅԻ - Տասնույթ:

ԴԱՎԻԹ - *(քսիծաղում է):* Ես քեզնից մեծ եմ:

ՖԻԴԱՅԻ - Դավիթ, չճանչցա՛ր ինձի:

ԴԱՎԻԹ - *(անտարբեր):* Մենք ծանոթ ենք:

ՖԻԴԱՅԻ - Քո ծնված օրեն... Խաչիկն եմ, Խաչիկը:

ԴԱՎԻԹ - Խաչիկ... Քեռի Խաչիկ...

ՖԻԴԱՅԻ - *(զվարթացած):* Հապա՛: Հայրդ ալ այստեղ է, Գեչրլուի արծիվներն ալ այստեղ են, բոլորս այստեղ ենք:

ԴԱՎԻԹ - *(հորիզոնից չկարվելով):* Քեռի Խաչիկ, մեր երկիրն այրվում է:

ՖԻԴԱՅԻ - Ան հրդեհ չէ, տղաս, քուրա է, որուն մեջ պիտի կռվվինք:

Այրվող հորիզոնի կարմիր լավան կլանում է բեմը:

Կարճ դադար:

Երևակայական, արճակարմիր ամպերով վայր:

Դավիթն ու զինվորը դեմ-դիմաց կանգնած են:

ԶԻՆՎՈՐ - Բարի գալուստ հավերժություն:

ԴԱՎԻԹ - Դու ո՞վ ես:

ԶԻՆՎՈՐ - Քո մայրն ինձ Դավիթ անունով կոչեց:

ԴՐՎԱԳ ՏԱՄՆԵՐՈՐԳ

Բենի երկարությամբ կիսաշրջա-
նաձև կանգնած, արձանացած հե-
րոսներն ակնդետ նայում են
կենտրոնում ծառի նորատունկ ճյու-
ղը ջրող Մանչուկին:

Ձինվորական համազգեստով, ինք-
նաձիգն ուսած մտնում է Դավիթը,
հայացքը հաժում է շրջապատին, մո-
տենում տղային:

ԴԱՎԻԹ - *(կքանստում է տղայի դի-
մաց):* Անունդ ինչ է:

ՄԱՆՉՈՒԿ - Միեր:

ԴԱՎԻԹ - Մի՛նր... Լսվ անուն է:

ՄԱՆՉՈՒԿ - *(մատր մեկնելով):* Սա
հրացան է:

ԴԱՎԻԹ - Հա, հրացան է:

ՄԱՆՉՈՒԿ - Մա՛րդ է սպանում:

ԴԱՎԻԹ - Չէ, պաշտպանում է:

ՄԱՆՉՈՒԿ - Ո՛ւմ է պաշտպանում:

ԴԱՎԻԹ - Հայրենիքը, ժողովրդին:
*(Ծոցագրպանից քսակը հանում,
հողը շաղ է տալիս ծառաբնին:)*

ՄԱՆՉՈՒԿ - Էդ ինչ ես անում:

ԴԱՎԻԹ - Հողը գորեղացնում եմ:

ՄԱՆՉՈՒԿ - Ինչի՛ համար:

ԴԱՎԻԹ - Որ ծառն ապրի:

ՄԱՆՉՈՒԿ - Ծառը ապրում է:

ԴԱՎԻԹ - Ապրում է, եթե տերևի
վրա լեղի չառաջանա:

ՄԱՆՉՈՒԿ - Լեղի՛... դա ինչ է:

ԴԱՎԻԹ - Դա գնդակ է՝ արձակված
թիկունքից, ցեց է՝ մարմնի մեջ:

ՄԱՆՉՈՒԿ - Հողն էլ է ապրում:

ԴԱՎԻԹ - Հողն էլ:

ՄԱՆՉՈՒԿ - Բա ո՞վ է մեռնում:

ԴԱՎԻԹ - Պարտվողը:

ՄԱՆՉՈՒԿ - Իմ հայրիկը գոհվել է:

ԴԱՎԻԹ - Բո հայրը չի գոհվել,
հաղթել է:

ՄԱՆՉՈՒԿ - Որ հաղթում են, չեն
գոհվում:

ԴԱՎԻԹ - Չէ: Որ հաղթում են, ան-
մահանում են:

ՄԱՆՉՈՒԿ - Անմահանում... Դա ինչ
է:

ԴԱՎԻԹ - *(թախծոտ ժպտում, շոյում
է տղայի գլուխը):* Կմեծանաս,
կհասկանաս, գառ...

ՄԱՆՉՈՒԿ - Որ մեծանամ՝ զինվոր եմ
դառնալու:

ԴԱՎԻԹ - Դու հիմա էլ ես զինվոր:

ՄԱՆՉՈՒԿ - Բայց ես զենք չունեմ:

ԴԱՎԻԹ - *(զինվորական գլխարկը
դնում է Մանչուկի գլխին, ինքնա-
ձիգը կախում է նրա ուսից):* Դու
զինվոր ես, տղաս, զինվոր ես:
Պաշտպանիր երկիրդ: *(Դուրս է
գնում՝ անէանալով:)*

**Մանչուկը ժամապահի դիրք է ընդունում՝
ինքնաձիգն ուսած, զգաստ:**

Արձանախումբը դանդաղ առաջանում է:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Անահիտ ԱՐՓԵՆ

Գերելարվել ենք ձեռքով օտարի,
կամակատարն ենք նրա քմայքին
ու քիւքին՝ ծառայ:
Աստի, Տեր Աստված, տառապանքով լի
կյանքի ձեռքն այս քիրտ
էլ ինչքան տոկանք:
Հույս ու ճար չկա՞ միճակին մեր կեղծ,
հոգևարքին մեծ՝
անկամ չսողանք:
Զի, ինչ էլ լինի, ինչ անենք, չանենք,
ինչ տանք, ինչ առնենք,
չպետք է ճորտ մսանք:

դեկտեմբերի 10. 2020.

Ծաղկաձոր

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԴԺՈՒՔ

Լավապետական ողբերգություն 15 տեսարանով

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

2016 թվական, գինադադար

ՇԱՐՔԱՅԻՆ - (*ընկերոջ կողմը բռթելով*): Տեսար, ոնց ետ շարտեցիք թուրքին:

ԿԱՄԱՎՈՐ - Չէիք էլ կասկածում, որ մեր սահմանին ձեզ պես քաջ տղերք են կանգնած:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - (*շարքայինին*): Թուրքերին, տղաս, թուրքերին, երկուսին էլ: Ու մեր դեմ միայն թուրքը չի...

ՇԱՐՔԱՅԻՆ - (*ոգևորված*): Ասում էիք՝ մարդ չի մնացել երկրում, մասնագետները փախել են, տեսա՞ք, ոնց մի մարդու նման հավաքվեցին:

ԶԻՆՎՈՐ - Ով պետք էր՝ կար, ով պիտի գար՝ եկավ: Կամ կգար, եթե կռիվը չկանգնեցնեին:

ԿԱՄԱՎՈՐ - Դա էլ է քաղաքականություն: Բա կարելի էր մասնագետներին թողնել, որ լքեն երկիրը... Կամ չգիտեի:

ԶԻՆՎՈՐ - Հօգուտ հայրենիքի գործելու համար պարտադիր չէ մասնագետ լինել կամ շատ խելացի: Ուղղակի պետք է ամեն ինչ անելիս մտածես ազգիդ շահի մասին, չմեղանչես ոչ մեկի հանդեպ:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Բա դրամաշնորհ-

ները, բա վարկերը, բա գրազները... ազգի հաշվին տրվողներն ամենամեծն են, չէ, ինչ փողեր են շրջանառվում: Ու ամենավատը, գիտե՞ք, որն է: Մարդիկ հատուկ մասնագիտանում են այս գործի մեջ: Պրոֆեսիոնալներն ամեն ինչ անում են կետ առ կետ հաշվարկած և իմանալով՝ ով ինչ է սիրում, ում ինչ ճաշ հրամցնեն: Անփորձները անում են ճնշումներին ու օտար ազդեցություններին ենթարկվելով: Արդյունքում՝ վերևից ներքև, երկուսն էլ ի վնաս ազգի են գործում՝ շահարկելով ազգային արժեքները:

ՇԱՐՔԱՅԻՆ - Պարտադրում են:

ԶԻՆՎՈՐ - Ո՞վ է պարտադրում...

Դա դեռ հարց է՝ մեզ պարտադրում են, թե՛ մենք ենք շտապում որևէ մեկի ոտքն ընկնել:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Ճիշտ է ասում:

Ինչպես որ դեռ հարց է՝ մեզ են խաղաղապահներ ուզում պարտադրել, թե՛ մենք ենք ուզում խաղաղապահներ կարգել մեր ժողովրդի գլխին:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ներքին հարցերն ավելի բարդ են:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Մեզնով որ լինեիր...

ԳԵՂՋՈՒԿ - (*հառաչելով*): Է՛, աշխարհն էսպես եկել, էսպես էլ գնալու է... Բոլորին չես գոհացնի:

ԿԱՄԱՎՈՐ - Ուրեմն նախ և առաջ քո մասին պիտի մտածես, այսինքն՝ քո ազգի: Պիտի տեսնես, թե ժողովուրդն ինչ է ուզում, պատերազմ, թե՛ զիջումներ: Ուրիշ հարց չկա:

ԳԵՂՋՈՒԿ - Էհ, ջահել ես, ջահել, արյունդ եռում է:

ԿԱՄԱՎՈՐ - Ես էլ չեմ սիրում, երբ ասում են, թե դրսից չեն թողնում... Կամ թե՛ դա են ուզում, ինչ կարող ենք անել: Մի ասող լինի՝ ըհը, թուրքն էլ հայկական հողերն է ուզում, դե տվեք:

ԶԻՆՎՈՐՆԵՐ - (*ժպտալով*): Բարև ձեզ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էսքանդ ո՞ր թռաք եկաք:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Բա ինչ պիտի անեինք, հո ձեզ չէինք թողնելու կրակի բերան:

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Էդ մենք ձեզ չէինք թողնի, սա մեր կռիվն է, դուք ձերը կռվել եք:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ու ինձ ուրիշ բան է անհանգստացնում: Պատկերացնում եք, էս տարիների ընթացքում քանի՞ ադրբեջանցի, էդ դարերի ընթացքում քանի՞ թուրք է ծնվել հայոց հողի վրա, սնվել մեր հողից...

ԶԻՆՎՈՐ - Այսինքն: Ի՞նչ ես ուզում ասել:

ՇԱՐՔԱՅԻՆ - Նրանք էլ իրավունքներ ունեն: Ո՞նց հասկացնեմ մարդկանց, որ...

ԶԻՆՎՈՐ - Սա մեր հայրենիքն է, իրենք իրենց սերմը իրենց հողում պիտի աճեցնեն, որ զարմ տան:

ՇԱՐՔԱՅԻՆ - Հա բայց, իրենք մաքուր թուրք կամ չգիտեմ ադրբեջանցի ինչ ցեղ չեն արդեն, իրենք իրենց նախնյաց բնօրրանի մասին պատկերացում չունեն: Թուրքիայում կամ Արցախում ծնված թուրքի իմացած հայրենիքը մեր հողն է:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - (*ցույց տալով խրամատի մի հատվածը*): Չմոռանաք, այդ մասը տեսնում են, կխփեն:

ԳԵՂՋՈՒԿ - Ճշմարտությունը չեն ասում թուրք երեխային, դա իր մեծերի մեղքն է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Եվ թուրքիայում առաջադիմական ուժեր կան...

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Երիտթուրքերն էլ Սուլթանի համեմատ էին, չէ՛, առաջադիմություն խոստանում, ինչ արեցին... Հիմա էլ Էրդոգանն ուզում է օսմանականությունը վերականգնել: Իսկ մենք դեռ նրանց ճանապարհին մնացած քար ենք ու կոկորդի ոսկոր:

ՇԱՐՔԱՅԻՆ - Գիտեմ:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Բա որ գիտես, էլ ո՞նց ես ծնողի գիրկը առոք-փառոք մեծացած թուրքին խղճում:

Քանի՜- քանի հայ երեխա մորթվեց Թուրքիայում, քանի՜սը մայրերի աչքի առաջ խորովվեցին Սումգայիթում: Ի՞նչ արեցին հիմա Թալիշում ու կողքի գյուղերում: Շարունակեմ...

ԶԻՆՎՈՐ - Կամ, ապեր, միլիոնավոր հայեր են ապրում, հենց լավ էլ ծնվել ու մեծացել են Ռուսաստանում, Ամերիկայում, եսիմ՝ ուր: Մարդ կա՛ մի բառ հայերեն չի խոսում: Եվ առաջին հերթին հենց թուրքի արած ցեղասպանության պատճառով: Ասի՛ Ամերիկան, Ռուսաստանը իմ հայրենիքն է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Չէ, չէ, այ, ախպեր, դա նկատի չունենի:

ԶԻՆՎՈՐ - Մենք էս հողը չպաշտպանելու իրավունք չունենք:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Աստված չանի, պատկերացնո՞ւմ եք, եթե Արցախը նորից Ադրբեջանի ձեռքն ընկնի: Կկոտորեն բոլորին, ուղղակի կջնջեն:

ԶԻՆՎՈՐ - Անցյալ տարի իբր ցեղասպանության հարյուրամյակ էին նշում, փոխարենը այդ հարյուր տարվա ընթացքում իրավունքներ առաջ քաշեին, է...

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Հանգստացի, ասինք՝ ոչ մի թիզ չենք տա:

ԶԻՆՎՈՐ - *(ողնորված)*: Դե ուրեմն, մերոնք թող վերջ տան բողոք-գանգատ անելուն: Մեր չարածին

Ադրբեջանը տասնապատիկն է գրապարտում, ո՞ւմ պետքն է դա, որ մի հատ էլ պարզի, թե մեզնից ով է արդարը: Էլ չեմ ասում, որ լացողի հետ հաշվի չեն նստում, լացողին թույլ են համարում, իսկ խփողին՝ ուժեղ:

ԿԱՄԱՎՈՐ - Այդպես է:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Իսկ մերոնք միջազգային հանրության պոչից են բռնել, զզվեցինք արդեն: Էն, որ ասում են կենաց ու մահու կոիվ, սա է, էլի՜:

ԳԵՂՋՈՒԿ - Ըհր: Մենք արյուն ենք թափում, բայց էլի ուրիշներն են, չգիտեմ թե ում հետ, որոշելու, թե...

ԶԻՆՎՈՐ - Ի՞նչ են որոշում... ինչո՞ւ պիտի իրենք որոշեին, թե ես երբ գենքը ցած դնեմ...

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ասեցի՛ սուս մա:

ԶԻՆՎՈՐ - *(ձայնը ցածրացնելով, կիսաթաքուն)*: Արա, գոհված ընկերոջս մուռը չհանեմ, թուրքին դաս չտամ, նոր զինադադար ասեմ, որ իմանամ, թե հանուն ինչի արյուն թափեցինք: Ո՛նց կբանակցեն, ինչ կզիջեն, երբ զիջելու բան չկա: Ընդհակառակը, դեռ ինչքան խլած հող կա, որ ետ պիտի բերվի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ապե, դե, ամեն մարդ իր գործը պիտի անի:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - *(զինվորին)*: Ե՛րբ ես հասկանալու, որ դու

զինվոր ես ու հրաման ես կատարում՝ առանց քննարկելու իրավունքի:

ԿԱՄԱՎՈՐ- Վանտ զինվոր է:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Բողոքելու տեղ չունեմ:

ԿԱՄԱՎՈՐ- Եթե հրամանդ հստակ կատարում է և ուղեղ էլ ունի, վանտ է:

ԳԵՂՋՈՒԿ - Պատմությունները միշտ էլ կեղծվում են, ու մենք էդպես էլ չհասկացանք, որ մեզ առաջին հերթին մենք ենք խաբում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Իսկ իրականությունը ներծծվում է հողի մեջ ու եթե ոտնակոխ չեղավ, բույս կդառնա ու...

ԿԱՄԱՎՈՐ - Հայացքդ հորիզոնին հառած ես խոսում:

ԳԵՂՋՈՒԿ - Իրականությունը մարդկանց համար չի, բալամ...

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ - Ասում են՝ զինադադար, ժողովրդավարություն, բայց թաքուն մեկ-մեկ վերացնում են: Մեր ամենալավ հրամանատարներին էն ժամանակ հատհատ թիկունքից խփեցին: Դե նայեք, հիմա ովքեր են հրաման տալիս...

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես չեմ ուզում խփվեմ, ախպեր, առավել ևս՝ թիկունքից, հերն էլ անիծած:

ԶԻՆՎՈՐ - Բա այդքան զոհերի դիմաց մի բան չվերցնե՞մք, նոր դադար տայինք: Իբր թե՛ դա-

դար, մե՛զ համար՝ դադար, ոչ թե իրենց: Ամեն բոպե կարող է խփվեմ, բա չիմանամ՝ ինչի համար գոհվեցի:

ԿԱՄԱՎՈՐ - *(վաշտի հրամանատարին)*: Զոհերը երբ են ավելի շատ լինում, կովո՞ւմ, թե՛ այսքան տարի պարբերաբար ձգվող զինադադարների ժամանակ:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Տո եսի՞մ, է... Ես գիտեմ, որ քեզ ասեմ:

ԳԵՂՋՈՒԿ - Գնանք հասնենք մեր գործերին, քանի վարուցանքսի ժամանակը չի անցել, թե չէ արդեն 25 տարի իբր թե անկախ ենք, բայց նույն...

Կրակոցը խոցում է զինվորին, բուրդը մետվում են տարբեր կողմեր...

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

2018 թվական.

Իշխանափոխություն

ԿԱՄԱՎՈՐ ՄԵԿԸ - Ի՞նչ է պատահել, ժողովուրդ, էս ո՞ր եք վազում:

ՇԱՐՔԱՅԻՆ ՄՅՈՒՍԸ - Հեղափոխություն է:

ԿԱՄԱՎՈՐ ՄԵԿԸ - Չի կարող պատահել:

ՇԱՐՔԱՅԻՆ ՄՅՈՒՍԸ - Չես ուզո՞ւմ, արա, չեմ հասկանում:

ԿԱՄԱՎՈՐ ՄԵԿԸ - Է, ուզենք, ո՞վ չի ուզի...

ՏՂԱ - Պապան ուշացավ, բա որ դրանք պապային...

ԿԻՆ - Բան չի փոխվելու, մի մտածի:

ՏՂԱ - Ո՞նց թե չի փոխվելու, բա մենք...

ԿԻՆ - Մեզ համար կփոխվի ամեն ինչ... Կայֆ...

ՏՂԱ - Դե, ես գնացի:

Ամուսինը հասնում է կնոջը, կինը կառչում է նրա թևից, լրագրողը երկար ձողին ամրացրած հեռախոսով պտտվում է նրանց շուրջը: Ամենուր խրամատում խփված զինվորներ են:

ԿԻՆ - Անկախությունից ի վեր, այս ամբողջ տարիների ընթացքում՝ հազարավոր զոհեր, ոչնչի համար:

ԱՄՈՒՍԻՆ - Այո: Ոտիս տակ քոր եկավ:

ԼՐԱԳՐՈՂ - Քանի թիզ քորենք

ԱՄՈՒՍԻՆ - Արա, դե, էդ էլ ես ասեմ: Ես ճառ ասեմ, թե՛ զանգ կախեմ:

ԿԻՆ - *(հաճույքով կատարելով)*: Դու ասա, մենք կկախենք... Ում որ պետք է:

ԼՐԱԳՐՈՂ - Հիմա ինչ ենք անելու:

ԱՄՈՒՍԻՆ - Հանգիստ նստեք տեղներդ: Ի՞նչ ես նայում, ես ինչ եմ ասում, մենք ասում ենք՝ ո՞նց կարող ենք հանգիստ նստել ու նայել, իսկ դուք գիտե՞ք, թե ինչքան գործ կա անելու: *(Դադար:)* Դե հանգիստ նստեք տեղներդ, վերջ, լայվի ավարտ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

2020 թվական.

քվիդ և նախապատերազմ

ԱՄՈՒՍԻՆ - Ասինք, չէ, մի արեք: Ահա արդյունքը: Ո՞վ է մեղավոր: Հը՛: Իհարկե, քաղաքացին: Միայն քաղաքացին:

ԼՐԱԳՐՈՂ - Դրսում, թե՛ ներսում: Իսկ զինվորը քաղաքացի է:

ԱՄՈՒՍԻՆ - Բա ինչ է:

ԼՐԱԳՐՈՂ - Դե, ուրեմն մեղավոր է: Գրեցի:

ԱՄՈՒՍԻՆ - Ի՞նչ գրել, այ տղա, կյանքից հեռու ես մնացել՝ լայվ, լայվն է կյանքի աղբյուրը, ավիշը, ընթացքը... Ես ինչ եմ ասում: Մենք... մենք ինչ ենք ասում...

ԼՐԱԳՐՈՂ - Դե, որ կարդան...

ԿԻՆ - Կարդան ինչ մի...

ԱՄՈՒՍԻՆ - Որ մեր ժամանակ լույս ու գազ, ատոմակայան չկար, չէինք ապրում...

ԼՐԱԳՐՈՂ - Կար, չէին տալիս... Գրեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Բա գրի, բա ես քեզ չեմ ասել, որ ամեն ինչ պետք է գրել, ստորագրել...

ԼՐԱԳՐՈՂ - Կստորագրե՞ք:

ԱՄՈՒՍԻՆ - Ի՛, ես հո... Մենք ինչ ենք ասում... Ես դազագիր բացող եմ, ոչ թե ստորագրող, եթե նման հարց լինի, ես ժողովրդի հետ պետք է քննարկեմ... Եվ ընդհանրապես, ամեն հարց, որը

կապված է ազգի կյանքի ու ճակատագրի, անվտանգության ու բարգավաճման հետ, մենք պետք է քննարկենք... (Հանկարծ շուրջը նայելով): Ի՞նչ ձայներ են, ի՞նչ եք ասում... ո՞ւմ հետ... Չեմ լսում:

ԼՐԱԳՐՈՂ - Ներողություն, որ հարցնում եմ: Իսկ հիմա պահը չէ... ըըը...

ԱՄՈՒՍԻՆ - Չէ, երբեք էլ պահը չէ: Եվ ընդհանրապես, ով ուզում է, թող բանակցի, ստորագրի, ես ինչ կապ ունեմ:

Հեռանում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Պատերազմ

Տարբեր կողմերից թե՛ մարտերի ձայներ են լսվում: Բուժքրոջ ուղեկցությամբ սանհուտարները բերում են նոր վիրահատված վաշտի հրամանատարին:

ԳԵՂՋՈՒԿ - (սանհուտարներին): Էդ մահճակալն ազատ չի, տղա ջան:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ազատ է, եթե իրեր ունի՝ հավաքեք, տանեմ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Վիրուսից մահացավ, չէ: Ես ասում էի...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - (դժկամ): Հոսպիտալ վիրուսով հիվանդ չեն բերում:

Արմենը՝ սայլակի մեջ նստած վիրավոր զինվորը, սայլակը մոտեցնում է մահճակալին, լուռ հավաքում է մահացածի իրերը:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - (իրերը վերցնելով ճշում է): Խնդրում եմ, հարցեր մի տվեք: (Դադար): Տղաներ ջան, հենց գիտակցության գա, խնդրում եմ, կանչեք...

ԿԱՄԱՎՈՐ - Աստված տա, մի օր հայերն էլ գիտակցության գան:

ՇԱՐՔԱՅԻՆ - (տնքացող վաշտի հրամանատարին): Սպասի, չչարժվես:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Գերի՛ եմ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Հայ չես: Բա խի՞ ես հայերի մեջ քեզ գերի զգում:

Վաշտի հրամանատարը կասկածանքով շուրջն է նայում, լռում է:

ԿԱՄԱՎՈՐ - Արա, հանգիստ, չես տեսնում, որ հայ է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ախպեր, հայերեն խոսող թուրք չկան:

ԿԱՄԱՎՈՐ - Կա: Հայաստանցու անձնագրերն էլ պատերազմում նվեր են ստացել, տեղյակ եմ, բայց ինքը հայ է, դեմքն ինձ ծանոթ է, տեղը չեմ բերում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ջուր...

ՀԱՐՄԵԱՑՈՒ - (ջուր բերելով): Մենք վիրավոր գերի ենք վիրահատում, թուրքը՝ ողջ-առողջ մարդկանց:

ՇԱՐՔԱՅԻՆ - Գնա, բուժքրոջը կանչի:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Վաշտու...

ԿԱՄԱՎՈՐ - Ասում եմ, չէ: 2016-ին նույն խրամատում էինք... (Շարքայինին.) Նայիր, հիշեցիր...

Շարքային ուտերն է թոքվում: Գալիս է բժիշկը:

ԲԺԻՇԿ - (վիրահաստվածին): Ի՞նչ ես գգում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ուրիշ տեղ էի...

ԲԺԻՇԿ - Իսկ հիմա:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Չգիտեմ:

ԲԺԻՇԿ - Կանցնի: *(Մյուսներին.)*

Ձեր խնամքին եմ թողնում, մինչև իմանանք, թե հարազատներն ուր են տարհանվել:

ԿԱՄԱՎՈՐ - Լավ ես, ախպեր, ինչ ես ուզում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Բան չեմ ուզում:

ԿԱՄԱՎՈՐ - Բան պետք լինի, ասա, չքաշվես:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Լրագրողները

ԼՐԱԳՐՈՂ - (կիսաձայն կարդալով բջջայինից): Ի՞նչ... Էլի կախեց... Որտեղ 10-11-ը, այնտեղ էլ 100-111-ը, հիմա էլ արդեն հազարներ...

Անսպասելի միացած լայվից պոռպկում է ամուսնու ձայնը:

ԱՄՈՒՄԵՆՈՒ ՁԱՅՆԸ ԲԶՁԱՅԻՆԻՑ - Այո, մենք աննախադեպ ցուցանիշներ գրանցեցինք, պետք է սա արձանագրել:

ԼՐԱԳՐՈՂ - Վայ, ո՞նց վախեցա: Հիմա ինչ, արձանագրեմ...

ԱՄՈՒՄԻՆ - (ներխուժելով): Ի՞նչ, ինչ գրես, էդ ո՞ւմ հետ ես խոսում:

ԼՐԱԳՐՈՂ - Ե՛ս... Հը՛... Ախ, հա՛... Ձեզ: Ձեզ հետ էի խոսում, լայվը... Էս ո՞ւր կորավ: Մի րոպե, հիմա, այն պահն էր, որ ասում եք, թե «պետք է սա արձանագրել»:

ԱՄՈՒՄԻՆ - (աչքերը կատաղի ոլորելով): Ի՞նչը:

ԼՐԱԳՐՈՂ - Ը... ցուցանիշները: Աննախադեպ:

ԱՄՈՒՄԻՆ - Ես նման բան չեմ ասել: Ես չեմ ասել ո՛չ վիրուսի, ո՛չ դիմակների, ո՛չ վակցինայի, ո՛չ Արցախի անջատման, ո՛չ միացման, ո՛չ էլ ցավալի փոխզույմների մասին...

ԼՐԱԳՐՈՂ - (ծնկաչոք): Խաղաղությունն եմ խնդրում: Ես ձեզ դեմ չեմ, ուղղակի... սխալ եմ հասկացել:

ԱՄՈՒՄԻՆ - (ծալտալով): Հա՛: Էդ ուրիշ բան: Բայց... գաղտնալսել է պետք. ինչ են խոսում մարդիկ, ինչ են գրում էդ ցանցերում, թող ցանց գործեին, որ չգործեցին, ուղարկեինք ռազմաճակատ, նստել գրում եք...

ԼՐԱԳՐՈՂ - Դեհ, հա էլի՛... Դե, ժողովարար ես, ոչինչ, դրանով են փող աշխատում:

ԱՄՈՒՄԻՆ - (ծաղրանքով): Հա, դրա համար էլ ժողովարար կման: Ամեն ժողովարար չէ, որ ժողովարար է. ժողովարար էլ կա, ժողովարար էլ: *(Հեռանում է:)*

ԼՐԱԳՐՈՂ - Այո՛... Դե հա՛: *(Հեռանում է:)*

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԳ

Հոսպիտալ

ԿԱՄԱՎՈՐ - (*հեռախոսով*): Դե, գլոբալիստների փոքրին ու աղիքներին չեն հասնի, իհարկե, բայց... չարիք են, բա ինչ են... բոլորին իրենց աղիքներով աղած ունեն:

ՇԱՐՔԱՅԻՆ - Արդեն գլուխս գնաց արանց գզվոտուքից... Բարի գալուստ դժոխք: (*հեռախոսով*): Ալո... Հա... Դե լավ, կգաս, կբերես: Հա, մամ ջան, հա... Լավ, պապան ոնց ասի: Հա, լավ նայիր:

ԳԵՂՋՈՒԿ - (*սկնարկելով սայլակի մեջ նստած Արմենին*): Լավ նայեք մեզ, մենք դեռ շատ պետք կգանք...

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - (*Արցախի բարբառով*): Ոտքս ու ձեռքս... ոնց որ թե աշխատում են: Չէ:

ԿԱՄԱՎՈՐ - Եթե զգում ես... Լավ է: Դե, դու էլ ողջ ես, ուրեմն սիրտդ էլ է տեղը:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Թոքերս են...

ԳԵՂՋՈՒԿ - Հալա, հալա...

ԿԱՄԱՎՈՐ - (*թթի տակ*): Մի տնից չենք, մի հալի ենք: (*Վաշտի հրամանատարին*.) Վիրուսով հիվանդ այստեղ չեն բերում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Վիրուս...

ՇԱՐՔԱՅԻՆ - Վիրուսից ա վախենում:

ԿԱՄԱՎՈՐ - Չգիտեմ: Գլուխդ է, ապեր, փաթաթած, թոքերդ աշխատեցրու, որ գլուխդ առողջանա:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - (*շոշափելով*): Գլուխս:

ՇԱՐՔԱՅԻՆ - Հա, չէն զգում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Հա, հիշեցի:

ԿԱՄԱՎՈՐ - Կարո՞ղ է, մեզ էլ հիշես, միասին մի խրամատում ենք եղել... Հը... 2020 -ին չէ, հիմա չէ, 2016-ի ապրիլին:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - (*Արցախի բարբառով է խոսում, ընկալելի է միայն վերջին բառը*) ... գյուղում չըմ:

ԳԵՂՋՈՒԿ - Դե, հիմա արի, արանց լեզուն հասկացի:

ԿԱՄԱՎՈՐ - Կհասկանանք, խրամատում ո՞նց էինք հասկանում, խելքը տեղը գա, կհասկանանք, հիմա ինքն իրեն չի տիրապետում: Երևի ասում է, որ էս անգամը տականքները 2016-ի կիսատն էին ավարտում: Բայց մարդիկ միշտ էլ մի ազգ ու պետություն են իրենց զգացել, այսքան տարի վերևներն են մեզ իրարից անջատել: Վերջը իրենց արածն արեցին:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էլի սկսեց...

ԳԵՂՋՈՒԿ - Միսլ է ասում:

ՇԱՐՔԱՅԻՆ - Չէ, բայց ինչքան կարելի է ասել:

ԿԱՄԱՎՈՐ - Մինչև մեր բուր ուղեղը մտնի, ու հայի վերջին խելքն աշխատի:

ԳԵՂՋՈՒԿ - Ո՛ր աշխատի:

ԿԱՄԱՎՈՐ - Թե ժանգոտել է՝ մաքրենք...

ԳԵՂՋՈՒԿ - Ժանգը կմաքրվի, արյան ու կաթի հետ ծած օտարամուրթյունը ոնց մաքրես:

ԿԱՄԱՎՈՐ - Շատ պարզ: Ասում են՝ համակարգ պիտի փոխվի: Թե ուղեղիդ չի հասնում, ազգիցս հեռու մնա:

ՇԱՐՔԱՅԻՆ - Այսինքն՝ հենց դուք եկաք իշխանության ու մի բան ձեր ասածով չեղավ, վտարելու եք:

ԿԱՄԱՎՈՐ - Վտարելո՞ւ: Դատելու ենք բոլոր գլխավոր հանցագործներին, թալանածը վերադարձնելու ենք երկրին ու բանակին: Իմ ու քո ասածը չպիտի լինի, այլ՝ օրենքի: Ամեն ինչ հնարավոր է շտկել, եթե շարժվենք ըստ անկախության հռչակագրի և մեր առաջին անկախ հանրապետության իրավահաջորդության:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Կարկանդակ կերեք, քանի տաք է, թե չէ՝ ձեր լեզվակո՛վին վերջ չկա:

ՇԱՐՔԱՅԻՆ - Մոտեցրու բոլորին:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Շնորհակալ եմ, չեմ կարողանում...

ԿԱՄԱՎՈՐ - Ես կօգնեմ: Սեղանի շուրջ նստելը մտերմացնում է:

ԳԵՂՋՈՒԿ - Մարդը մարդու հետ մինչև հաց չկիսի, չի մտերմանա:

ԿԱՄԱՎՈՐ - Երազում եմ յոթ որդով սեղան նստել:

ԳԵՂՋՈՒԿ - Տա Աստված, որ նպա-

տակիդ հասնես:

ՇԱՐՔԱՅԻՆ - *(պատը թակելով)*: Հարևան, եկուր հոս...

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Ավելի մտերիմ է, երբ նույն բուռումից ես ուտում:

ԳԵՂՋՈՒԿ - Հա, աղջիկ ջան, ես էլ չեմ սիրում, որ մարդ ու կին տասը մետրանոց սեղանի մոտ են նստում, իրարից հեռու, ամեն մեկը սեղանի մի ծայրին: Երբ այգում իրար խտտած երկու ջահել եմ տեսնում, սիրտս փառավորվում է:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Ի՞նչ սեռի:

ՀԱՐԵՎԱՆ - Ես մեկ սեռ կը ճանչընամ, այսինքն՝ երկու: Հարամություն չեմ սիրեր: Աս ի՞նչ է, կարկանդակ է... Չուզեր, չէ:

ԳԵՂՋՈՒԿ - Մեռնեմ կնկաս...

Բուժքույրը վագելով ներս է գալիս, նետվում դեպի գեղջուկը:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(գեղջուկին)*: Ո՞նց թե՛ դեղերդ փոխել են: *(Հեռախոսով)*: Սպասի, Վահրամ, բալես, մի բռայե... *(Գեղջուկին.)* Դեղերդ ո՞ր են... Հա, ճիշտ է, սրանք են, էլի բան կամ մոտդ:

ԳԵՂՋՈՒԿ - Չէ... Ես չգիտեմ...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(գեղջուկի կնոջը)*: Ինչո՞ւ ասացիք...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - *(ամուսնուն)*: Դու չասիր, այ մարդ... ըըը... Դեղերը նկատի չունեիր: *(Բուժքոջը.)* Վայ, ցավդ տանեմ, կներես: Դեղերը Արմենի մոտ թող մսան, ին-

քը լավ մաթեմատիկա գիտի, ֆիզիկոս տղա է, դե, սխալ չի հաշվի... Ես գնում-գալիս եմ, միշտ մոտը չեմ, իսկ սա՝ ինչքան տաս, կխամի, դեղի համար ուշքը գնում է:

ԳԵՂՋՈՒԿ - *(կարկամած):* Ես... Բան եմ ասել: Երեսդ էսօր եմ տեսնում, աղջի... Ո՞ր էիր մինչև հիմա:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - *(բուժքոչը):* Աղջիկ ջան, ո՛չ հիշում է, թե ինչ պիտի խամի, ո՛չ հիշում է, թե երբ պիտի խամի, դու ամեն ինչ Արմենին ասա: *(Դեղերը խոթում է Արմենի գիրկը:)*

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(հեռախոսով):* Բալես, կգամ տուն, մի բան կանենք... Ես մաթեմատիկամ եմ հասկանում, որ քեզ բացատրեմ, էն էլ հեռախոսով:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Արմենին հարցրու, Արմենին:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Սպասի, չեմ լսում...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Տո՛ր, թող բացատրի: Էդ հեռախոսը տուր Արմենին, դու քո տված դեղերը ստուգի: *(Հեռախոսը ձեռքից խլելով:)* Ալո, բալիկ ջան, մաման աշխատում է, չի կարող քեզ բացատրել, հիմա հեռախոսը կփոխանցեմ մի շատ լավ քեռու, ինքը քեզ ամեն ինչ կբացատրի, ինքը մաթեմատիկա էլ գիտի, ֆիզիկա էլ գիտի, քո բոլոր դասերը գիտի: Հա, ֆիզիկա դեռ չեք անց-

նում, ոչինչ, մի օր կանցնեք... Հա, հա, հիմա, հիմա, մաթեմատիկա: *(Արմենին.)* Վերցրու, խնդիր չի, վարժություն է: *(Հեռախոսը տալիս է Արմենին, նրան սայլակով հրում դուրս:)* Գնա, գնա, հանգիստ բացատրի ու որ հեռախոսը հետո տաս տիրոջը:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(ստուգելով գեղջուկի դարակները և դեղ չգտնելով):* Դեղ ունե՞ս պահած:

ԳԵՂՋՈՒԿ - Ե՛ս...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Դրսից բերած դեղ ունես: *(Մյուսներին.)* Իսկ դո՞ք...

ԿԱՄԱՎՈՐ - Ի՛նչ նշանակել են, դա է, ուրիշ բան ո՛նց կխմեիր:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Չգիտեմ, աշխարհն՝ աշխարհով, ես՝ ձեզնով: Ու էլի գլուխ չեմ հանում:

ԿԱՄԱՎՈՐ - Մեզնից ոչ ոք գլուխ չի հանում: Աշխարհը՝ առավել ևս: Հա, ախպեր, հարյուր տարի է աշխարհը սպասում է, բայց մի հայ ղեկավար չեղավ՝ ասեր. «Անկախ երկիր եմ, 1920-ից միջազգայնորեն ճանաչված սահմաններ ունեմ, ես հենց այդ թղթերն եմ դնում բանակցությունների հիմքում»:

ՇԱՐՔԱՅԻՆ - Բարի գալուստ դժոխք:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Որովհետև անկախ չես, ղեկավարներդ՝ առավել ևս: *(Հեռանում է:)*

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԳ

Վերավոր սրտեր

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես էս դժոխքում ո՞նց եմ ապրում:

ՀԱՐԵՎԱՆ - Միայն քուկին ցավը չէ ատիկա:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Չի մխիթարում: Իր բուժման հարցերն էլ չի լուծում: Մի բան պիտի անենք, արտասահման տանենք, թե չէ որ այստեղ մնաց, ամեն ինչից կզրկվի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Չի մխիթարում, էդ էլ չի մխիթարում:

ԿԱՄԱՎՈՐ - Իսկ քեզ պետք է, որ ինչ-որ մեկը քեզ սփռփի, կողքդ նստի, օրորի, որ մխիթարվես, լիքը գործ կա անելու:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էս վիճակում ես էլ ո՞ւմ եմ պետք, ձգան քաշելու մատ էլ չի մնացել, որ դրանց ճակատին գնդակ շարեմ:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Կյանքը, գերագույնս, միայն ձգան քաշելով չի... Մենք քո հարցերը լուծող պետություն կգտնենք, թղթերդ թող լինեն, մնացածը ես կանեմ:

ՇԱՐՔԱՅԻՆ - (գոռում է): Կարծում ես պատերազմը պրծանվ, որ վեր կենամ գնամ:

ԿԱՄԱՎՈՐ - Պատերազմը նոր է սկսվում, և ոչ միայն ռազմաճակատում:

ՇԱՐՔԱՅԻՆ - Հա, տեսա, աթոռի կոնիվ սովորներն ինձ չեն հետաքրքրում:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Քո հարցերով հետաքրքրվի, որ մեզ լրիվ հերիք են, ուրիշներից գործ չունենք:

ՇԱՐՔԱՅԻՆ - Դու, երևում է, չես տեսնում, որ ինձ ոչինչ չի հետաքրքրում:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Ի՞նձ վրա ինչու ես գոռում, իմ մեղքը որն է:

ՀԱՐԵՎԱՆ - (շարքայինին): Կարևորը ողջ, առողջ ես:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ո՞ւմ համար:

ԿԱՄԱՎՈՐ - Ազգի, երկրի:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Ո՞նց թե՛ ում:

ԿԱՄԱՎՈՐ - Թեկուզ միայն սերունդ տալն ու նորմալ մարդ մեծացնելն հիմա...

ՇԱՐՔԱՅԻՆ - (ընդհատելով): Դրա համար նախ պիտի պայմաններ ունենամ:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Պայթում եմ նվնվան տղամարդկանցից:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես էլ՝ անուղեղ կանանցից:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Ուղեղս բավարարում է, որ քեզ պայմաններ ցույց տամ:

ԿԱՄԱՎՈՐ - Լսեք, Մեղրին տվածի հաշիվ է, Սյունիքում կոնիվներ են, մարդամեկը Սևանն ու Երևանն է ուզում: Կարո՞ղ է հասկանաք, ի վերջո:

ՀԱՐՄՆԱՅՈՒ - Մենք ամեն ինչ շատ լավ հասկանում ենք, այս երկրում էլ սերունդ չունենք տալու, որի ճակատագիրը ուրիշն է որոշելու: Դե ուրեմն, թող այդ ուրիշն էլ լինի իմ երկրի ղեկավարը:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ի՞նչ ես ապուշ-ապուշ
դուրս տալիս: Անկախությունս ոչ
մի ձեռք ու ոտքի հետ չեմ փոխի:
Կռիվ եղավ, նորից եմ գնալու:

ՀԱՐՄՆԱՑՈՒ - *(նրան դեղեր տալով):*
Զմոռանաս, սա երեկոյան ուտե-
լուց հետո պետք է խմես: Ցտե-
սություն: Կռիվ է գնալու, կռիվ
գնացողիս տես: Գնա՛...

ՇԱՐՔԱՅԻՆ - Եվ կգնամ:
ՀԱՐՄՆԱՑՈՒ - Ինչո՞վ ես կրակելու:
ՇԱՐՔԱՅԻՆ - Քթո՞վ:

ՀԱՐՄՆԱՑՈՒ - Հենակներդ չմոռա-
նաս հետո վերցնել, դրանով էլ
ԱԹՍ կխփես: Ցտեսություն:
(Գնում է:)

ԳԵՂՋՈՒԿ - Տղա ջան, աղջկա վրա
ինչո՞ն ես գոռում: Ջահել է, սիրտը
մի՛ կոտրի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Օ՛ֆ, եսի՛մ, է, նյար-
դերս էլ չեն դիմանում: Ո՞նց եմ
հասկանում սպարտացիներին...
Ախպեր, ես չեմ ուզում բեռ լինեմ:

ԳԵՂՋՈՒԿ - Ա՛յ տղա, բեռ ինչու ես
լինում, սերունդ պիտի տաս:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Հա, Համո ջան,
ճիշտ է ասում, դա հիմա մեծ գործ
է, ես էլ հիմա նոր եմ հասկանում,
թե ինչու են հայերը միշտ ուզել
տղա երեխա ունենալ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ճիշտ եք ասում... Բայց
ինձ կանխի՞ էդ աղջիկը:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Դե որ վրան քիչ
գոռոռաս...

ԿԱՄԱՎՈՐ - Ինքը՛ չգիտեմ, ապեր,
բայց դու ես ոնց որ թե միտքդ
փոխում արդեն:

ՇԱՐՔԱՅԻՆ - Իսկ դո՞ւ... Քեզ դրել
ես գուշակի տեղ, ամեն ինչ նա-
խօրոք գիտես:

ԿԱՄԱՎՈՐ - Աչք ունե՛մ՝ տեսնում եմ,
ականջ ունե՛մ՝ լսում եմ: Ուշադ-
րությունդ ուրիշն է գրավում:
Բայց դու նրա հաստատակա-
մությունն ու հայրենասիրությու-
նը չունես:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Ոչ էլ նրա քաշա-
ծը կտանի կամ կյանքին կդիմա-
նա. չորս երեխա ունի, դու
պահող պտուղ չես: Մտքիդ օգտ-
վել կա, հա՛, տես, նամարդություն
չանես, քո հարսնացուով բավա-
րարվի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էս ինչ մի վրա տվիք:
Կարո՞ղ է իմ ճաշակն էլ հարցնեք,
ինձ ինչի՞ տեղ եք դրել:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Մենք ինչ գործ
ունենք՝ քեզ ինչի տեղ դնենք,
մենք քեզ ո՞ւմ տեղն ենք դրել: Վի-
րավոր ես, հասկանում ենք, քեզ
խնամք է պետք... Լավ, մի ջղայ-
նացի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես մեր ունեմ, հան-
գիստ: Մայր:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Շատ լավ է,
Աստված գլխիցդ անպակաս ա-
նի, քեզ էլ, իրեն էլ առողջություն
տա, տղա ջան:

ԳԵՂՋՈՒԿ - Ես, իհարկե, ներողույթ-
յուն, որ ընդհատում եմ ձեր
խոսակցությունը... Շաքարով
կտրեմ, էլի, բայց որ էս մեկը... Ե-
թե չորս երեխա ունի, կարող է ա-

մուսի՛ն էլ ունենա, հը: Ի՞նչ կասե՛ք:

Լռություն:

ԿԱՄԱՎՈՐ - Կունենա, բա ի՛նչ կանի, դրա համար էլ ասում ենք, որ սա հեռու մնա:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - *(Արմենին՝ շշուկով):* Չունի: Զոհվել է:

ԳԵՂՋՈՒԿ - *(Կնոջը՝ շշուկով):* Դու քեզ չես կորցնում, գիտե՛ս: Ասել եմ՝ գործ չունես:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Բա ո՞վ ունի, մեկը պիտի՞ մտածի էս մասին: Էն որբերին մեկը պիտի տիրություն անի:

ԳԵՂՋՈՒԿ - Էդ վիճակում...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Հա, ի՛նչ կա որ, ավելի հանգիստ, կշռադատված, առանց ձեռք բարձրացնելու: Երեխաներն էլ չեն համարձակվի կոպտել կամ չընդունել:

ԳԵՂՋՈՒԿ - Էդ մեկը չես իմանա...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Էդ էլ դու իմացիր:

ԳԵՂՋՈՒԿ - Ի՛, այ՛... աղջիկ, որ էդքան չիմանայի, քեզ չէի առնի: Թե էդքան հասկանում ես, դե մնացածի մասին էլ մտածիր:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Քեզ որ մնար, դու էլ չէիր ամուսնանա: Իսկ ուրիշների մնացածի մասին թող իրենք մտածեն, էդ իմ ու քո գիտենալիք գիտելիքը չի:

ԳԵՂՋՈՒԿ - Բա՛...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - *(ձայնը բարձրաց-*

նելով): Մթերք եղավ՝ ո՛նց եփելն էլ կլինի:

ԳԵՂՋՈՒԿ - Չեղածի հաշիվ է:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Քո պետությունն էլ է չեղածի հաշիվ, բայց ապրում ենք: Մի քոռ կոպեկ ստացել ես, էդ տարիքիդ հասար Շուշի, վիրավորվեցիր:

ԳԵՂՋՈՒԿ - Ամեն գնացողի որ տան, ո՞ր կհասնի...

ԿԱՄԱՎՈՐ - *(սարկազմով, դառնացած):* Բա իրենց փայլը... տարի է փակվում, բյուջե են հաստատում, պարզևավճարի հարց կա, բան կա...

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Զինվորները ցրիվ եկան, էդպես թափված... Սրանք պարզևավճարի չափ են քննարկել...

ԳԵՂՋՈՒԿ - Ես եմ գնացել, ոչ ոքի չէին թողնում, ասացի՝ տուն ունեմ Շուշիում, բան պիտի վերցնեմ:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Քեզ որ մնա, ամեն տեղ տուն ունես, սուտ խոսելով ման ես գալիս:

ԳԵՂՋՈՒԿ - Ես սուտ չեմ խոսում, հայկական ամեն տեղն էլ իմ տունն է: Դու խոսքը կտուրը մի գցիր:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Ի՞նչ խոսք եմ կտուրը գցել: Դու՛ մի գցիր, մի բան էլ դո՛ւ ասա: *(Չայնը ցածրացնելով):* Ամբողջ օրը միասին եք, օգնի տղային, քար ես գցելու՝ թնդ է ցավելու, ասա՛, էլի՛, քեզնից

ինչ է գնում: Ինչ ասինք, ասիր՝
չգիտեմ...

ԳԵՂՋՈՒԿ - Լեզուդ...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Լեզուս չլիներ,
տանը կմնայիր:

ԳԵՂՋՈՒԿ - Է՛, ամբողջ կյանքում ե-
րեսով ես տալու: Ասեցի՝ շատ էի
սիրում քեզ:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Էի՛ր...

ԳԵՂՋՈՒԿ - Էդ տղան բառ չի խոս-
ում, չէս տեսնում...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Քեզ նման:

ԳԵՂՋՈՒԿ - (*հեզնելով*): «Ֆիզիկա
գիտի, մաթեմատիկոն է»...
մարդո՛ւ, էն էլ՝ չորս երեխու հետ
շփվել է պետք, նուրբ հարցեր
կան, հասկացի՛ր:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Վայ, ձյուն գա
գլխիդ, հա... հենց էդ չորս երե-
խեն կշփվեն, թե չէ ուրիշ ոչ ոք
սրան ոտքի չի կանգնեցնի: Դե,
իսկ չխոսկան լինելուց վնաս
չկա... Ի՞նչ անենք: Ավելի լավ:

ԳԵՂՋՈՒԿ - Էս կնանիքի ուզածն էն
է, որ տղամարդիկ չխոսեն:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Չես ուզում խոս-
եմ, է, դո՛ւ խոսիր, մի կես բերան
էլ դո՛ւ ասա:

ԳԵՂՋՈՒԿ - Դրա համար պետությո-
ւուն կա:

ԿԱՄԱՎՈՐ - Հիմա ասել էի, հա՛, թե
ինչ կա:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Բերանս մի բաց,
չունենամ նման պետությունը...

ՇԱՐՔԱՅԻՆ - Պետություն:

ԳԵՂՋՈՒԿ - Լավ է, վատն է, ունենք
և մերն է:

ԲՈԼՈՐԸ - Ճիշտ է:

**Բուժքույրը գալիս, բոլորին ջերմա-
չափ է բաժանում:**

ՇԱՐՔԱՅԻՆ - (*բուժքրոջը*): Ներեցեք,
դո՛ւք էլ եք կարծում, թե մենք պե-
տություն չունենք: Ներողություն:
Երևի կարծում եք, թե շատախոս
եմ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ձեր սենյակակալիցնե-
րին հարցրեք, ես խնդիր չունեմ:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - (*Արմենին, բայց
բարձր, որ բոլորը, հատկապես
բուժքույրը լսի*): Տղա ջան, ասում
են՝ դու լավ մասնագետ ես, ֆիզի-
կա, մաթեմատիկա, ասում են՝
ում հետ պարապես, գիտնական
կդարձնես:

Արմենը ժպտում է, բայց չի ժխտում:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես իմ անձնականի
թողած տպավորության համար
եմ հարցնում:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Անձնական հարցերը
երևի ձեր հարսնացուի հետ
ճշտեք, դուք նրա կյանքն եք ու
գերագույնը: Եթե պետքական,
ճիշտ բաներ եք ասում, չեք խա-
բում, ուրեմն...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Ա՛յ, հե՛նց
գերագույնը չպիտի՛ խոսի, այլ
մտածի, պետք եղած տեղը հրա-
ման տա: Գործ անելիս էլ բոլո-
րիս հավաքի ու ասի՛ դու էս ես
անում, դու՛ էս, դու էլ՝ էն:

ՇԱՐՔԱՅԻՆ - Դուք կուզեիք, որ ձեր տան մեջ այդպես լիներ:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Իսկ մեր տան մեջ հենց էդպես է, Համո ջան, առանց ամուսնուս իմացության ոչ մի քայլ չեմ արել, ոչ էլ՝ երեխաներս:

ՇԱՐՔԱՅԻՆ - Քիչ առաջ ուրիշ բան էիք խոսում:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Ուրիշ բան չէի խոսում, հենց դա էլ ասում էի: Իսկ տեսնողը պիտի ճիշտը տեսնի, ճիշտ հասկանա: Ինչը ես խոսում էի, ինքն էր թույլ տալիս, որ խոսում էի: Համ էլ խոսում էի, որովհետև իրեն վերաբերող հարցերում է ինքը համեստ, ոչ թե ընտանիքի կամ էլ ազգի: Գիտե՞ս, ինչ հայրենասիրական երգեր է երգո՞ւմ: (*Ամուսնուն.*) Կերգե՞ս, լսենք:

ԳԵՂՋՈՒԿԻ - (*լուսակուսած*): Սիրտ չկա:

ԿԱՄԱՎՈՐ - Սիրտ թողեցին, որ մարդը երգի:

ԱՐՄԵՆ - (*հուզիչ երգ է երգում՝ արտասովորով*): Մայրս այնքան լավ էր երգում...

ԿԱՄԱՎՈՐ - Բուժվենք, կգտնենք: Ամեն ինչ ետ կբերենք:

ԳԵՂՋՈՒԿԻ - Հողը կսպասի՝ աչքը ճամփին, կարոտը սրտում, լուռ ու համբերատար:

Բուժքույրը բուռից ջերմաչափերը ետ է վերցնում: Արմենը արցունքը թաքցնում է:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - (*Արմենին, շուկով*): Երեխեքը շատ դաստիարակված են: (*Ամուսնուն՝ բարձրաձայն:*) Դե, ես գնամ, հաց-մաց սարքեմ, իրիկունը կգամ: (*Առանձին՝ նրա վերմակը շտկելով:*) Դու էլ տեղիցդ շարժվի, երկուսն էլ լավն են:

Գնում է:

ՏԵՍԱԲԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Տեղահանումներ

ԳԵՆԵՐԱԼ - Մարդկանց պետք կլինի տեղահանել:

ԿԻՆ - Թող իրենք իրենց հանվեն, ոնց չգնացին կռվեն, թող այդպես էլ տեղավորվեն, այրեն, այրվեն, քանդեն, քանդվեն, ինչ ուզում են, թող լինեն:

ԱՄՈՒՄԻՆ - Ը... մենք ինչ ենք ասում, մենք ժողովրդավարական երկիր ենք և պետք է մեր արածները հարմար լինեն բոլոր երեք ժողովուրդների համար, մեր թշնամին, օրինակ, շատ կառուցողական միտք ունի...

ԳԵՆԵՐԱԼ - (*ընդհատելով*): Իսկ կռվածները:

ԱՄՈՒՄԻՆ - Կռվածները ինչ... (*Սպասողական նայում է կնոջը, նա չնկատելու է տալիս:*) Ռազմաճակատից դուք եք գալիս...

ԿԻՆ - (*զեներային՝ արհամարհանքով*): Հիմա դրանց ի՞նչ եք

ասում... ազատամարտիկ էին կոչվում: Բայց հիմա... այդ անունը կարծում ես սազում է նրանց:

ԱՄՈՒՍԻՆ - *(պոռթկալով)*: Բոլորը փախել են, ոչ ոք չի կռվել:

ԳԵՆԵՐԱԼ - Զինվորներ ու բնակիչներ կան, որ գերի են ընկել:

ԱՄՈՒՍԻՆ - Դե ընկել, ընկել են, էս ինչ անեմ, թող չընկնեին:

ԼՐԱԳՐՈՂ - Իննսունականներին մերոնք մի փամփուշտ իրենց համար էին պահում, որ ողջ չընկնեն գերի, բայց հիմա ադրբեջանցիները մեռածներին էլ չեն խնայում կամ էլ ողջերին են...

ԱՄՈՒՍԻՆ - Փամփուշտ չունենք:

ԳԵՆԵՐԱԼ - Ասում եմ, դրանց հաշվով, էդ գերի ընկածների...

ԿԻՆ - Հա, ինչ:

ԳԵՆԵՐԱԼ - Ոչինչ, ուղղակի ասում եմ, չենք կարող ասել՝ չեք կռվել կամ փախել եք: Կռվել են, որ գերի են ընկել: Կամ իրենց տներում են եղել, երբ...

ԿԻՆ - Որ ասում էիր՝ «քաղաքացիական էլ կան», նրանց նկատի ունեիր:

ԳԵՆԵՐԱԼ - Այո, հրադադարից հետո, խաղաղապահների տարածքներում քաղաքացիականներ են անհետացել, ենթադրություն կա, որ...

ԱՄՈՒՍԻՆ - Ես ենթադրություններով չեմ ապրում, ռեալ, հստակ ինձ տվեք:

ԳԵՆԵՐԱԼ - Անհետ կորածների մասով...

ԱՄՈՒՍԻՆ - Ա՛յ, ա՛յ, տեսնո՞ւմ ես, ինքդ ես ասում, որ անհետ կորածների մասով անգամ հստակություն չկա, ես գերիների համար ինչ կարող եմ անել:

ԼՐԱԳՐՈՂ - Լայվ մտնել կամենո՞ւմ եք, Տե՛ր մեր, որ...

ԱՄՈՒՍԻՆ - Պետք լինի, կմտնեմ: Տես՝ դրանք ինչ են ասում:

ԼՐԱԳՐՈՂ - Մերժում են:

ԱՄՈՒՍԻՆ - Էդ հասկացանք, բայց ինչ են ասում, ինչ ձևով են մերժում...

ԳԵՆԵՐԱԼ - Հա, մոռացա ասեմ, հաշմանդամների ծնողներն են եկել, ասում են...

ԿԻՆ - Բոլորին զոհվածների տներ տարեք: Թող երջանիկ լինեն, որ իրենց որդիները ողջ են, բա դա քիչ բան է: Գնանք, հենց հիմա էլ գնանք, ես էլ կգամ:

ԿԻՆ ու ԳԵՆԵՐԱԼը հեռանում են, շտապ գալիս է ոստիկանապետը:

ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Հանրահավաքներ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - *(շունչը տեղը բերելով)*: Էդ հանրահավաքների մասով...

ԱՄՈՒՍԻՆ - Դե ձեր գործն է, առաջին օրվանից եմ ցուցում տվել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Էդ հեչ, ում որ պետք էր՝ հավաքել ենք, մնացածից վտանգ չկա, թողնում ենք՝ խոսան...

ԱՄՈՒՍԻՆ - Բա էլ ինչ խնդիր կարող է լինել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ձեր դեմ խոսան, թե... Էդ պահով, ասի՝ ճշտվենք:

ԱՄՈՒՍԻՆ - Դե, մենք ինչ ենք ասում, մենք մի ժողովուրդ ենք, մեր ու ձեր չկա, բայց էդ կովածներին չիմացանք՝ ինչ անուն գրենք:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Հողը չեն կարողացել պահել, ինչ անուն են ուզում...

ԱՄՈՒՍԻՆ - Կշարունակեն էլի...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Կհսկենք: Որ պահին պետք եղավ, հարցերը կուծենք:

ԱՄՈՒՍԻՆ - Դա հասկանալի է, բայց որ չպայքարեին, ավելի լավ կլիներ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Իսկ... դա քառասունականների գործը չէր...

ԱՄՈՒՍԻՆ - Լավ, դու գնա, զինուժից տես դրսում ո՞վ կա, ասա՛ գա:

Ոստիկանապետը գնում է, գեներալն է գալիս:

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԳ

Պայքարողները

ԳԵՆԵՐԱԼ - Դիրքերից չիջածները...

ԱՄՈՒՍԻՆ - Ավելի լավ, այստեղ չեն գա, գլուխ չունեն:

ԳԵՆԵՐԱԼ - Ասում են, անտառներում մոլորված զինվորներ են

մնացել, ողջ են ու գերի չեն հանձնվում: Թուրքերը նկարել էին...

ԱՄՈՒՍԻՆ - Էդ էլ ես մտածեմ: (*Քիչ անց:*) Ո՞ւմ տարածքում են:

ԳԵՆԵՐԱԼ - Հանձնված: Ըրը... երևի...

ԱՄՈՒՍԻՆ - Էլ մեր պատասխանատվության տակ չի:

ԳԵՆԵՐԱԼ - Մերոնք են մնացել...

ԱՄՈՒՍԻՆ - Չմնայի՛ն: Դրանք ինչ զինվոր են, պիտի արդեն դուրս եկած լինեին:

ԳԵՆԵՐԱԼ - Ժամանակ չկար, չենք տվել, ըրը... այսինքն՝ չկար, համ էլ դրանք էն չկրակվող արկերի տղերքն են:

ԱՄՈՒՍԻՆ - Դրանք կրակելուց չեն պայթել:

ԳԵՆԵՐԱԼ - Դե, ով պայթել, պայթել է, բայց արկերից շատը կրակվել, չեն պայթել:

ԱՄՈՒՍԻՆ - Այ, դա՛ էլ թող հավաքողները մտածեն:

ԼՐԱԳՐՈՂ - Հա էլի, շեֆ ջան, ճիշտ ես ասում, թող մտածեն, գիտես ինչքան գոռուզավիկ ա պետք, որ էդքանը հավաքեն...

ԱՄՈՒՍԻՆ - Մի յարմրկի ապրանք ենք տվել, բա՛: Է՛... Ո՞ր մեկն ասեմ, քիթ սրբելու ժամանակ չկա... Արա, էս ո՞վ են, Է՛...

ԳԵՆԵՐԱԼ - Տարբեր. գերիների, անհետ կորածների, զոհվածների... ազգուտակ, էլի՛:

**ՏԵՍԱՐԱՆ
ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԳ**

Ցավերի բժշկում

ԿԱՄԱՎՈՐ - Ալո: Բարև: Լավ եմ, ինչ կա... Միայն չասես, թե Հայաստանից հեռանում ես: (*Լռություն:*) Ալո... Պարզ է... Դե, քեզ լավ նայի, օտարության մեջ ես... Հա, մենք էլ ենք... ճիշտ ես ասում...

ԳԵՂՋՈՒԿ - (*որ անհասնգիստ հազում էր, պոռթկում է*): Արմեն ջան, Արմեն...

ԿԱՄԱՎՈՐ - (*ընդհատելով խոսակցությունը*): Հը, ինչ եղավ, լավ չէ...

ԳԵՂՋՈՒԿ - Չէ, լավ եմ, ոչինչ... (*Արմենին.*) Արմեն ջան, մի ավտոդքի, բուժքրոջն ասա...

ՇԱՐՔԱՅԻՆ - Ես կկանչեմ:

ԳԵՂՋՈՒԿ - Չէ, ետ արի:

ԿԱՄԱՎՈՐ - (*ցածրաձայն*): Բան է պետք:

ԳԵՂՋՈՒԿ - (*կամավորին՝ ցածրաձայն*): Չէ: (*Բողորին.*) Չէ, չէ, կանչել պետք չի, էն աղջիկը զբաղված է, ո՞ր մեկիս հասնի, գալ պետք չի, լավ եմ, թող Արմենը գնա, ճշտի, ինքը ուշադիր տղա է, վրաս էլ չի գոռում ձեզ նման:

Արմենը տեղից չի շարժվում:

ԿԱՄԱՎՈՐ - (*գեղջուրին՝ շշուկով*): Չասացիր, թե Արմենին ինչի հա-

մար ես ուղարկում:

ԳԵՂՋՈՒԿ - Է՛, թող գնա, մի բան ասի՝ ճշումս, գլուխս...

ԿԱՄԱՎՈՐ - Ճշումդ, գլուխդ... ինչ: Բե՛կ համար ես կանչում, թե՛ Արմենի:

ԳԵՂՋՈՒԿ - Ի՛, ամոթ չես անում:

ԿԱՄԱՎՈՐ - Ե՛ս: Այնպիսի բան ասա, որ էն տղան էլ իրեն վատ չգգա:

ՇԱՐՔԱՅԻՆ - (*հեռախոսով*): Արա, թողի՛ն, որ... Հիմա՛ էլ ինչ... Դա դեռ հարց է՛ էս վիճակից դուրս գալ հնարավոր է, թե ոչ:

ԿԱՄԱՎՈՐ - Հարյուր տոկոս: Առողջ ուժեր կան, մասնագետներ կան, կոված, կովող ու կոիվ տալու պատրաստ տղերք կան...

ԳԵՂՋՈՒԿ - «Չկա» բառը չասեք: Գլխիս որդերն իրար են գալիս:

ԿԱՄԱՎՈՐ - Դու էլ հո ժամկետային չե՛ս, որ երկու ամիս չհերթափոխվեիր, չլողանայիր ու գլուխդ... Կներեք, ժամկետայիններ, տղերք ջան: Հա, հեչ կատակի բան չի... (*Դառնացած սարկազմով:*) Կարևորը «խաղաղապահների» ավտոն հասավ հենց ձեր իջնելուց առաջ, լողացաք, նոր գնացիք գորամաս:

ԳԵՂՋՈՒԿ - Չեր պահած զինվորը...

ՇԱՐՔԱՅԻՆ - Էդքան զոհերից հետո...

ՀԱՐՄՆԱՅՈՒ - (*կամավորին*): Էլի՛ կոիվ եք ուզում, դուք արեցիք, էլի, որ...

ՇԱՐՔԱՅԻՆ - (*հարսնացուին*): Սուս մնա:

ԿԱՄԱՎՈՐ - Թեկուզ միայն հանուն զոհվածների... պատրաստ եմ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ինչպե՞ս եք, լսվ եք:

ԳԵՂՋՈՒԿ - Հա՛, հա՛, աղջիկ ջան, բոլոր դեղերը խմել եմ: Էլի՛ տվեք:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ո՞նց թե՛ բոլորը խմել եք, մեկ հաբ պիտի խմեիք, ե՛րբ եք խմել:

ԳԵՂՋՈՒԿ - Մի կես ժամ կլինի:

ԿԱՄԱՎՈՐ - Դու էդքան համբերո՞ղ էիր: (*Բուժքրոջը*.) Հենց տվել ես, խմել է:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Երկու ժամ առաջ եմ տվել: Ի՞նչ եք զգում:

ԿԱՄԱՎՈՐ - Դե լավ, որ մի բան էն չլիներ, արդեն մեռած կլիներ, բան չկա:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Նստի, ճնշումդ չափեմ:

ԳԵՂՋՈՒԿ - Չէ, լավ եմ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - (*ճնշումը չստիպելով*): Ավելի լավ, որ լավ ես: Զուգարան չէն ուզում:

ԳԵՂՋՈՒԿ - Նոր եմ գնացել... Բա ո՞նց, արդեն գնում եմ, ոտի եմ, ցավդ տանեմ, ինձ ի՞նչ է եղել, առողջ տղամարդ եմ:

Կամավորը բզում է՝ հասկացնելով, որ Արմենն իրեն վատ կզգա: Բուժքույրը ոտքից գլուխ ստուգում է, վագում, բժշկին է բերում:

ԲԺԻՇԿ - Ինձ նայեք, խնդրում եմ, շտապում եմ, լեզուդ ցույց տուր, քանի՞ հատ ես խմել:

ԳԵՂՋՈՒԿ - Ինչքան տվել են՝ խմել եմ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Մի թերթ եմ տվել, քսան հաբ:

ԲԺԻՇԿ - Թերթիկն ո՞ր է, քանի՞ հաբ ես խմել:

ԳԵՂՋՈՒԿ - Մի երկու հատ կլիներ, Արմոն ինչ տվել է՝ խմել եմ:

Բժիշկը նայում է Արմենին, նա սայլակը քշելով ստուգում է, դեղահաբերի թերթիկը ցույց տալիս: Գեղուկը ուզում է վերցնել, Արմենը թաքցնում է: Բժիշկը խեղճում է բուժքրոջը և դուրս գնում:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - (*Արմենին՝ ատելությամբ*): Ինչո՞ւ չէիր ասում...

Բուժքրոջ բջջայինը զանգում է, նա զայրացած անջատում է, նետում Արմենի գիրկը և սայլակը քշելով՝ դուրս տանում նրան:

ԿԱՄԱՎՈՐ - (*գեղուկին*): Լավ էլ դիրքապահություն ես անում:

ԳԵՂՋՈՒԿ - Հա՛, դուրդ եկանվ, լսվ ժամապահ եմ: Մեկին էլ քեզ համա՞ր ճարեմ: Ասա՛ ում ես հավանում, դասավորեմ:

ԿԱՄԱՎՈՐ - Կնոջս: Ես մի հրաշք կին ունեմ...

ՇԱՐՔԱՅԻՆ - Արա, դե ֆեյսբուք մտնել էլ չի լինում, իրար են ուտում, բոլորն ուզում են արանք ճղեն: Լուրեր էլ լսել չի լինում, բոլորն աթոռ են փայփայում: Ես կգժվեմ...

ԿԱՄԱՎՈՐ - Բարի գալուստ դժոխք:
ՇԱՐՔԱՅԻՆ - Ես... վերջ, էլ կռիվ
 գնացող չկա...

ԿԱՄԱՎՈՐ - Հիմա չէ, լավացիր, հե-
 տո:

ՀԱՐՄՆԱՑՈՒ - Էլի պատերազմ ես
 ուզում, որ մնացածն էլ տա՛ք:

ԿԱՄԱՎՈՐ - Ուրեմն լսի, թե ինչ եմ
 ասում, նախ՝ հրադադար է, ըն-
 դամենը: Ու հետո դժգոհությունդ
 հող տվողներին ներկայացրո՛ւ՝
 ներսի ու դրսի, հասկացար:

ՇԱՐՔԱՅԻՆ - Մենք ռազմաճակա-
 տում հայրենիքի համար էինք
 կռվում, դրանք՝ իշխելու, մենք մե-
 նակ մնացինք, դրա համար էլ
 պարտվեցինք:

ԿԱՄԱՎՈՐ - Մենք չենք պարտվել:
 Այ, հենց դա չես հասկանում,
 չնայած մասնակցել ես կռվին:
 Չես հասկանում, որ հենց էդ ա-
 թոռակոծիվ անողները սրանց
 հետ միասին չթողեցին, որ կռիվ
 տանք: Ով որտեղ կարողացավ,
 տղերքի դեմը փակեց կամ զինա-
 թափեց:

ՇԱՐՔԱՅԻՆ - Լսի, այ տղա, իմ աչքի
 առաջ մի բոպեում ամբողջ վաշտ
 ու գումարտակ մսագունդ դա-
 ռան...

ԿԱՄԱՎՈՐ - Մտածված, մատնությ-
 յամբ, ջոկատները ետ քաշող գե-
 ներալով, թիկունքից խփող
 յուրայինով, թշնամուն զենք վա-
 ճառող, իսկ իր զինվորին ժամկե-
 տանց արկ տվող նախարարով,

Սփյուռքից եկած սպառազինութ-
 յունը կռվողին չտվող ղեկավար-
 ներով... Շարունակեմ, թե՛
 հասկացար:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էդ ո՞ւմ են թիկունքից
 խփել:

ԿԱՄԱՎՈՐ - Ես երկուսին հաստատ
 գիտեմ, մնացածների հաշիվն
 ինքդ արա:

ՀԱՐՄՆԱՑՈՒ - Արի՛, է, չէս տեսնում՝
 դրա հետ խոսել չի լինում: Արի
 դուրս գնանք:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Թվում է՝
 հողս եմ ցնդում... բզկտվում եմ,
 թե՛ ընկնում եմ...

ԿԱՄԱՎՈՐ - Մեր երկրի նման: Ու-
 չինչ, կանցնի:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Հս... Ազգս
 պարտվող չի, պիտի ոտքի կանգնի:

**ՏԵՍԱՐԱՆ
 ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԳ**

Սեր

ԳԵՂՋՈՒԿ - *(կամավորին):* Կներես,
 չհարցնեմ՝ սիրոս կայաթի, ասե-
 ցիր, որ հրաշք կին ունես: 2016-ին
 ամուսնացած չէիր, չէ՛: Կապ էլ
 չպահեցինք, տեսար՝ ոնց էլի հան-
 դիպեցինք: Երեխա էլ կունե-
 նաք...

ԿԱՄԱՎՈՐ - Երեկ տղա եմ ունեցել,
 խնդրել եմ գոհված ընկերոջս ա-
 նունը դնեն, մինչև ռազմաճակա-
 տից տուն վերադառնամ:

ԳԵՂՋՈՒԿ - Բայց...

ԿԱՄԱՎՈՐ - Հայրս ու մայրս նոր են գոհվել: Մեր տունը չկա, ռումբն ուղիղ տան վրա էր ընկել: Եթե կինս իմ վիրավոր լինելու մասին էլ լսեր...

ԳԵՂՋՈՒԿ - *(շալիս է):* Հալալ կաթնակեր հոր ու մոր տղա մեծանա, ազգի զավակ լինի, ցավդ տանեմ...

ԿԱՄԱՎՈՐ - Շնորհակալ եմ: *(Դադար:)* Կինս գնացել է մորս համար դեղ առնի, մինչև ետ գալը... Հրաշքով է ողջ մնացել: Մորս ու հորս թաղեցի, էլ Արցախ չգնացի, մնացի մեր գյուղի դիրքերում: Կինս մորս հետ շատ էր կապված, ծանր է տանում ծնողներիս մահը, ինձ թվաց՝ կվիժի... Ուղարկեցի հոր տուն: Էդ վիճակում, ռնց ասեի, թե վիրավոր եմ: Ես էի զանգում: Երեկ ինքը զանգեց, անմիջապես հասկացա, որ հայր եմ դարձել: Չես պատկերացնի, թե ինչ երջանիկ եմ, ուրախությունից սիրտս պայթում է, բայց... Հերս չկա, մերս չկա, ախպերս էլ է գոհվել, տունս... Մեր գյուղն էլ, չնայած Արցախի մեջ չենք, անընդհատ ոմբակոծում էին, հիմա էլ տարածքներ են խլում, տեր կանգնող չկա, զինված ուժերից մարդ չկա, միայն գյուղացիներն են պաշտպանում:

ԳԵՂՋՈՒԿ - *(խցելով ու քիթը սրբելով):* Ես քո դաշնակից ասողի...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Ի՞նչ է եղել, ա՛յ, մարդ: Ինչո՞ւ ես լացում:

ԿԱՄԱՎՈՐ - Պապի է դարձել:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Այսինքն:

ԿԱՄԱՎՈՐ - Ծնողներս գոհվել են: Ավելի շուտ չհասցրինք, որ գոնե տեսնեին, նոր...

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Վայ, վայ, վայ, քոռանամ ես... Գնամ, երեխեքին բերեմ, ինչ անեմ: *(Ամուսնուն:)* Ասա՛: *(Մեկուսի:)* Շնորհակալ եմ, Տեր Աստված, որ ինձ մեկուճարիցս չզրկեցիր:

ԿԱՄԱՎՈՐ - Կինս չգիտի, որ վիրավոր եմ: Հիվանդանոցից դուրս գրվի, ես էլ լավացած կլինեմ, միասին կգնանք մեր տուն:

**ՏԵՍԱՐԱՆ
ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ**

Բարի գալուստ դժոխք

Բուժքույրը մտնեմուն է վաշտի հրամանատարին:

ԳԵՂՋՈՒԿ - Չորս զինվորիկ էլ այս գույգից թոռ կունենամ, իմոնք արդեն մեծ են:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Էդ, քանի կար, դեմ էիր, հիմա արդեն պսակել ես, տեղյակ չեմ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(նայելով ջերմաչափի սանդղակին):* Նորմալ է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Նորմալ է՝ կա՛մ, թե՛ նորմալ է, չկա ջերմություն:

**Քուժքույրը վաշտի հրամանատարին
կաթիլային է միացնում:**

ԲՈՒԺ-ԲՈՒՅՐ - *(Արմենին):* Ինչքան
ես լռելու, նայում ես ու ոչինչ չես
ասում...

**Արմենն ուսերն է թոթվում, շրջվում է,
որ հեռանա:**

ԲՈՒԺ-ԲՈՒՅՐ - Տղաներ, օգնեք, Ար-
մենին քայլեցնենք:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Արմեն ջան,
պատկերացրո՛ւ՝ Արմենիան ես ու
ձև չի, պիտի ոտքի կանգնես...

ԿԱՄԱՎՈՐ - Ըհը, դժվարը նստատե-
ղից, այսինքն՝ աթոռից կտրվելն
է, հենց գրպանդ կարում ես, ա-
թոռից էլ կտրվում՝ ուղեղդ
սկսում է աշխատել:

ԲԺԻՇԿ - *(փաստաթղթեր բերելով):*
Մկանային հիշողությունն էլ շատ
կարևոր է, շատ բան մենք բնագ-
դով ենք անում կյանքում: Էս քո
թղթերն են, չգիտեմ՝ գրպանդ
կարելու ես, թե չէ, ես ինչ կարող
էի, արել եմ:

ՀԱՐԵՎԱՆ - Թող կարե, որ եղածն
ալ ծակ գրպանեն չընկնի:

ԿԱՄԱՎՈՐ - Արմենի աթոռի վրա
աչք չկա, իսկ այ Արմենիայի...
ու՛ր...

ԳԵՂՋՈՒԿ - Հայ գիդի աշխարհի բա-
ները, մի ամիս առաջ շատերն են
իր ձեռքը նայել, իսկ հիմա...

ՀԱՐԵՎԱՆ - Է՛, գլխուն համար նա-
յած են, այլ ոչ ոտքերուն:

ԿԱՄԱՎՈՐ - Այո, իմաստուն խոսքեր:

ՇԱՐ-ՔԱՅԻՆ - Տղերք, պատին չոփ
խրեք, մարդամեկը մի բան հա-
վանեց:

ԿԱՄԱՎՈՐ - Մարդամեկը շատ բան
է հավանում, լավին լավ եմ ա-
սում, վատին՝ վատ: Ուղղակի
մեր օրերում ճիշտ խոսքը չի անց-
նում, որովհետև համ ցեխն է
շատ, համ՝ ցեխ շարտողը:

ԳԵՂՋՈՒԿ - Դե բա փայ են փախց-
նում:

ՀԱՐԵՎԱՆ - Լավ որ պատերազմին
ատենը մեկտեղ ենք:

ԿԱՄԱՎՈՐ - Պատերազմում էլ երկր-
ների մակարդակներով են փայ
փախցնում:

ՀԱՐԵՎԱՆ - Մի բռունցք ըլլանք,
բարամ:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Մենք, թե՛
կառավարություն-ընդդիմություն
ճակատը:

ՀԱՐԵՎԱՆ - Սահմանի տարբեր
կողմերում ենք: Լավ չէ:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ցավոք
սրտի, այո, բայց մենք հեչ, գոնե
իրենք միասնական լինելին, միմ-
յանց դեմ են կռվում, ոչ թե թշնա-
մու:

ՀԱՐԵՎԱՆ - Է՛, աս հայ ժողովուրդը
ինչ պիտի ընե:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Տեսնում ես,
էլի, ոնց հարյուր տարի առաջ. է-
լի դրսի խոտ պիտի հրամցնեն,
ով կերավ՝ կերավ, ով չէ՛ չէ:

ՀԱՐԵՎԱՆ - Է, չորս կողմեն կոտո-
րում են:

ՇԱՐՔԱՅԻՆ - Երեքը գիտեի, չոր-
րո՞րդը որն էր:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Ներսը:

ՀԱՐԵՎԱՆ - Ներսը բուժելու պետք
ունի:

ԿԱՄԱՎՈՐ - Եվ այսպես ևս հարյուր
տարի:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ոգնի՛, դու սո՛ւս:

ԿԱՄԱՎՈՐ - Ավելի լավ է ոգնի լի-
նես, քան լեշ:

ՀԱՐԵՎԱՆ - Հա, ինչ է որ, ճիշտ կը-
սե մարդու մեկը, փշերիցդ կվախ-
նան, ինկար նե, պատկեցար
առջևնին, վրայովդ կանցնին: Ին-
ձի նայե, քեզի բան մը բացատ-
րեմ՝ ինչքան փափուկ՝ այնքան
կեղծ: Ինչքան կոշտ՝ այդքան ու-
ղիղ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Կոշտը միամիտ է,
շուտ է կոտրվում:

ԳԵՂՋՈՒԿ - Նայած հաստության:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Հա՛, սիրում
ենք խաբվել:

ՀԱՐԵՎԱՆ - Ինչո՞ւ: Ըսե, նայիմ: Ին-
չո՞ւ մարդիկ խաբիլ կսիրեն:
Ինքնզինքը կխաբին: Դոքթո՞ր...

ԲԺԻՇԿ - Դե... Երբ չենք կարողա-
նում խաբել... Ստիպված խաբ-
վում ենք:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - *(բժշկին):*
Հա, իրոք որ... Ի՞նչ ճիշտ ասա-
ցիք... Մենք այլևս լացելու իրա-
վունք չունենք:

ԳԵՂՋՈՒԿ - Լացելով դարդին դար-
ման չես անի:

ՀԱՐԵՎԱՆ - *(վաշտի հրամանատա-
րին):* Այո, ջանիկ... Դուն ազգի

դեմքն ես, զավակս, ազգը քու ե-
րեսիդ կնայե:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Իրավացի
եք, պատերազմը դեռ չի ավարտ-
վել: Հրադադար է: Ապաքինվեմ
ու...

ՇԱՐՔԱՅԻՆ - Արա դե, ճիշտ են ա-
սում, էլի, որ պայքարել է պետք:

ԿԱՄԱՎՈՐ - Բայց ինչպե՞ս, այս ան-
գամ ո՞ւմ ետևից ես ուզում գնալ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ռիսկերս ու շահերս
կշռադատել եմ:

ԿԱՄԱՎՈՐ - Կարևորը՝ ինքնախա-
բեությանմբ չզբաղվես: Ա՛յ, երբ
ինքներս մեզ չենք խաբի, այն ժա-
մանակ էլ մի արդյունքի կհաս-
նենք:

ՇԱՐՔԱՅԻՆ - Կմտածեմ: Համբերեք:

ԳԵՂՋՈՒԿ - Ինչքան: Էն է, գերինե-
րի ծնողներին էլ են ասում՝ համ-
բերեք, իսկ ծնողներն ինչքան
ժամանակ է ոչ մի լուր չունեն,
արդեն հույս էլ չունեն:

ԿԱՄԱՎՈՐ - Այ մարդ, նա բանակ-
ցող լինեք, բանակցությունների
հիմքում հայի թուղթ կդներ, ոչ թե
ինչ դեմ տային՝ կստորագրեք,
հիմա էլ ասում է՝ նախորդն ար-
դեն ստորագրել էր: Նախորդն
արդեն ստորագրել էր, ժամանա-
կին չեղյալ համարեիր: Ստորագ-
րել էր, դե նրա ստորագրածի
չափ տուր, ինչո՞ւ ես ավելին տա-
լիս: Այսպես պայմանավորված
պատերազմներով մինչև ո՞ւր...

ԳԵՂՋՈՒԿ - Հենց այսպես էլ գո-
յատևում ենք:

ՇԱՐՔԱՅԻՆ - Դե, հիմա ելքը պատե-
րազմն է թելադրել:

ՀԱՐԵՎԱՆ - Պատերազմը որտեղ
կանգ է առել, ուրեմն այդքանը
թող տա:

ԳԵՂՋՈՒԿ - Դրա գեները՝ լեզու-բե-
րան, չունեն ու չունեն...

ՇԱՐՔԱՅԻՆ - Դե՛ պլյուս ստորագ-
րածը...

ՀԱՐԵՎԱՆ - Մեղրին ու Շուշին էլ իր
կողմեն պարզևավճա՛ր ավելցու-
ցած է:

ԿԱՄԱՎՈՐ - Վրադիր: Ռուս-թուր-
քական առուծախին: Լավ, իսկ
հիմա եթե կոիվը պրծել է, հենց
այնպես Հայաստանից ինչո՞ւ են
տարածք տալիս:

ՇԱՐՔԱՅԻՆ - ԽՍՀՄ-ի սահման-
ներն են:

ԿԱՄԱՎՈՐ - ԽՍՀՄ չկա, արա: Ար-
դեն երեսուն տարի: Բայց իր ուր-
վականը ՋիՓիԱռԷս-ով շրջում է
հայոց հողերի վրա և ասում՝
տո՛ր: Իսկ Արծվաշենը, որ Հա-
յաստանինն էր, հանկարծ չու-
զենք: Հա՛: Ինչքան կարելի է քոռի
լոտո խաղալ ու նայել, թե ինչպես
են թշնամիներդ իրենցը հանում-
վերցնում, քեզ ասում՝ դու դնելիք
չունես, քոնը՝ բարի գալուստ
դժոխք:

ԳԵՂՋՈՒԿ - Հա, Նազարի բախտով
ընկավ մոր փորը, մեզ էլ՝ բարի
գալուստ դժոխք:

ՀԱՐԵՎԱՆ - Տղաս, ձեր գերագույնը
եկավ-չեկավ, իր պարտքն ըրավ

առաջինը հայերենն ու հայագի-
տությունը վերացնել...

ԳԵՂՋՈՒԿ - Էկավ-չեկավ, Արցախն
առանձնացրեց, ասեց՝ ես գործ
չունեմ, թող իրենք էլ բանակցեն:
Բա որ գործ չուներ, ինչո՞ւ ստո-
րագրեց այդ խաբերայությունը:

ԿԱՄԱՎՈՐ - Ասա, է, ասա՛, բայց երբ
Մինսկի համանախագահողները
եկել, ուզում են հանդիպեն Ար-
ցախի նախագահի հետ, թույլ չի
տալիս: Վերջ, դրանք էլ ջրվեցին:

ԳԵՂՋՈՒԿ - Էլ ազգի դավաճանը հո
պոզով-պոչով չի՞ լինում:

ԿԱՄԱՎՈՐ - (*շարքայինին*): Հը՛, դե
ասա՛, լսում եմ:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էլ ինչ ասեմ, ամեն ինչ
դուք ասեցիք, պակաս տեղ չթո-
ղիք: Իսկականից որ «Բարի գա-
լուստ դժոխք» արին գլխներիս ու
կնիքն էլ դրեցին: Նախկինների
հետ:

ԿԱՄԱՎՈՐ - Ձեր սևուսպիտակների
խաղը չսկսես, այլևս բացահայտ-
ված շոու է, որ նախկին ու ներկա
չկա: Էլ ոչ ոքի չես վախեցնի, թե
դուք գնացիք, նախկինները
կգան:

ՇԱՐՔԱՅԻՆ - Էսքան ժամանակ
մտածում էի, թե ինչո՞ւ էսքան վի-
րավոր են բերում-տանում,
նախկիններից մարդ չկա, հետո
հիշեցի, որ ախր դրանք էրբ կո-
վեցին, որ մի հատ էլ վիրավոր-
վելին: Գիտե՞ք, ախր դրանք...

ԿԱՄԱՎՈՐ - Երբեք էլ չեն կովել:
Վերջապես հասկանալու ես, որ

Նախկիններ ու ներկաներ չկան: Նույն ուժերը, մեկ անձին մյուսով փոխարինելով, թալանողներին հավերժ վերարտադրում են, իսկ ժողովուրդը գնալով կոտորվում է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Համակարգ պիտի փոխվի, որ այնպիսի ղեկավար ընտրվի, որը սեփական պետականության ու ազգի շահով կշարժվի:

ԿԱՄԱՎՈՐ - Ձեռ ես առնում:

ՇԱՐՔԱՅԻՆ - Չէ, ախպեր, ի՞նչ ձեռ առնել: Հասկացել եմ, արդեն հասկացել եմ:

ԿԱՄԱՎՈՐ - Դե մտածի, մտածի՛ հանուն ազգի և պետականության:

ՇԱՐՔԱՅԻՆ - Հն՛ որ:

ԿԱՄԱՎՈՐ - Ռիսկ արա, ավելի կշահես: Հանդիպենք ազնիվ պայքարում: Հանուն ազգի և անկախ պետականության... Հը՛:

ՇԱՐՔԱՅԻՆ - Պայմանավորվեցի՞նք:

ԳԵՂՋՈՒԿ - Արյունը ջուր չի դառնա:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - *(բուժքրոջն ու Արմենին)*: Եկեք, եկեք նայեք, ինչ լավն են, երբ միասին են:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Ձեզ մոտ տեղ կա՛:

ԳԵՂՋՈՒԿ - Չէ, աղջիկ ջան:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(Արմենին նայելով)*:

Մի բան արեք, տեղավորենք, նոր վիրավոր են բերել:

Արմենը իր մահճակալի վրայից վերցնում է համազգեստն ու քաշվում մի անկյուն: Նոր զինվոր է գալիս՝ հարազատների ուղեկցությամբ:

Բուժքույրը նրան նստեցնում է Արմենի մահճակալին:

ԳԵՂՋՈՒԿ - Տղա ջան, դո՛ւ ո՛նց ես վիրավորվել: Երբվանի՞ց էիր Արցախում:

ՄԱՅՐԸ - Տասը օր կլինե՛ր՝ տուն էր եկել, նորից կանչեցին, տարան:

ՀԱՅՐԸ - Հրաշքով է փրկվել:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Տղերքը... որը գոհվեց, որին գերի տարան: *(Գլուխը բռնելով)*: Ես փախա...

ՇԱՐՔԱՅԻՆ - Իսկ խաղաղապահները:

Զինվորը ուտերն է թոքվում:

ՀԱՅՐԸ - Վերջ, էլ ոչ մի բառ, պառկի, հանգստացի, հետո կպատմես:

ԳԵՂՋՈՒԿ - *(կամավորին)*: Անտրամադիր ես երևում, թե՛ վերքդ է ցավում...

ԿԱՄԱՎՈՐ - Ողջ մնացած տղերքին գոնե չեն օգնում, տասնմեկ հոգու էլի սպանել են... Ոչ էլ թողնում են, որ մարմինները հանեն, հիմա էլ՝ սա: Էլի խափխփելով սողացող պատերազմ են քարշ տալիս:

ԶԻՆՎՈՐԻ ԱԶԳԱԿԱՆԸ - Ինչ էլ որ կարողացել են հանեն, պարզ չի, թե ով է կամ ում ոսկորը...

ԲՈՒԺՔՈՒՅՐ - *(Արմենին)*: ԴՆԹ-ի անալիզ պիտի արվի, ասում են՝ չորս ամսից:

**ՏԵՍԱՐԱՆ
ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԳ**

Թռուցկաժողով

ԼՐԱԳՐՈՂ - Սպառնում են խփել ձեզ...

ԱՄՈՒՄԻՆ - Ի՞նչ ինչու են խփում, ով հրաման է տալիս, թող նրան խփեն: Ես ծառա եմ, կատարող:

ԼՐԱԳՐՈՂ - Մեկն էլ ասում էր՝ պատուհանից հանած ավտոմատները քեզ չեն փրկելու: Ծնողները սպառնում են ձեզ անգերեզման թողնել, որ կենդանիների կեր դառնաք:

ԱՄՈՒՄԻՆ - Կպատասխանենք: Ուրիշ ինչ կա: Սփյուռքի օգնություններից ի՞նչ լուր:

ԼՐԱԳՐՈՂ - Դրել ենք ծախելու:

ԱՄՈՒՄԻՆ - Էլ չեն ուղարկում...

ԼՐԱԳՐՈՂ - Ուղարկում են, բայց մեզ արդեն չեն վստահում:

ԱՄՈՒՄԻՆ - Ասա՛ կրկնակի մաքսատուրք դնեն:

ԼՐԱԳՐՈՂ - Սփյուռքը կկտրվի հայրենիքից:

**ՏԵՍԱՐԱՆ
ՏԱՄՆՆԻՆԳԵՐՈՐԳ**

Վրեժ

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ - Վրեժ, վրեժ, վրեժ...

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Հրամանատար...
ԿԱՄԱՎՈՐ - Ի՞նչ եղավ: Հանգիստ, շը՛՛՛՛՛՛... Ջուր խմի: Թող սրբեմ քրտինքդ:

ԲՈՒԺՔՈՒՅՐ - Դանակը հասավ ոսկորին:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Քաղաքականներից հույս չկա. որը աթոռապաշտ է, որը՝ փակի տակ: Միակ հույսը բանակն է:

ՇԱՐՔԱՅԻՆ - Ապեր, մեր գնդին նահանջ էին տվել, մեր մյուս գնդին՝ հարձակում, իրար էինք խփում... Դու ասում ես՝ բանակ:

ԿԱՄԱՎՈՐ - Իննսունականներին էլ ենք նույն վիճակում եղել, մահապարտների մի քանի հարյուր հոգով բեկում մտցրին:

ԲԺԻՇԿ - Վիրահատելու գործ կա՛, ասեք: Բարև ձեզ, ղնց եք:

ԿԱՄԱՎՈՐ - Կա, շատ կա: Բարև ձեզ:

ԳԵՂՋՈՒԿ - Հարևան, դու ինչ մասնագետ ես:

ՀԱՐԵՎԱՆ - Ես երկար տարիներ փաստաբան աշխատած եմ, նաև միջազգային գործեր ալ շատ ուսումնասիրած եմ:

ԲԺԻՇԿ - Ռեզյումեդու ունենք, մնաց տևտեսագետ ճարեք: *(Շարքայինին.)* Վերքդ շուտ է լավանում, ապրես:

ՀԱՐԵՎԱՆ - Մեր քովը կա:

ԳԵՂՋՈՒԿ - Մեր քովն էլ կա:

ԿԱՄԱՎՈՐ - Զինվորի ու զինվորականի պակաս չունենք:

ԲԺԻՇԿ - (*Կամավորին*): Վերքդ դեռ թաց է:

ԲՈՒԺ-ՔՈՒՅՐ - (*բժշկին վիրախժուծ մեկնելով*): Ցավերը չեն մեղմանում, բայց ցավազրկող չի խմում:

ԿԱՄԱՎՈՐ - Տեսա՞ք, տականքն ինչ կազմակերպված արեց իր չար գործը, 2016-ից արդեն գիտեին մեզ: Մեր բոլոր թշնամիները՝ ներքին ու արտաքին, իրենց դաշնակիցներով հանդերձ, հիմնովին նախապատրաստվել էին. բոլորը վա բանկ գնացին: Նախորդ ու ներկա իշխողները ձեռք ձեռքի տված գործեցին. բանակը չզինեցին, զորահավաքը դադարեցրին երրորդ օրն իսկ, կամավորներին հրամանատար չտվեցին, չուղղորդեցին, շարքերում խուճապ գցեցին, զինվորներին մոլորեցրին անտառներում, դիրքերի զիվորին չփոխեցին, որ ուժասպառ լինի... Իսկ մենք դաս չենք առնում: Պետք է ազգ-բանակ դառնանք, այլապես կորած ենք:

ԲԺԻՇԿ - Մի հար տուր, թող մտոր լինի: (*Կամավորին*.) Եթե չդիմանաս, խմիր:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Համախմբվեք, գնանք ճակատ, միասին եղանք՝ մեզ հաղթել չկա: Հրամանատար, բուժվենք, գնանք ճակատ, ոնց ասես:

ԳԵՂՋՈՒԿ - Մեր հույսը երիտասարդներդ եք, տղա ջան, տականքներին չնայեք, ես ձեր ցավը տանեմ, ձեր քաջ ոգուն մեռնեմ: Ամեն ինչ ձեր ուսերին մնաց՝ սերունդ տալ, հայրենիք փրկել... Բժիշկ ջան, ես լավ եմ, կռիվ եղավ, էլի գնալու եմ:

ԳԵՂՋՈՒԿԻ ԿԻՆ - Տեր Աստված, մեռնեմ գորությանդ, շատ չհամարես: Հայի վերջին խելքն աշխատեցրու, թող էս ժողովուրդն ուշքի գա:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Ընկերներիս կորցրի, հայրենիքս կորցնել չեմ ուզում:

ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆՏԱՐ - Ոչ ոքի չենք տա:

*10-16 դեկտեմբեր, 2020
Ծաղկաձոր-Երևան*

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Արմենուհի ՍԻՍԻՅԱՆ

*Ծիծաղը բնության տված մեծագույն պարգև է: Ծիծաղով
հաղթում են, ծիծաղով հաղթահարում, բայց առավել
ինաստուն է նա, ով կարողանում է ծիծաղել ինքն իր վրա:
Թե կարողացար անել դա,
ուրեմն ձեռնոց նետեցիր կյանքին.
Ծիծաղի՛ր ու առաջ գնա...*

ԾԻԾԱՂԵՔ

Գործող անձինք

Թմբկիկ, ծիծաղելի արտաքինով ԿԻՆ

Հեռախոսով խոսող Եհովայի ՎԿԱ

ԲԺԻՇԿ

ԿԻՆ - Ինձ համար քայլում էի, թիկունքիս ծիծաղի ձայն լսեցի: Չգարմացա: Ես գիտեմ, որ տգեղ եմ, ավելի ճիշտ, այդքան էլ սիրուն չեմ, չէ՛, ավելի ճիշտ, հնարավոր է՝ մի քիչ ծիծաղելի եմ: Հա՛, այդպես է, ինչ անենք: Ես, օրինակ, չեի ծիծաղի: Կաղին չեն ասում՝ դու կաղ ես կամ կույրին՝ կույր ես: Ինքնին պարզ է: Իսկ սրանք ամեն անգամ՝ հի՛, հի՛, հի՛ Զահրումար: Ես ծիծաղում եմ, երբ էդ ծիծաղողներից մեկը կրունկների վրա չի կարողանում քայլել, բայց համառորեն բարձրակրունկ է հագնում ու ծնկները կորացրած քայլում, կարծես սմբակների վրա լինի: Դա ծիծաղի կատարյալ պատկեր է, սովորական մարդկային քայլքի աղճատում: Կամ վերևի քաղքենի հարևանուհին. նրան թվում է, թե ռուսական արտասանությունը ինտելեկտի բարձրագույն դրսևո-

րում է: Ամեն անգամ երեխային տուն կանչելիս, իր սովորական ձայնից մեկ-երկու տոն բարձր, գեղգեղում է. «Աի՛ղը, Աի՛ղը», հետո էլ ձայնի բնատուր կոշտությամբ՝ «Հէ՛լ վերև, մխչի»: Է՛հ, ո՛ր մեկն ասեմ, որը թվեմ... Այն, ինչ որ էս եմ տեսնում, կրավարարեր կոմեդիայի թատրոնի ներկայացումների մի ողջ շարքի: Բայց իմ տեսածը նրանք չեն տեսնում: Պահ, մի քիչ կլորիկ եմ կամ, լավ, հը՛ քիչ գնդիկ, հետո՞ն ինչ: Բայց հո ինչ փափո՞յն եմ... Իսկ ինչ ասի էն վերջին մուտքի լուրճ օրիորդատիկինը, որ վերից վար ուղիղ գիծ է, մարմնի ոչ մի հատվածում է՛ք բարակում է, է՛ք հաստանում, չէ՛ր: Անունը կարծես Մառա է, թե Զառա, բայց շատ կսազեր Շվաբոա անունը: Ամեն անգամ նրան տեսնելիս հիշում եմ, որ մարդու հիմքում գոյություն ունի հենաշարժիչ համակարգ՝

կմախք անունով, և որ ողջ մարմինը հենվում է այդ կմախքի վրա: Պատկերացնում եք, քայլող կմախք՝ կրծկալ հագած, վզնոցով կամ պայուսակը ուսին գցած: Վայ, հա՛- հա՛-հա՛... Հըմմ, բոլորովին էլ չեմ ծիծաղում: Հիմա ինչ, ծիծաղեմ նրան տեսնելիս: Չէ որ տեսնում եմ: Է՛հ, շատ բան եմ տեսնում: Իսկ նրանք ծիծաղում են: Պահ, էլ ո՞նց կլինեք, դեմքս քիչ ծիծաղելի արտահայտություն ունի, հոնքերիս ձևից է երևի: Ի՞նչ անենք: Բա չգարմանամ, որ էն լուրջ դեմքով Յ-րդ հարկինը՝ թշվառ լղարը, վերջույթներն ասես կախված լինեն սեփական մարմնից, բայց իր ուսերին զգում է Պոնտոս Պիդատոսի թիկնոցը... Ինչո՞ւ, ասեմ. որպես իր ֆունկցիոնալ պարտականություն բոլոր կանանց ու աղջիկների մասին իր հեղինակավոր դատողություններն է անում՝ դատում է: *(Չայնը ցածրացրած՝ կողքերն է նայում:)* Իսկ երեկ նրա կնոջն եմ տեսել մի տղամարդու հետ թաքուն հրմշտվելիս, բա՛... Հետո ծիծաղում են դեմքիս զարմացած արտահայտության վրա: Կյանքն է հոնքերս այդպիսին դարձրել,

կյանքը... Ես էլ հո նրա պես դատավոր չեմ, որ դատեմ, բա գոնե չգարմանամ: Պիտի անցած օրը էն տղային տեսնեիք: Սպասում էի դեղատան բացվելուն, ընդմիջման ժամ էր, մոտս էլ ժամացույց չկար, չգիտեի՝ ինչքան էր պետք սպասել: Մի տղա կար, ինձ մեջքով էր կանգնած: Հարցրի. «Տղա՛ ջան, չէիք ասի ժամը»: Տղան շրջվեց դեպի ինձ՝ պոռչները ներկած, թարթիչները քսած, մազերը ներկած: Մի խունջիկ-մունջիկ եկավ, մինչև ժամս ասաց: Վայ, էնքան շփոթվեցի, որ ժամն էլ չլսեցի, շրջվեցի, շնորհակալության տեղն էլ «համեցեք» ասացի, գնացի... Ա՛յ, նրա՛ վրա ծիծաղեք, թե չէ ինձ եք տեսնում: Կարծում եք՝ իմ ծիծաղը չեկանվ, հա՛, եկանվ, բայց ինձ թույլ չտվեցի, ես կուտորական աղջիկ եմ: Յա՛, հիմա էլ դրա վրա եք ծիծաղում: Հա՛, հենց աղջիկ եմ, որ աղջիկ եմ, ասեմ՝ աղջիկ չեմ:

Ձանգ բջջայինին:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Ալլո՛:

ԿԻՆ - Այո:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Բարև ձեզ:

ԿԻՆ - Բարև:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Գիտե՞ք, ես շատե-
րին եմ այս հարցը տալիս. ինչ եք
գտել այս կյանքում:

ԿԻՆ - Իսկ դուք գիտե՞ք:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Իհարկե գիտեմ:

ԿԻՆ - Բա ինչո՞ւ եք ինձ հարցնում:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Ես հենց դրա հա-
մար եմ զանգել, որ օգնեմ ձեզ:

ԿԻՆ - Օգնե՛ք ք:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Այո:

Մի պահ դադար է տիրում:

ԿԻՆ - Ամառային անթև վարդագույն
բլուզս չեմ գտնում, մեկ էլ գծա-
վոր շորս: Կօզնե՞ք:

**Անշատում է զայրացած: Տո՛ւ, տո՛ւ,
տո՛ւ: Նորից զանգ:**

ԿԻՆ - Գուցե սա մեկ ուրի՞շ անմեղ
մեղավոր է: *(Մեկուսի:)* Նույն
հարցականն ավել է. սա երևի գի-
տի՝ ավելն անունս է:

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱ - Բայց դուք գիտե՞ք
ինչի մասին էի ասում:

ԿԻՆ - Իհարկե գիտեմ: Ուզում եք որ-
սա՞լ հոգիս: Չի ստացվի, եղա՞մ:
Չի կարելի որսալ մարդկանց հո-
գիները: Թողե՞ք ինքներս մեզ
փնտրենք, կորցնենք, տառա-
պենք, մեռնենք, հառնենք ու ինք-
ներս գտնենք մեզ: Կլինի՞
չօզնեք...

Տո՛ւ, տո՛ւ, տո՛ւ:

ԿԻՆ - Դրանք էին, էս... ո՞ւմ վկա-
ներն էին, ոնց էին կոչվում... Հա՛,
Վովայի վկայականները, չէ, Հո-
վոյի վկաները: Անցյալ օրը էդ
վկաներից երկուսը մոտեցել էին
ինձ՝ քաղցր-մեղրո հայացքով,
շողոմ ժպիտով, ես էլ նրանց սի-
րալիրությունից ոգևորված՝ փո-
խադարձ ժպիտով սպասում եմ,
թե ինչ են ուզում ասել ինձ: Դե,
մտածում եմ, մարդիկ հարգել,
մոտեցել են ինձ, ուզում են ինչ-որ
բան հարցնել, մեկ էլ դրանցից
մեկն ասում է. «Դուք գիտե՞ք, որ
աշխարհը շատ շուտով պիտի
կործանվի»: Ժպիտը դեմքիս սա-
ռեց: «Շատ շուտով»: Նայեցի
ձեռքիս ժամացույցին: «Շատ շու-
տովը», իհարկե, հարաբերական
հասկացություն է, բայց, այնուա-
մենայնիվ, եթե խոսքը իսկապես
աշխարհի կործանման մասին է,
էլ ինչի՞ համար է մինչև ականջնե-
րը ծայրեծայր հասնող ժպիտը,
ինչ է, բարի ավետիս է, թե՛ աչքա-
լուսանք: Երևի ես էլ պիտի պա-
տասխանեի. «Վայ, ինչ եք ասում,
եկեք մի հատ էլ համբուրենք ի-
րար այդ առթիվ, աչքներս
լնյա»... Փոխարենը թուրք բերա-

նիս մեջ չորացավ. գուցե այդ մասին արդեն լուրերնով են հայտնել: Պատկերացրի՝ այդ «շուտովը» հանկարծ մինչև խանութ գնալ-գալս լինի... Իսկ սա դեռ ձգած պահում է իր լայնածավալ ժպիտն ու խորհրդավոր շշնջում որպես գաղտնիք. «Ուզում եք իմանալ փրկության ճանապարհը»... Դե, գիտեք ինչ, դա իսկապես վերջն էր, իհարկե, ո՛չ աշխարհի: Բա չասե՛ի. «Ա՛յ վկայական, գնա քո Եհովային էդ տեսակ աչքալուսանք արա, իմ փրկությունը ձեզ նման վկաներից փախչելն է: Ուրեմն ամբողջ օրը ետուառաջ եք անում փողոցում, թարմ ականջ բռնում ու նույն բառերով, նույն սերտած նախաբանով, նույն լոճած ժպիտով սկսում, հա՛»...

Շրջվեցի դրանցից ու քայլերս արագացրեցի դեպի շուտով խարխիվող ապագա: Ինչ-որ մի բան, այնուամենայնիվ, ինձ ետ պահեց: Իսկ գուցե... հը... Իմաստունի՛ շտապել հեռախոսիս և ինտերնետի մուծումներն անել, երբ կարող է մինչ այդ ամենն իրականացնելը, ասե՛նք, դեռ շենքի մուտք չմտած՝ աշխարհն իրոք

կործանվի: Դա դեռ ոչինչ: Իսկ եթե ես բաց թողեցի այն փրկության գաղտնիքը, որ մեծահոգաբար պատրաստվում էր ինձ փոխանցել պայուսակը թևի տակ դրած կինը կամ նրա հետ գործի դուրս եկած մյուս փրկարարները: Դրանք ասես փրկությունը իրենց գրպաններում են պահում ու պատրաստ են անմիջապես թարմ փրկություն հրամցնել անցորդներին: Մտածեցի՝ գուցե ետ դառնամ, ապաշխարեմ: Ճիշտն ասած, ոչ էլ անհանգստանում էի, թե չեմ գտնի նրան, որովհետև ոչ բանուկ փողոցներում ու զբոսայգիներում մարդաորսի դուրս եկած մեկ ուրիշը հաստատ կհանդիպեր ինձ փրկելու: Եթե չհանդիպի, գոնե կգանգի փրկելու: Հո ինձ չէ՛ն թողնի անտեր-անԵհովա:

Ճիշտը որ ասեմ, «Հայր մերը» ծայրից-ծայր անգիր չեմ կարողանում ասել, լավ գիտեմ մինչև «Մեր հանապազօրյա հացը տո՛ր մեզ այսօրը...» ու հենց հասնում եմ «պարտքերի» հատվածին, հիշում եմ սեփական պարտքերս ու մնացածը մտքիցս թռնում է: Գրագ կգամ, էն Եհովայի վկանե-

րը ողորմություն տված չկան: Իսկ ես ողորմություն տված կամ: Անցյալ օրը բարձրանում էի փողոցով, իսկ անկյունում մի մուրացիկ կին էր նստած, գիշեր-ցերեկ այնտեղ է: Մի քանի անգամ գթացել եմ նրան, ունեցածս մանր դրամը տվել եմ ու ինձ զգացել գթության քույր, այդ օրը սեփական անձս առանձնահատուկ հարգած ու ինքս ինձնից գոհ՝ վերադարձել տուն: Օրվա մնացած մասը քիչ էր մնում ինձ հետ *Դուք*-ով խոսելի: Վերջին անգամ քիչ մնաց հուզվելի՝ գիտակցելով արարքիս հումանիտական վեհությունը, իսկ երբ արժանացա ծեր կնոջ օրհնանքներին, ողջ օրը մի տեսակ սրբացած էի ինձ զգում: Իսկ անցյալ օրը ինչ տեսնեմ: Աչքերս քոռանային, չտեսնեի. մի կոստյումավոր պարոն՝ փողկապը կապած, պատկառելի տեսքով, մոտեցավ մուրացկան կնոջը, առանց խոսք ու զրույցի վերցրեց փողի ամանը, դատարկեց գրպանի մեջ ու սուսուփուս շարունակեց ճամփան: Սեփական աչքերովս եմ տեսել: Թե ինչ կատարվեց հետս, ավելի լավ է չասեմ: Քար էի

կտրել, ավելի ճիշտ՝ մանեկեն դարձա մի երկու բոպե, ճիշտ կողքիս մանեկենների պես, որոնց խանութից հանել, դրսում էին ցուցադրում (թեև այնքան էլ նման չենք իրար, հասկանում եք): Իմիջիայլոց, հենց շարժվեցի, կողքիս կանգնած, մոր ձեռքից բռնած երեխան լացեց կամ վախեցավ, կամ ուզում էր մանեկեն մնայի՝ մի քիչ նայեր ինձ, ուրախանար, ձեռք-մեռք տար... Դե, փափուկ եմ, չէ՞... *(Խունջիկ-մունջիկ է գայիս:)*

Հա՛, մեկ ուզեցի վազեմ էդ պարոնի ետևից, բռունցքներով խփեմ-մփեմ դրա աժդահա ջանին, խայտառակեմ, ճչամ, ասեմ՝ չես ամաչում, խեղճ մուրացկանի հավաքածը ձեռքից կվերցնեն, հապա քեզ էլ նայիր, նրան էլ... Բայց մի կերպ ինձ զսպեցի, բա որ... Բա որ նրանք պայմանավորվածություն ունենան, ասենք՝ էդ կինը աշխատելիս լինի նրա համար, իսկ ես ու իմ նման գթառատ հարիֆները վճարում ենք էդ լպստած պարոնին... Ո՛նց եմ խղճում էդ տարիքի պառավներին... Բայց ասեմ, մի մեծահասակ հեռավոր բարեկամուհի

ունեմ, անցյալ օրը հանդիպեցի, խոսեցինք՝ ոնց ես, ոնց չես, հարցրի՝ աշխատո՞ւմ ես, ասաց՝ այո, հարցնում եմ՝ ինչ ես անում, ասում է՝ պառավ եմ պահում: Ասում եմ՝ բայց դու քանի՞ տարեկան ես, թե՛ յոթանասուն, հարցնում եմ՝ իսկ պառավը, ասում է՝ վաթսունհինգ...

Ամբողջ ուժով երկար ծիծաղում է, հետո կտրուկ «ժամաքում» իրեն:

ԿԻՆ - Ի՞նչ կա ծիծաղելու: Ինձ վրա՞ եք ծիծաղում: Օրինակ՝ դու, հա՛, հենց դու, ինչի՞ վրա ես ծիծաղում: Ավելի ճիշտ՝ ո՞ւմ վրա ես ծիծաղում: Ես էլ քո վրա ծիծաղեմ, հնա՛

Դահլիճից մեկը - Ծիծաղիր:

ԿԻՆ - Յա՛...

Դահլիճից մեկը - Բա՛... Ծիծաղիր, ինչքան սիրտդ ուզում է:

ԿԻՆ - Փորձանք ա... *(Ոտքից գլուխ չսփռելով նրան):* Չեմ ծիծաղի, ի՛...

Դահլիճից մեկը - Մի՛ ծիծաղիր...

ԿԻՆ - Ի՞նչ ես ուզում ինձանից՝ ծիծաղիր-մի՛ ծիծաղիր... Կուզեմ՝ կծիծաղեմ, կուզեմ՝ չեմ ծիծաղի...

Դահլիճից մեկը - Ես էլ հենց դա եմ ասում. կուզես՝ ծիծաղիր, կուզես՝ մի՛ ծիծաղիր...

ԿԻՆ - Շառ ա... Էսս ով ա... Լսիր, դու ո՞վ ես:

Դահլիճից մեկը - Բժիշկ:

ԿԻՆ - Բժիշկ: Բայց ո՞վ է քեզ... ըըը...

ձեզ կանչել այստեղ:

ԲԺԻՇԿ - Դուք:

ԿԻՆ - Ե՛ս:

ԲԺԻՇԿ - Ավելի ճիշտ՝ ձեր ծիծաղը:

ԿԻՆ - *(շփոթվելով՝ տեղը չի գտնում):*

Կատակ եք անում:

ԲԺԻՇԿ - Չէ: Չնայած վատ չէր լինի

կատակելի, որ ծիծաղեիր:

ԿԻՆ - *(մեկուսի):* Շան ա...

ԲԺԻՇԿ - Գիտեք, ինչքան եք գեղեց-

կանում, երբ ծիծաղում եք:

ԿԻՆ - Հա՛... *(Խունջիկ-մունջիկ է գա-*

լիս տեղում): Լավ, իսկ կասեիր,

ինչու եք ուզում, որ ծիծաղեմ:

ԲԺԻՇԿ - Նախ, որովհետև, շատ գե-

ղեցկանում եք. ժպտացողը ար-

դեն գեղեցիկ է: Տեսեք, դուք

հիմա ժպտում եք, ես էլ ուզում եմ

պատասխանել ձեզ նույն կերպ:

Ու ձեզ արդեն դուր եմ գալիս,

ճիշտ է:

ԿԻՆ - *(շարունակելով սեթևեթել):*

Դե, ոնց ասեմ...

ԲԺԻՇԿ - Երկրորդ. մարդը կենդա-

նուց տարբերվում է ծիծաղով:

Երրորդ. ծիծաղը շատ օգտակար

է:

ԿԻՆ - Իսկ ես հիշում եմ, թե ինչպես

փոքր ժամանակ մի լավ թաթա-

լոշ կերա հորիցս՝ բարձր ծիծաղելու համար. «Աղջիկ երեխան էդպես բարձր կծիծաղի ամոթա»: Էդ օրվանից վախեցել եմ ծիծաղել:

ԲԺԻՇԿ - Դա բարդույթ է, որ մնացել է ձեր մանկությունից ու դրանից էլ վախ՝ ծիծաղելի լինելուց... Իրականում ծիծաղը ամենաանկեղծ բաներից է. ծնվում է հոգու խորքում ու տեղ չի թողնում կեղծավորությանը:

ԿԻՆ - Բայց լավ չի, չէ՛, երբ ծիծաղում են վրադ:

ԲԺԻՇԿ - Մարդ պիտի կարողանա ինքն իր վրա ծիծաղել. երբ կարողացավ անել դա, ուրեմն հաղթել է իրեն, ուրեմն կկարողանա շատ բան հաղթահարել:

ԿԻՆ - Գուցե ավելի մոտիկի՞ց շփվենք, դուք այնքան բան գիտեք... *(Հրավիրում է իր մոտ:)*

ԲԺԻՇԿ - *(Բժիշկը արագ բարձրանում է բեմ):* Ի դեպ, ծիծաղը օգնում է նիհարել: Որոշ գիտնականներ պնդում են, որ ծիծաղն այրում է նույնքան կալորիաներ, որքան ֆիզիկական վարժությունները: 10 րոպե տևողությամբ ծիծաղն ազատում է 20-40 կիլոկալորիայից, իսկ ուժեղ ծիծաղն

աշխատեցնում է 80 տարբեր մկաններ ու 30 բույներն էր ընթացքում այրում է 550 կիլոկալորիա: *(Սկսում է ակտիվ մարմնամարզություն անել:)*

ԿԻՆ - Հա՛... *(Ինքն էլ է նույն շարժումներն անում:)*

ԲԺԻՇԿ - Ծիծաղն օգտակար է շաքարախտի դեպքում: Օգնում է ասթմայի և բրոնխիտի դեպքում: Օգտակար է սրտի համար: Անկեղծ ծիծաղի շնորհիվ կարելի է քաղցկեղը հաղթահարել: Ավստրիայում հրապարակվել է մի գիրք՝ «Ծիծաղը բուժում է քաղցկեղը»: Հեղինակը՝ Ջիգմունդ Ֆոյերաբենդը, կարծում է, որ ծիծաղը և հիվանդությունն արտացոլում են մարդու աշխարհայացքը: Ծիծաղի ժամանակ պաշտպանական ֆունկցիաների ամրապնդումն արգելակում է չարորակ նորագոյացությունների զարգացումը:

ԿԻՆ - Ինչագոյացուցումների՞...

ԲԺԻՇԿ - *(ծիծաղում է):* Ծիծաղը շատ բարենպաստ ազդեցություն է ունենում մեր հոգեբանության վրա: *(Կինը սկսում է անկապ ծիծաղել:)* Բայց ծիծաղել պետք է ոչ միայն նրա համար, որ ամեն ինչ լավ է

և զվարճալի, այլ որ ամեն ինչ լինի՛ լավ ու զվարճալի: Այլ կերպ ասած, որքան շատ ծիծաղում է մարդը, այնքան նա առողջ է ու երջանիկ: Նվազեցնում է սթրեսային հորմոնների արտադրությունը և արյան մեջ ավելացնում է էնդորֆինի քանակը:

ԿԻՆ - Բայց եղ մորֆինը վատ բան է...

ԲԺԻՇԿ - Մորֆին չէ, էնդորֆին՝ երջանկության հորմոնը:

ԿԻՆ - Լավ կլիներ ավելի տեսանելի տեղ լիներ այդ երջանկության հորմոնիան, թե չէ՝ արյան մեջ...

ԲԺԻՇԿ - Դուք հումոր ունե՞ք:

ԿԻՆ - Հումոր: Դե կունենամ, էլի, ձեզ պետք է...

ԲԺԻՇԿ - Հումորը բոլորիս է պետք: Հումորը իրականում դժվար աշխատանք է: Խնդիրը ծագում է ինքն իրեն, իսկ ուրախանալու կարողությունը պետք է զարգացնել: Պիտի օգտագործել ծիծաղելու ցանկացած հնարավորություն: Պահպանել հումորի զգացումը և սիրել կյանքն իր բոլոր դրսևորումներով, որովհետև ծիծաղն աշխարհի մասին մեր պատկերացումները փոխում է դեպի լավը:

ԿԻՆ - Դեպի լավը... Դեպի լավը...

(Պարային շարժումներ է անում, հետո «հախաբում» իրեն:) Ձեզ լսեմ, պիտի անընդհատ ծիծաղեմ: Ի՞նչ կասեն մարդիկ:

ԲԺԻՇԿ - Կասեն՝ ի՞նչ հաճելի կին է...

ԿԻՆ - Վա՛խ...

ԲԺԻՇԿ - Շրջապատի կարծիքը մեզ թույլ չի տալիս սթափ ուղեղով չարաճճիություններ անել կամ, ինչպես ասում են, մանկության գիրկն ընկնել: Երբ մարդը տարիներով չի ծիծաղում, խնդիրները նրան սկսում են ավելի բարդ թվալ, հետո դրանք դառնում են անհաղթահարելի, սկսվում են ներզոհներն ու հիվանդությունները: Ի դեպ, աշխարհում հիմա շատ ծիծաղաթերապևտներ կան:

ԿԻՆ - Ինչե՞ր... Ծի-ծա... ծիծաղաթևապետեր...

ԲԺԻՇԿ - Ծիծաղաթերապևտներ. դրանք բժիշկներ են, որոնք բուժում են ծիծաղով: Հիվանդանոցներում կան ծիծաղի սենյակներ, որտեղ անհույս հիվանդները դիտում են կատակերգություններ, հումորիստների և կոմիկների ելույթներ: Ծիծաղն ազդում է տեսողական ընկալման վրա այնպես, որ ավելի լիարժեք ենք տես-

նում ամեն բան՝ միանգամից երկու կիսագնդերում ենք ընկալում դրանք: Բայց միայնակ ծիծաղելը դժվար է: Խմբով ծիծաղելը մի քանի անգամ ավելի հեշտ է: Այնպես որ... *(Դիմում է դահլիճին:)* Նայե՛ք իրար ու ծիծաղե՛ք: Եթե փորձեք տեսնել, կտեսնե՞ք այն ծիծաղելին, որ ունի դիմացինը իր մեջ, ուղղակի դուք չէիք տեսել, բայց որ տեսնե՞ք... *(Հիստերիկ ծիծաղում է դահլիճի վրա՝ ինչ-որ բաներ մատնացույց անելով:)* Հիմա գիտե՞ք, դուք ինչ եք անում. ձեր աղիներն եք մարզում:

ԿԻՆ - Ան... *(Նորից սկսում է ծիծաղել:)*

ԲԺԻՇԿ - Երբ լիաթոք ծիծաղում ենք, որովայնի մկանները լարվում են, և դա պրկում է աղիների հարթ մկանները, օգնում է հեռացնել շլակներն ու տոքսինները: Այնպես որ, ծիծաղը աղիների յուրատեսակ մարմնամարզություն է:

ԿԻՆ - Սպասե՛ք՝ աղիքներս մարզեմ... *(Փորը բռնում, անզուսպ ծիծաղում է:)* Վայ, էսպես որ գնա, աղիքներս չեմ պիտի են դառնալու... Վայ, էլ չեմ դիմանում...

ԲԺԻՇԿ - Ծիծաղի դեպքում մարզվում են բոլոր մկանները, և արյունը արագ հարստանում է թթվածնով: Երեք րոպեանոց ծիծաղը փոխարինում է տասնհինգ րոպեանոց մարմնամարզությա- նը:

ԿԻՆ - Ասում է՝ ծիծաղով բուժում են... Եկե՛ք բուժեմ ձեզ, հենց հիմա, հենց այստեղ... Հեեեեյյ... Ծիծաղե՛ք, բայց տակը չիշիկ անել չկա...

ԲԺԻՇԿ - Բայց սպասե՛ք, շատ ծիծաղելուց մեռնողներ էլ են եղել, ամեն դեպքում չափավոր ծիծաղե՛ք... Բան եմ ասում... Չեն հավատում... Չեք լսել՝ «ծիծաղից մեռնել» արտահայտությունը: Ժողովուրդը սուտ բան չի հնարում... Բժշկության մեջ լիքը այդպիսի դեպքեր են եղել...

ԿԻՆ - Կլինի՞ թարգեք ծիծաղելը, վերջ, հավաքվե՛ք, գնացե՛ք տուն, վերջ, վերջ... Փորձանք են էս մարդիկ, գնացե՛ք, ասում եմ, չմեռնե՛ք էստեղ հանկարծ... Վերջ, գնացե՛ք, գնացե՛ք...

Հունիս, 2020

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Մհեր ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

«Կոնցենցիան» իմ առաջին պիեսն է՝ առաջին քայլս
դրամատուրգիայի աշխարհում: Կյանքը բոլոր բեմերի
հայրն է և բոլորս խաղում ենք՝ ապրելով:
Կերպարները բեմի վրա հենց այնպես չեն ընտրվում.
Նրանք յուրաքանչյուրիս ներսում են:
Երբեմն հայտնվում ենք իրավիճակներում, երբ բոլոր ելքե-
րը փակուղի են թվում: Ի՞նչ անել, ո՞ր գնալ, ո՞ւմ կանչել...
Իսկ եթե իրենք են գալիս անսպասելի...
Վերջակետի նշանը երբեք չեմ սիրել, որովհետև կյանքը
շարունակվում է, քանի դեռ ապրում ենք:

ԿՈՆՇԵՆՑԻԱ

Գրամատիկ արտուրդ մեկ գործողությամբ

Գործող անձինք

ԱՐԹՈՒՐ - վարձով միայնակ ապրող երիտասարդ,
հաշվապահ

ՌՈՔԵՐՏ - Արթուրի ընկերը, տաքսիստ

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - առաջին հյուրը՝ անհայտ հյուրերի մեծա-
վորը

ԻՆՖԻՐՄԻ - անհայտ հյուր

ԻՆԵՐՍ - անհայտ հյուր

ԿԱԼԳԻՉԵՐԵՔԲԻՈՒՍ - անհայտ հյուր

ԿՈՆՇԵՆՑԻԱ - վերջին անհայտ հյուրը՝ մի խեղճ աղջիկ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Քեմում՝ մեկ սենյականոց կիսամութ, թափթփված բնակարան: Չախ կողմում խոհանոցն է: Քանալին չխկում է դռան մեջ: Ներս է մտնում Արթուրը, միացնում է էլեկտրական լույսը: Հագին շապիկ է, ջինսե տաբատ, թեթև կոշիկներ:

Սենյակի ձախ պատի մոտ՝ լուսամուտի տակ, սեղանն է, մի քանի աթոռ: Սեղանի վրա՝ կիսադեղնած տերևներով ծաղիկ, որի մի քանի շորացած տերև ընկած է հատակին, նոթբուք, մեծ ականջակալ, լցված մոխրաման, օդու բաժակներ, վարունգի թթու՝ ափսեի մեջ, կոկա-կոլայի կիսատ շիշ, անձեռոցիկների տուփ, կրակայրիչ, ձեռքի ժամացույց, թղթի կտոր: Երկու թիկնաթոռ՝ սենյակի կենտրոնում, որոնց վրա ցանուցիք շորեր են թափված: Չգեստապահարան, աջ կողմում՝ չհարդարված մահճակալ:

ԱՐԹՈՒՐ - *(մոտենում է սեղանին, վերցնում թղթի կտորը: Ինքնահեզնանքով):* Խզբզեցիր, պլանավորեցիր... Հը, կատարեցիր...

Թուղթը ճմրթում, շարտում է սեղանին: Հանում է բաճկոնը, գցում կախիչին, վերցնում է մոխրամանը, նստում մահճակալին, ծխում է: Բջջային հեռախոսը զանգում է:

ԱՐԹՈՒՐ - *(հանում է հեռախոսը գրպանից, նայում է կրանին, գցում է մահճակալի վրա):* Տնեցիք ինչ են ուզում... Մի լավ բան չկա պատմելու... *(Պատկում է մահճակալին):*

Դռան քակոց:

ԱՐԹՈՒՐ - *(ծուլորեն վեր է կենում, բացում է դուռը):* Ռոբերտ... Չգիտեի, որ գալու ես:

ՌՈՐԵՐՏ - *(հագնված է Արթուրի պես, բայց գլխին հովհարավոր գլխարկ է: Ներս մտնելով՝ ժպտում է):* Չե՛իր սպասում: Ուղևորս հարևան շենքում է ապրում: Սուրճ ունե՛ս, գլուխս պաթում է:

ԱՐԹՈՒՐ - Հա: Արի: *(Դուռը փակում է, գնում խոհանոց, սուրճ է եփում):*

ՌՈՐԵՐՏ - *(դժգոհ նայելով շուրջը՝ նստում է, հանում գլխարկը):* Գոնե մոխրամանը դատարկիր:

ԱՐԹՈՒՐ - *(սուրճով բաժակները ձեռքին մտնում է սենյակ):* Էլի սկսեցիք: Ապրում եմ, ինչպես ինձ հաճելի է: Չե՛ք հոգնում նույն բանն ասելուց... Ափսոս, որ Հին Հունաստանում չես ծնվել:

ՌՈՐԵՐՏ - Ինչի՛:

ԱՐԹՈՒՐ - *(նստում է մահճակալին՝ Ռոբերտի դիմաց):* Մաքրության աստվածը կլինեիր՝ Զևսի, Պո-

սեյդոնի ու մնացածի կողքին: Կլինեիր Ռոբերտոսը: *(Ծիծաղում է, վառում սիգարետը, աղմուկով կում անում սուրճի բաժակից):*

ՌՈՐԵՐՏ - Քեզ հաճելի՛ է, երբ տունդ խոզանոց է:

ԱՐԹՈՒՐ - Հաճելի է: Խոսելու բան ունեմ:

ՌՈՐԵՐՏ - Ասա:

ԱՐԹՈՒՐ - Պարտքով փող է պետք: Աշխատավարձս ստանամ...

ՌՈՐԵՐՏ - Աշխատավարձդ կստանաս, կտաս հին պարտքերդ, որ տեղ բացես նորերի համար... Մինչև երբ:

ԱՐԹՈՒՐ - Հիմա կտան, թե՛ չէ:

ՌՈՐԵՐՏ - Ընկերս ես, ո՛նց չտամ: Վաղը կփոխանցեմ բանկային քարտիդ:

ԱՐԹՈՒՐ - *(ոգևորված վեր է կենում, փորձում Ռոբերտի ճակատը համբուրել):* Կարգին տղա, անգլին ընկեր:

ՌՈՐԵՐՏ - *(ընդդիմանալով):* Գիտես, որ պաթոս չեմ սիրում:

ԱՐԹՈՒՐ - *(դեռ ոգևորված՝ նստում է մահճակալին):* Բայց պաթոսը լավ բան է:

ՌՈՐԵՐՏ - Պաթոսը որոշներին փրկում է, որոշներին էլ կործանում, մանավանդ տաքգլուխներին:

ԱՐԹՈՒՐ - *(քիչ հուզվելով):* Ես տաքգլուխ եմ:

ՌՌԲԵՐՏ - Քո լեզվով ասեմ, հաշվապահ ջան: Հիմա ավտոմեքենադ քեզ համար միայն պասիվ է, որ գլխիդ պարտքեր է կուտակում, բայց դու հանկարծ որոշեցիր և ունեցար այն: Էլ չասեմ մնացած անհասկանալի արարքներիդ մասին, որոնք մեծ պաթոսով անում ես և օրեր անց հասկանում, որ պետք չէին: Հը, տաքգլխություն չէ:

ԱՐԹՈՒՐ - *(սեղացած է, բայց փորձում է կրկին ոգևորվել):* Լավ դե... Էլի նորերդ կիտեցիր: Լսել ես Էնիգմայի վերջին գործը: Հրաշք է: Ո՞ր է նորբուքը... *(Վեր է կենում նորբուքը վերցնելու:)*

ՌՌԲԵՐՏ - Թող մնա հետո: Էնիգման վերացրել է քեզ կյանքից... Ի՞նչ կա Սոնայից:

ԱՐԹՈՒՐ - *(յրջանում, նստում է մահճակալին):* Ինչի հանկարծ հիշեցիր: Մի քանի օր է՝ չենք շփվում:

ՌՌԲԵՐՏ - Ինչի չեք շփվում... *(Նշանակալից:)* Չնայած գիտեմ...

ԱՐԹՈՒՐ - Ու ի՞նչ գիտես:

ՌՌԲԵՐՏ - Աղջիկը կյանքի ամուր և հուսալի հենարան չի տեսել՝ հանձին քեզ:

ԱՐԹՈՒՐ - Վերջ տուր: Նա ասաց, որ սկզբում սիրել է ինձ...

ՌՌԲԵՐՏ - Իսկ հետո...

ԱՐԹՈՒՐ - Հետո հասկացել է, որ այլևս ոչինչ չի գգում:

ՌՌԲԵՐՏ - Առանց պատճառի նման բան չի կարող լինել: Պարզապես քեզ չի ասել ճշմարտությունը:

ԱՐԹՈՒՐ - Առանց պատճառի կարող է լինել, հաշվի առնելով, որ նա ընդամենը աղջիկ է: Աղջիկներին հասկանալը շատ դժվար է, իսկ կնոջ առեղծվածի մասին խոսել են մեծ փիլիսոփաները, բանաստեղծները: *(Վառում է սիգարետը՝ սեփական խոսքերից ոգևորված:)*

ՌՌԲԵՐՏ - *(ժպտում է):* Նա չի ասել ճշմարտությունը, քանի որ բարեկիրթ է:

ԱՐԹՈՒՐ - *(այլ տոնով):* Օղի բերեմ, խմենք մի քանի բաժակ ու թուլանանք:

ՌՌԲԵՐՏ - Չեմ ուզում, տաքսին ինձ է սպասում:

ԱՐԹՈՒՐ - Էս ժամին:

ՌՌԲԵՐՏ - Ժամն ի՞նչ էական է: Ամեն ժամս պլանավորված է, գիտես, որ ցերեկները երեք-չորս ժամ պարապում եմ, որ ծրագրավորող դառնամ, ու կդառնամ, չկասկածես: Երեկ չես խմել:

ԱՐԹՈՒՐ - Հա, երկու դասընկերներս էստեղ էին: *(Ծիծաղում է:)* Դպրոցական օրերն էինք հիշել:

ՌՌԲԵՐՏ - Ամեն օր հարբո՞ւմ ես:

ԱՐԹՈՒՐ - Չեմ հասկանում, դու իմ ընկերն ես, թե՛ թշնամին: Փոխանակ պլաններ կազմենք կյանքում

բարձունքների հասնելու համար, եկել ու ինչեր ես խոսում:

ՌՌԲԵՐՏ - Որովհետև միայն բարձունքների մասին կարող եմ խոսել քեզ հետ, ու էդպես գուցե հարյուր տարի: Ուզում եմ, որ նպատակ դնես քո առաջ ու սկսես ապրել հանուն նպատակիդ:

ԱՐԹՈՒՐ - Էլի սկսվեց: Ես ինչ-որ մեկիդ կյանքը քննադատո՞ւմ եմ: Ոնց որ մեղավոր աշակերտ լինեմ՝ դպրոցի ուսուցչանոցում նստած: Միայն խրատեք ու քննադատեք: Կարո՞ղ է հոգեկան անբավարարվածություն ունեք ու էսպես եք լրացնում ձեր բացը: Մոռանո՞ւմ ես, էս բնակարանը վարձել եմ, որ մենակ ապրեմ ու ինքնուրույն: Ինչ է, չէի՞ կարող քույրերիս հետ ապրել ու նրանց ծախսերը պակասեցնել: Դա զոհողություն չէ, նպատակ չէ: Չնայած դա չես հասկանա...

ՌՌԲԵՐՏ - Ոչ թե զոհողություն, այլ է-գոիզմ: Քո արարքն իրոք նպատակային կլիներ, եթե քայլերիդ դեպի նպատակը, բայց միայն նստել ես ու ալարում ես: Ամեն ինչ շատ պարզ է. դա արել ես, որ հարազատներիդ քննադատությունից հեռու լինես: Անբուժելի է-գոիստ ես:

ԱՐԹՈՒՐ - *(վիրավորված ծիծաղով):*

Էգոիստ: Դաժանն ու անմարդկայինը մոռացար... Ուզում ես ասել, որ մարդ չեմ: Հացիս վերջին պատառը կկիսեմ մուրացկանների ու շների հետ: Է՛լ ինչ է պետք մարդ մնալու համար...

ՌՌԲԵՐՏ - Դա շատ քիչ է, որ մարդ կոչվես: Հավատա, աննպատակ բարիները շատ են: Մարդուն նրա մղած պայքարով են հարգում՝ ազնիվ պայքարով, բայց պայքարով: Երբ չկա պայքար, ազնվությունդ ու բարությունդ սկսում են միայն ապտակել քեզ, մինչև որ մեկ օր հոգիդ վերջնականապես խոռվում է բոլորից: Իսկ գիտես, որն է մարդու ամենավեհ առաքելությունը:

ԱՐԹՈՒՐ - Ո՞րն է:

ՌՌԲԵՐՏ - Պայքարի հետ մեկտեղ երբեք չսպանես խիղճդ: *(Արթուրը քնծիծաղում է:)* Իսկ դու բարությունդ ամեն տեղ կշռայլես, միայն թե հոգևոր անդորրդ չխանգարվի: Դա նույնպես է-գոիզմ է: Երեսուն տարեկան ես, ինչ ես ստեղծել կյանքում... չես էլ փորձում: Միայն խմես, ծխես ու փուչ երագես: Ծտողներիդ մեքենա գնեցին քեզ համար. գոնե տաքսի քշիր:

ԱՐԹՈՒՐ - Տաքսի քշելը չի կարող ծառայել իմ նպատակին:

ՌՌԲԵՐՏ - Իսկ ո՞րն է քո նպատակը:

(Վեր է կենում, գլխարկը դնում, գնում դեպի դուռը): Ասածներին մասին լավ մտածիր: Էնպես չանես, որ հագիվ ճարած աշխատանքդ էլ կորցնես: Մենակության ես տենչում, բայց Աստված չանի, որ իսկապես մենակ մնաս:

ԱՐԹՈՒՐ - *(Ռոբերտին ուղեկցելով):* Մենակ չեմ մնա: Գերեզմանիս կգաս ու շիրիմիս քարոզ կարդաս: *(Բացում է դուռը):*

ՌՈՐԵՐՏ - Վաղը փողը կփոխանցեմ: *(Գնում է:)*

ԱՐԹՈՒՐ - *(Նստում է մահճակալին՝ այլևս չթաքցնելով զայրույթը):* Գնա՛ ու տաքսիդ քշիր, չստացված հոգեբան... Մի անգամ էլ էսպես ելույթ ունեցավ՝ գլուխը ջարդելու եմ: Հերիք եղավ արդեն... *(Չեռքերով ծածկում է աչքերն ու հեկեկում:)*

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Նույն բնակարանն է: Արթուրը հագուստով քնել է: SMS է գալիս բջջալին հեռախոսին:

ԱՐԹՈՒՐ - *(արթնանում է, ծանրորեն նստում, վերցնում հեռախոսը, էկրանին կարդում է):* «Որ հայրիկը զանգում է, ինչի՞ չես պատասխանում: Եթե քեզ օրեր շարունակ չի հետաքրքրում, թե ինչպես են

ծնողներդ, գոնե նրանց զանգերին պատասխանիր, որ չանհանգստանան»: *(Վստում է սիգարետն ու պատասխան գրում:)* «Կարող եմ չզանգել կամ զանգերին չպատասխանել, բայց ավելի շատ սիրել հայրիկին ու մայրիկին, քան դուք, որ ամեն օր զանգում եք»: *(Բարկացած զգում է հեռախոսը կողքը, շարունակում ծխել: Դադար: Տեղից ելնում, զգեստապահարանից հանում է փոքրիկ թղթե կապոց, ծխելու հարմարանք, հոտոտում է կապոցի զանգվածը:)* Պետք է որ լավը լինի: Ցրվել է պետք... *(Միացնում է նոթբուքը, հնչում է Էնիգմա խմբի «Pharaoh's dream»-ը: Նստում է սեղանի մոտ, մոլուցքով ծխում զանգվածից:)*

Դադար:

ԱՐԹՈՒՐ - *(վերջացնում է ծխելը, հարմարանքն ու կապոցը դնում տեղը: Նստում է մահճակալին:)* Անպետք բան էր, ոչինչ չփոխեց: *(Կիսապառկում է, փորձում քնել:)*

Դռան թակոց:

ԱՐԹՈՒՐ - *(նստում է տեղում):* Ի՞նչ է մոռացել: Հեռախոսը... վերցրել է: Սիգարետը... չի ծխում: Մեքենայի բանալին... էստեղ չէ: Հա՛, քարոզն է կիսատ մնացել...

(Դանդաղ գնում, բացում է դուռը, զարմացած ետ քաշվում:)

Նոն Սուրբիտուսը կտրուկ առաջ է գալիս, կանգնում Արթուրի առաջ: Յինիկ տղամարդ՝ հագին ջինսե ճղճած տաբատ, սրածայր կոշիկներ, ճմրթված վերնաշապիկ: Տեսքը՝ երկար քիթ, մեծ, սուր ականջներ, մերս ընկած ու սեղմված շրթունքներ, մինչև հոնքերն իջնող սանրվածք: Նման է խլուրդի, ձեռքին տոպրակ կա:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(ծիծաղելով):*

Ողջնյն: Ուրախ եմ քեզ տեսնել:

ԱՐԹՈՒՐ - *(շփոթված):* Դու՞ ով ես:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Նոն Սուրբիտուսը:

ԱՐԹՈՒՐ - Նոն ինչ...

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Նոն Սուրբիտուս:

ԱՐԹՈՒՐ - Էդպիսի անուն կան:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Իհարկե: Դու էլ Նոն Արթուրիկը չե՞ս: *(Գայիս է սենյակ, տոպրակը կողքը դնելով՝ տիրաբար թիկնում է աթոռին, ոտքը ոտքի վրա զցած՝ ծխում:)*

ԱՐԹՈՒՐ - *(սալշած նայում է հյուրի ետևից, դուռը փակելով՝ հետևում նրան):* Որտեղի՞ց ինձ գիտես: *(Նստում է մահճակալի վրա՝ հյուրի դիմաց:)*

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Ուրեմն գիտեմ, որ եկել եմ:

ԱՐԹՈՒՐ - Ես քեզ չգիտեմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Դու ինձ շատ լավ ես ճանաչում: *(Ծիծաղում է:)*

ԱՐԹՈՒՐ - *(բարկացած):* Արդեն ազդում ես նյարդերիս վրա: Մի անգամ էլ սեպերդ ցույց տվեցիր, հատ-հատ կջարդեմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(լրջանում է):* Թուլացիր, հոգյակս:

ԱՐԹՈՒՐ - Ինչո՞ն ես եկել:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(երկինաստ):* Որ ամբողջ գիշեր արթուն մնանք:

ԱՐԹՈՒՐ - Պետք է քնեմ: Վաղն աշխատանքի եմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Գիշերը քնելը պարտադիր չէ:

ԱՐԹՈՒՐ - Երեք օր է՝ ուշանում եմ աշխատանքից:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(փաղաքուշ):*

Հոգյակս, ինչի՞ ես կորցնում գիշերը հանուն մի աշխատանքի, որ չես սիրում: Գիշերն էնքան գեղեցիկ մտքեր ու անելիքներ կան...

ԱՐԹՈՒՐ - *(տխուր նայում է հատակին):* Գիտեմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - Ողջունում եմ:

Մենք ունենք երևակայություն, որը գիշերվա ամենազեղեցիկ սպասավորն է:

ԱՐԹՈՒՐ - Օ՛հ, ուրեմն... ուրեմն առավոտյան նորից չեմ գնա աշխատանքի և կգնամ, երբ ինքս կուզեմ: Թքած ունեմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - (գոհ ծիծաղում է): Հիանալի խոսքեր:

ԱՐԹՈՒՐ - (մատր բարեկամաբար թափահարում է): Բայց դու տիպն ես, Նոն...

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - Սուրբիտոս: (Աթոռից վեր է կենում՝ վերցնելով տոպրակը): Գնամ միսը տապակելու: Ամբողջ գիշեր կուտենք ու կխամենք:

ԱՐԹՈՒՐ - (վեր է կենում մահճակալից): Խմիչքը քիչ է, երկուսիս չի հերիքի... Գնամ, խանութից բեքեմ:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - Որքան ուզես՝ խմիչք կա: Հինգիս էլ կհերիքի: Վեցերորդն էլ չի խմում:

ԱՐԹՈՒՐ - Հինգիս...

Նոն Սուրբիտոսը գլուխը դրական շարժում է: Դուրը թափում են:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - (տիրաբար): Գնա՛, դուրը բաց: Ես անցնեմ գործի: (Գնում է խոհանոց):

Արթուրը բացում է դուռը, զարմացած ետ քաշվում: Երեք տղամարդ ցինիկ ժպիտով նայում են: Հագել են ջինսե ճոճաճաճ տաբատ, ճմրթված վերնաշապիկ՝ երեքն էլ տարբեր գույնի, սուր ծայրով թեթև կոշիկներ: Մեկի ձեռքին տոպրակ կա:

ԵՐԵՔ ՀՅՈՒՐ - (միաձայն): Ողջու՛յն: Ուրախ ենք քեզ տեսնել:

ԱՐԹՈՒՐ - Դուք ով եք:

ԻՆՖԻՐՄԻ - (մեկ քայլ առաջանալով): Ես Ինֆիրմին եմ:

ԱՐԹՈՒՐ - Ո՛վ...

ԻՆՖԻՐՄԻ - Ինֆիրմին: (Տոպրակը մեկնելով): Վերցրո՛ւ, մեջը հիևզ շիշ օղի և հիևզ տուփ թունդ ծխախոտ կա, ամբողջ գիշեր կհերիքի:

ԱՐԹՈՒՐ - (վերցնում է տոպրակը): Բայց... (Շփոթվում է):

ԻՆՖԻՐՄ - Ի՛նչ բայց... (Մեկ քայլ առաջանալով, կանգնում է Ինֆիրմիի կողքին): Ես էլ Իներսն եմ:

ԱՐԹՈՒՐ - Ի-ներս...

ԻՆՖԻՐՄ - Հա:

ԿԱԼԴԻԶԵՐԵԲԵԲԻՈՒՍ - Անունս քեզ երևի շոկի մեջ կզցի: (Մեկ քայլ առաջանում է, կանգնում Ինֆիրմիի և Իներսի կողքին): Իսկ ես Կալդիչերեբբիոսն եմ: (Ծիծաղում է):

Արթուրը ապուշ կտրած նայում է:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - (ձայն է տալիս խոհանոցից): Թող ներս գան:

Հյուրերը սեմյակ են գալիս: Նկատելով խոհանոցում զբաղված Նոն Սուրբիտոսին՝ կանգ են առնում:

ԵՐԵՔ ՀՅՈՒՐ - (ուրախ ձեռքով են անում, միաձայն): Բարև, մեծավոր:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻԻՏՈՍ - (ձեռքը բարձրացնելով): Բարի լնյա, հոգյակներ:

Հյուրերը նստում են:

ԱՐԹՈՒՐ - *(շտապում է խոհանոց, Նոն Սուրբդիտուհին):* Ովքեր են սրանք: Ի՞նչ է, բնակարանս ձեզ համար հանգստյան տուն՞ն է:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(աղ է լցնում թավայի մեջ, ժպտում է՝ չնայելով Արթուրին):* Իմ Նոն Արթուրիկ, հոգյակս: Ընկերներս են՝ շատ թանկ ընկերներ: Մեկն Ինֆիրմին է, մյուսը՝ Իներսը, իսկ այն մյուսը՝ Կալդիչերեբրիուսը... Սիրում եմ այդ խելառին: *(Ծիծաղում է:)*

ԱՐԹՈՒՐ - Ինձ Նոն Արթուրիկ չասես, հասկացա՞ր: Ի՞նչ հիմար անուններ են, որ նույնիսկ գրքերում չեմ հանդիպել: Իսկ էդ Կալդիչիբուսը ոնց որ երջանիկ ապուշ լինի... մի գլուխ անհասկանալի ժպտում է...

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(խիստ):* Կալդիչերեբրիոս:

ԱՐԹՈՒՐ - Լավ, լավ, չկերա ընկերոջդ: *(Հեզնակախոս:)* Թող լինի Կալդիչե-րե-բրիուս, դա ի՞նչ է փոխում... Ինչի՞նչ ասացիր բարի լույս, գիշերվա երեքն է:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(ծիծաղում է):* Մոռացա՞ր, որ մեր օրը նոր է սկսվում: *(Լրջանում է:)* Սեղան դիր, տապական պատրաստ է:

Արթուրը չկամորեն սպասքը տանում է սենյակ, սպասքադրում: Հայտնվում է Նոն Սուրբդիտուր:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(թավայն դնելով սեղանի կենտրոնում):* Հոգյակներս, էսօր էլ սոված չենք մնա: Դե, տեղավորվե՛ք:

Երեք հյուրերը տոպրակից գոհունակորեն հանում են օդու շշերը, ծխախոտի տուփերը, դնում սեղանին: Տեղավորվում են սեղանի շուրջ՝ ձեռքներն իրար շփելով: Սեղմ հնչում է Էնիգմայի գործերից մեկը: Կալդիչերեբրիուսը օդին լցնում է բաժակները:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(հանդիսավոր):* Սիլվերսթոնի կենսիցը:

Հյուրերը բաժակները փութով զարկում ու խմում են:

ԱՐԹՈՒՐ - *(զարմացած նայում է հյուրերին):* Սիլվերսթոնն ով է:

ՆՈՆ ՍՈՒԲԳԻՏՈՍ - *(երկիմաստ):* Ինքն իրեն գիտակցաբար մահվան է հասցրել...

ԻՆՏԻՐՄԻ - Էդ հանճարեղ նիհիլիստն այլևս իմաստ չի գտել կյանքի մեջ ու ինքն իրեն սպանելով՝ բոլորից հեռացել է...

ԻՆԵՐՍ - Քարանձավի մեջ է պանկել ու օրերով ոչինչ չի արել... Դե, գիտակցված մահվան է հա-

սել: *(Բերանից լորձը թափվում է վերնաշապկի վրա:)*

**Արթուրը զզվանքով մայում է Իներ-
փն:**

ԿԱԼ ԴԻՉԵՐԵՔՐԻՈՒՍ - *(բռունցքը
ոգևորված վեր է պարզում):* Կեց-
ցն՝ Սիլվերսթոնը:

ԱՐԹՈՒՐ - Բայց դա ճիշտ է: Կփոր-
ձեր ապրել. դժվարը հենց պայ-
քարելն է... Թույլ կամք է, էլի...

ԿԱԼ ԴԻՉԵՐԵՔՐԻՈՒՍ - *(խայթվածի
պես վեր է թռչում տեղից):* Ի՞նչ
թույլ կամք: Ի՞նչ ես խոսում: Գի-
տակցված ինքնասպանները մի
բան են անում, որից մարդկույթ-
յան ինստունիները տոկոսը սարսա-
փում է, էդքանը հասկանում ես...
Նրանք կյանքի իմաստի հետ են
կռիվ տալիս, հետո կամ հոգեբու-
ժարանում են հայտնվում, կամ
սեփական կյանքին են վերջ տա-
լիս: Էնիգմայի ձայնը բարձրաց-
րեք, ինչ լավ է հնչում խոսքերիս
հետ: «Respect» գործի երրորդ բո-
պեի հիսունհինգերորդ վայրկյա-
նը հիշեցի, որից հետո մեր
մոլորակը կործանվում է ուղիղ
վաթսուն վայրկյանների ընթաց-
քում, և բոլորս փոշիանում ենք...
Հոգիս տակնուվրա է լինում...
(Հանդիսավոր:) Ոչինչ այնպես չի
ազդում հոգու վրա, որքան ե-
րաժշտությունը: *(Ինֆիրմիին:)*

Սիրելի՛ս, էս անգամ դո՛ւ լցրու բա-
ժակները, ես նորից էքստազի
մեջ եմ:

ԱՐԹՈՒՐ - Հա, Էնիգման ինձ էլ...
Հոգիս տեղից հանում է: Էդ երգն
էլ գիտեմ, բայց... Սիլվերսթոնը...
(Շփոթվում է:)

ԻՆՖԻՐՄԻ - *(լցնում է բաժակները):*
Նրա արարքը հերոսություն է:

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(բաժակը հան-
դիսավոր բարձրացնում է):* Երբ
կյանքի իմաստից կառչում ես,
հասկանում ես, որ հավերժական
դատարկություն է այնտեղ, ու ոչ
մի իմաստ էլ չկա: Ի՞նչ լիություն,
ինչ երջանկություն... *(Շիժադում
է:)* Փառաբանում են... Չէ, դրանք
հավերժական չեն, նույնիսկ
վայրկյանը չես կարող ձեռքերիդ
մեջ պահել: Միայն խավարն է
հավերժական ու վաղ թե ուշ ա-
մեն բան նորից խավարի մեջ է
ընկղմվելու: Բոլոր պատմութ-
յունները, բոլորիս անուններն ու
ամեն ինչը, որ գրված են աշխար-
հի մագաղաթե մատյանում, ոչն-
չանալու և մոռացվելու են:
Հավերժության բոցը լափելու է
դրանք: Մի հզոր ձայն նորից
հռհռալու է խավարի միջից՝ ա-
սես երբևէ ոչինչ չի եղել ու ոչ
մեկս չենք եղել... Սիլվերսթոնն
այդքանը հասկացավ ու այլևս
չուզեցավ մարդկությանը ծառա-

յել, չուզեցավ ստրուկ լինել, ինչ է թե՛ ուտելու է և ապրելու: Նա սեփական հոգին նվիրեց...

ԻՆԵՐՍ - *(բաժակը բարձրացնում է, դեմքը բավականություն է արտահայտում):* Նա կողքից է նայել ամեն մեկին ու ամեն ինչին: Թքած է ունեցել:

Քաժակները զարկվում են իրար և դատարկվում: Հյուրերն իրենց իրադրության տեր զգալով՝ անկաշկանդ ուտում-խմում-ծխում են: Արթուրը անմասնակից է այդ ամենին:

ԱՐԹՈՒՐ - *(գնում, խոհանոցից բերում է թթու վարունգի նոր բանկան):* Սիլվերսթոնի արարքը կարելի է հերոսություն կոչել, եթե նա գոնե ինչ-որ բարձունք նվաճեր և միայն դրանից հետո ինքնասպանություն գործեր:

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(տեկնոտ ծիծաղով):* «Մարտին Իդենն» ես կարդացել:

ԱՐԹՈՒՐ - Հա:

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(լրջանալով):* Ամեն ինչ էլ ոչնչանալու է խավարի մեջ, նույնիսկ բարձունքները, որոնց վրա հիմա *(հեզնական)* «աշխարհի տերերն» են կանգնած:

ԱՐԹՈՒՐ - *(զայրացած):* Այսինքն՝ պետք է ոչինչ չանել: Պետք է չապրել: Էլ ինչի՞ են մարդիկ

ծնվում, եթե չպետք է շարունակեն ապրել: Սա ինչ սատանայական քարոզ է:

ԿԱԼԴԻՉԵՐԵՔՐԻՈՒՍ - *(բռունցքը խփում է սեղանին):* Չայնդ չբարձրացնեն մեր մեծավորի վրա. մենք՝ չորսս էլ, եղբայրներ ենք, իրար զգայակից ու գաղափարակից: *(Նոն Սուբդիտոսին.)* Ինչպե՞ս էիր կոչել սրան, մեծավոր... հա՛, հասկացա՛ր, Նոն Արթուրիկ:

Հյուրերը քամահրական ծիծաղում են:

ԱՐԹՈՒՐ - *(վիրավորված նետվում է Կալդիչերեքրիուսի վրա, բռնում նրա օձիքից):* Հե՛յ, զգվելի՛, դեմքդ կջարդեմ:

Իններսն ու Ինֆիրմին փորձում են բաժանել նրանց:

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(ծեռքը տիրաբար խփում է սեղանին):* Հանգստացե՛ք: Դեռ երկու շիշ օղի ունենք, երկու տուփ ծխախոտ, իսկ լուսաբացին երկու ժամ է մնացել:

Արթուրը թողնում է Կալդիչերեքրիուսի օձիքը, նստում: Չայրույթից փնջացնում է՝ նայելով հյուրերին:

ԿԱԼԴԻՉԵՐԵՔՐԻՈՒՍ - *(նզկորված ուղղում է օձիքը):* Հա՛ էլի, թքած...

Հիմա մի ուրախ երգ միացնեմ, ու պարենք: *(Նորթուքով միացնում է ռետորո ռճի պարային երգ:)*

Հյուրերն ինքնամոռաց պարում են, գոռոռում, գրկախառնվում: Արթուրը մատած, զգվանքով նրանց է նայում:

Դռան թակոց: Արթուրը զարմացած նայում է դռանը, հյուրերը շարունակում են մոլեգին պարը:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Հյուրերը սեղանի շուրջ մատած են: Արթուրը գնում, բացում է դուռը:

Շեմին Կոնշենցիան է. երիտասարդ գեղեցիկ աղջիկ՝ գլխահակ ու ոտաբոբիկ, անխնամ մազերը իջնում են մինչև գոտկատեղ, սպիտակ գիշերազգեստով է, բոբիկ ոտքերը բաց են մինչև ծնկները: Դեմքին, ձեռքերին և ոտքերին թարմ վերքեր են, հազուստին՝ արյան հետքեր:

ԱՐԹՈՒՐ - *(խղճահարված):* Քույրիկ, քեզ ինչ է պատահել... *(Դռնից ետ է քաշվում:)* Ներս արի, կօգնեմ քեզ:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - *(ներս է գայիս, կանգնում, տխուր նայում է Արթուրին: Լացակումսած):* Ինձ ոչինչ չի կարող օգնել:

ԱՐԹՈՒՐ - *(սրտացավորեն բռնում է*

աղջկա ձեռքը): Գոնե թրջոց կդնեմ վերքերին:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Դա ինձ չի օգնի, մոռացիր: Եկել եմ, որովհետև պետք է գայի...

ԱՐԹՈՒՐ - Դու ո՞վ ես:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Ես Կոնշենցիան եմ: Նրանք այստեղ են, չէ:

ԱՐԹՈՒՐ - *(թողնելով աղջկա ձեռքը):* Նրանք... *(Նայում է հյուրերին:)*

Դու նրանց ճանաչում ես:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Լավ եմ ճանաչում:

ԱՐԹՈՒՐ - *(շփոթված):* Բայց... բայց... եկել ես...

ԿՈՆՇԵՆՑԻԱ - *(վճռակալան):* Պետք է գնամ նրանց մոտ:

ԱՐԹՈՒՐ - Նրանց մոտ: Էսպես... *(Նայում է աղջկան ոտքից գլուխ:)*

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Այո: Նրանք միշտ գիտեն, որ գալու եմ:

Արթուրը աղջկա ձեռքը բռնած սեռյակ է տանում: Հյուրերը անտեսում են Կոնշենցիային:

ԱՐԹՈՒՐ - *(շշուկով՝ աղջկան):* Իմ կողքին նստիր:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Չեմ կարող նրանց հետ նույն սեղանի շուրջ նստել: Պատի մոտ կնստեմ, իսկ դու քո տեղում նստիր, խնդրում եմ: *(Նստում է պատի մոտ՝ աթոռին:)*

ՆՈՇ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(Ինֆիրմիին):* Լցրո՛ւ բաժակները: Նորից հինգին համար. սա չի խմում, սա

միայն մեր համբերությունն է խմում: Ըհը՛, լուսաբացին երկար չի մնացել, բայց արդեն նստել է շնչներին: *(Աչքերի տակից կծու նայում է Կոնչենցիային:)*

Հյուրերը թունավոր հայացքներով խեթում են աղջկան:

ԱՐԹՈՒՐ - Ինչի՞ եք էդպես չարացած նրա վրա: Ձեզ վատ բան է արել:

ԻՆՖԻՐՄԻ - *(բաժակները լցնելով):* Հոգիներս է կերել:

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - *(Արթուրին):* Ամեն տեղ, ուր մենք ենք, հայտնվում է անկոչ հյուրի պես, մինչև որ չենք... *(Նշանակալից նայում է Ինֆիրմին:)*

ԻՆՖԻՐՄԻ - *(երկիմաստ ժպտում է Արթուրին):* Ինչ որ անում ենք նրա հետ, 18+ է, բայց դա արդեն էական չէ: *(Ձայնը բարձրացնում է:)* Խոսքս հռետորական կթվա, բայց հիմա մեր մեծավորի թույլտվությամբ են կպատասխանեմ քո հարցին, թեև քիչ էր մնում խեղճ եղբորս դեմքը ջարդելի: Ի՞նչ էիր ասում՝ պետք է ոչինչ չանել, չապրել, կամ էլ ինչի՞ են մարդիկ ծնվում... Հենց մեծ իմաստուններն են քո հարցին պատասխանել՝ ապրիր օրդ այնպես, կարծես այն վերջինն է, և կհասնես մեծագույն երջանկությանը: Հավատա, եթե դա իմաստուններ

ըր չասեին, առաջինը ես էի ասելու: Կյանքն այնքան սրիկա է, որ վաղվա օրդ կարող է չլինել: Անորոշության սուրն անդադար ճոճվում է մեր գլխի վրա: Ամեն վայրկյան վայելենք այն, ինչ մեր ձեռքերում է: Դա անհատի երջանկության պարզագույն մեթոդն է, իսկ մենք... բոլորս անհատներ ենք:

Բաժակները զրնգում են՝ իրար զարկվելով, ապա դատարկվում:

ԿՈՆՇԵՆՏԻԱ - *(հուզված):* Ապրիր օրդ այնպես, կարծես այն վերջինն է, և կհասնես մեծագույն երջանկությանը... Բայց ինչպես... ինչպես կարելի է ապրել այդ վերջին օրվա, վերջին րոպեի գիտակցումով, որն, ասում են, թե մարդու առավելագույն ներուժն է խորհրդանշում: Թող ինձ ներեն այդ խոսքերն ի գիտություն դարձրած իմաստունները, բայց միթե մարդը կարող է կամքի ուժ դրսևորել, եթե իր մեջ սպանել է վաղվա օրն ապրելու հույսը: *(Գլուխն առնելով ձեռքերի մեջ՝ հեկեկում է:)*

Արթուրը խոր կարեկցանքով նայում է Կոնչենցիային, մի սլահ փորձում է վեր կենալ առից, բայց... մնում է նստած: Հյուրերը հայացքներով խե-

քում են Կոնշենցիային և դժգոհ փնջացնում: Կոնշենցիան սակվում է:

ԱՐԹՈՒՐ - (զայրացած սեղմում է բռունցքը): Նա ճիշտ է ասում:

Հյուրերը գլուխները բացասաբար շարժում են: Կոնշենցիան խեղճ հացքով նայում է Արթուրին:

ԿԱԼԴԻՉԵՐԵՐԻՈՒՍ - (լցնում է բաժակները, իր բաժակը բարձրացնում է): Խմենք բոլոր հաճույքների ու վայելքների համար, որ մարդկային մտքի ամենավերին նվաճումներում են ապրում: Էլ ինչի՞ տքնել ու տառապել, եթե մարդը կարող է մտքով կառավարել աշխարհն ու բոլորին, ունենալ փառք և հարստություն, սիրել և տիրել ամենագեղեցիկ կանանց... Ամենագորը պահին է, որ կոտրում է ժամանակի կապանքները: Ամեն ինչ հեշտ է, երբ կախարդական պահը ձեռքերումդ է...

ԻՆՏԻՐՄԻ - (բաժակը ձեռքին է, սիրայիր): Համբուրում եմ լուսապսակ ճակատդ: (Բարձրանում, համբուրում է Կալդիչերերիուսի ճակատը, նստում:)

ԻՆԵՐՍ - (փռված է աթոռին բուրդեմքով: Բաժակը ձեռքին է: Ծուլորեն բարձրացնում է մյուս ձեռքը): Ես էլ եմ համբուրում:

(Օղային համբույր է ուղարկում Կալդիչերերիուսին:)

ՆՈՆ ՍՈՒԲԴԻՏՈՍ - (բաժակը հանդիսավոր վեր է բարձրացնում, մյուս ձեռքով քորում է մեծ քիթը):

Ապրել էնպես, ոնց ուզում ես, երբեք չենթարկվել աշխարհի տխմար կարգերին ու ռեժիմներին, որ տրորում են անհատականությունը: Պետք է թքած ունենալ և պետք է անհատ լինել, անհատ՝ սանոը, անտարբեր: Պետք է ուղեղին լսել, ոչ թե սրտին. այսր տիեզերքի հետ մեզ հենց մեր ուղեղն է կապում, և մարդն ապագայում հենց ուղեղով է նվաճելու տիեզերքը: Փանք Սիլվերաթոնին...

Բաժակները զարկվում են իրար, Արթուրը չի միանում նրանց: Հյուրերը դժգոհ նրան են նայում և կուլ տալիս օդին:

ԿՈՆՇԵՆՏԻԱ - (արտասովալից):

Սառն ու անտարբեր է այն, ինչն անշունչ է: Մարդն ապրում է, բաբախում է նրա սիրտը, հետևաբար նա չի կարող անսիրտ լինել: Նա չի կարող միայն ուղեղով և բանականությամբ ապրել, եթե նրա սիրտը չի ապրում: Ամենամարդկային արժանիքը խիղճն է, ոչ թե բանականությունը: Ձեր ասածը վերացական ու շինծու է, ինչպես ձեր այդ Սիլվերաթոնը, ո-

րին հորինել էք և կույր մոլագարությունը ծառայում էք նրան...
ԶՈՐՍ ՀՅՈՒՐ - *(կատաղի նայում են Կոնշենցիային, բռնակցիները սեղմում):* Լոկի: Էդքան ծեծվելուց չեն հոգնում, անամոթ, լիրբ... Քեզ նորից բռնաբարել է պետք... *(Հարձակվում են Կոնշենցիայի վրա, անողորմաբար հարվածներ հասցնում):*

Կոնշենցիան ճշում է, կծկվում, ձեռքերով բռնում գլուխը:

ԱՐԹՈՒՐ - *(վեր է թռչում տեղից):* Երան հանգիստ թողեք: *(Սեղանից վերցնում է մեծ դանակը, նետվում հյուրերի վրա:)*

Մենյակը տակնուվրա է լինում: Տուրուրբոց է, գոռոզոցներ, աղիողորմ լացի ձայն: Բեմը մի պահ մթնում է, խառնաշփոթ ձայները շարունակվում են, ապա լռություն: Բեմը լուսավորվում է:

Արթուրը կանգնած է՝ շվարած ու քարացած: Արյունոտ դանակը ձեռքից սահում է, ընկնում հատակին: Հյուրերը հերթով (նույն հերթակառույցում, ինչպես հյուր էին եկել) նվաղում են, անշնչացած ընկնում հատակին: Կոնշենցիան սարսափած նայում է շուրջը, հեծկլտում:

ԱՐԹՈՒՐ - Սպանեցի նրանց: Հաս-

կանում ես, սպանեցի նրանց... Տես, նայիր... *(Յույց տալով անշնչացած մարմինները:)* Երբեք մարդ չեմ սպանել... Կյանքս վերջնականապես կործանեցի... *(Գրկում է աղջկան, հեկեկում:)*

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Դու փրկեցիր ինձ...

Արթուրը թողնում է աղջկան, մի պահ նայելով դիակներին՝ խելագարի պես վազում է դեպի դուռը:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - Սպասիր, ո՛ր ես գնում... *(Վազում է տղայի ետևից:)*

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԳ

Աջից բնակարանի գլխավոր դուռն է, դեպի ձախ՝ միջանցքի վերելակը: Արթուրը դռնից դուրս է թռչում, կանչում վերելակը, սպասում է:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - *(լացող ձայնը՝ ներսից):* Սպասիր, սպասիր...

Աղջիկը դռնից դուրս է գալիս, վազում դեպի վերելակը: Վերելակի դռները բացվում են:

ԱՐԹՈՒՐ - *(աղերսանքով):* Մի՛ գա ինձ հետ, Կոնշենցիա՛, սիրելիս... *(Արագ մտնում է վերելակի մեջ: Դռները փակվում են:)*

Բեմը մթնում է:

ԿՈՆՇԵՆՑԻԱ - *(մթության միջից՝*

խույ լացող ձայնը): Ես միշտ քեզ հետ եմ, միշտ քեզ հետ եմ...

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Շենքի կիսամուտք բակ: Վաղ լուսաբաց: Լավում է ծղրիդների ձայնը: Արթուրն արագ և ինքնամոռաց քայլում է:

ԿՈՆՇԵՆՏԻԱ - (խույ լսվում է լացող ձայնը, որ արձագանքում է բեմում): Միշտ քեզ հետ եմ, միշտ քեզ հետ եմ...

ԱՐԹՈՒՐ - (լսելով ձայնը կտրուկ շրջվում է՝ ոչ ոք չկա): Պետք չէ, որ ոստիկանները նրան տեսնեն, նա մեղավոր չէ: Կգնամ ու կասեմ նրան, որ անմիջապես հեռանա իմ բնակարանից, դրանից հետո կհանձնվեմ ոստիկանությանը... (Վազելով վերադառնում է:)

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆՔԵՐՈՐԳ

Արթուրի բնակարանն է: Ամեն ինչ այնպես է, ինչպես տարօրինակ հյուրերի այցելությունից առաջ. չկա խառնաշփոթը, չկան դիակները, չկա Կոնշենցիան: Միայն սեղանն է սենյակի մեջտեղում, կողքին աթոռը, որին մատած էր Արթուրը: Մեղանի վրա մույն առարկաներն են, որ կանոնաչին տեսարանում:

ԱՐԹՈՒՐ - (սենյակ խուժելով): Կոնշենցիա՛, Կոնշենցիա՛... (Ապշահար նայում է շուրջը): Էս ինչ է... (Դանդաղ սթաիվում է:): Ամեն ինչ պարզ է: (Մոտենում է պատուհանին, սևեռվում դեպի դուրս: Կտրուկ շրջվում է, նայում շուրջը, մահճակալի վրայից վերցնում է հեռախոսը, ինչ-որ բան է գրում-փնտրում:): Ի՞նչ են նշանակում էդ անունները... լատինական անվանումներ են... Էսպես ուրեմն՝ Նոն Սուր-դի-տոս... անկարգ, Ին-ֆիր-մի... թույլ, թուլակամ, Ի-ներս... ծույլ, Կալ-դի-չե-րե-բրիուս... տաքցլուխ, Կոնշենցիա՛... խիղճ... խիղճ...

Հայացքը մի պահ հառում է վեր, հուզված է, քայքայ ժպտում է և հանգիստ, լիաթոք շնչում: Ջգեստապահարանից դուրս է բերում թոթեկապոցը, մայում է, քթի տակ ծիծաղում: Կապոցն այրում է կրակայրիչով, դնում մոխրամանի մեջ: Միառժամանակ հաղթական հայացքը սևեռում է պատուհանից դուրս, որտեղ երևում է քաղվող օրվա լույսը:

ԱՐԹՈՒՐ - Բայց ինչ ապուշն եմ...

Հունիս-հուլիս, 2020

Դրամատուրգիա

Էլեկտրոնային

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2020

Տպագրվում է պետական աջակցությամբ

Խմբագիր՝

Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝

Նատա ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:

Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝

Երևան, Օրբելի 18/6, հեռ. (010) 22-76-08

Գրանցման վկայական՝ 01Մ 000089